

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
АРМЕНОВЕДЕНИЕ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
ARMENIAN STUDIES

ՀՍՍՐԱՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 3 (18)

ԵՐԵՎԱՆ - 2015

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ ԱՐՄԵՆՈՎԵԴԵՆԻԵ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. ARMENIAN STUDIES»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Գալստյան Ս. Ա., Գոնչար Ն. Ա.
(*գլխ. խմբագրի տեղակալ*), Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտուղար*),
Հովհաննիսյան Պ. Հ., Մինասյան Է. Գ., Պետրոսյան Վ. Զ., Միմոնյան Ա. Հ.,
Քալանթարյան Ժ. Ա.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Галстян С. А., Гончар Н. А.** (*зам. главного редактора*), **Калантарян Ж. А., Минасян Э. Г., Овакимян А. Э.** (*ответ. секретарь*), **Оганисян П. А., Петросян В. З., Симонян А. Г.**

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), **Galstyan S. A., Gonchar N. A.** (*Deputy editor-in-chief*), **Hovakimyan A. E.** (*Executive Secretary*), **Hovhannisyan P. H., Kalantaryan Zh. A., Minasyan E. G., Petrosyan V. Z., Simonyan A. H.**

ԱՎԵՏԻՍ ԵՐԵՎԱՆՅԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ, ԹԵ՞ ՏՊԱԳՐԻՉ

ՀՐԱՉԻԿ ՄԻՐՉՈՅԱՆ

Թեև Ավետիս Դլիճենց Երևանցու անունը քաջածանոթ է հայ հնատիպ գրքի պատմության մասնագետներին, բայց պարզվում է, որ այդ ոլորտում նրա վաստակը ինչպես հարկն է չի լուսաբանվել ու գնահատվել, ուստի մինչև օրս նա ավանդույթի ուժով ներկայացվում է լոկ որպես վաճառական, որը սովորում է նրա տպագրական գործունեությունը: Օրինակ՝ հայ գրքի պատմության վաստակավոր մասնագետ Ռաֆայել Իշխանյանը, թեև շատ բարձր է գնահատում Ավետիսի բարոյական նկարագիրը¹ ու հայ տպագրության պատմության մեջ խաղացած դերը², նույնիսկ քանիցս գործածում «Ավետիսի տառեր»³ արտահայտությունը, բայց ոչ մի անգամ նրան տպագրիչ չի անվանում: Ավելին, Ռ. Իշխանյանի խմբագրությամբ հրատարակված՝ առայժմ լավագույնը համարվող հայ հնատիպ գրքի մատենագիտության անձնանունների ցանկում կարդում ենք. «Ավետիս Դլիճենց, Ոսկան Երևանցու եղբայրը, վաճառական»⁴, մինչդեռ՝ նույն Ոսկանի համար գրված է. «Ոսկան Երևանցի-տպագրիչ»⁵: Ինչպես տեսնում ենք, հարազատ եղբայրներից Ոսկանը իրավամբ ներկայանում է որպես տպագրիչ, իսկ Ավետիսը՝ ընդամենը իբրև վաճառական: Հարց է ծագում. ինչու է անտեսվել Ավետիսի տպագրական գործունեությունը: Իմ կարծիքով, այս դեպքում, ի թիվս այլ գործոնների, որոշակի դեր են խաղացել նաև ընտանեկան հանգամանքները: Բանն այն է, որ Ոսկան Երևանցին, լինելով ընտանիքի անդամների կազմակերպիչ (ունեցել է երեք եղբայր և մեկ քույր), շատ վաղ էր դրսևորել իր անհատականությունը և, ունենալով հոգևոր կրթության ընդգծված հակում, ծնողների կամքին հակառակ, ընտրել էր հոգևորական դառնալու ուղին, հաղթահարել բազում ու բազմապիսի դժվարություններ, անգամ ենթարկվել հալածանքների, բայց ի վերջո, հաղթանակով դուրս գալով այդ ամենից, արժանացել էր ամենայն

¹ Տե՛ս Ռաֆայել Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. 1, Եր., 2012, էջ 415:

² Տե՛ս նույն տեղը, էջ 421:

³ Նույն տեղում, էջ 424:

⁴ Նինել Ոսկանյան, Քնարիկ Կորկոտյան, Անթառամ Սավայան, Հայ գիրքը 1512-1800-թվականներին, Եր., 1988, էջ 804: Հայ հնատիպ գրքերի հիշատակարաններից մեջբերումները հիմնականում կատարելու ենք այս հրատարակությունից պահպանելով ուղղագրությունը:

⁵ Նույն տեղում, էջ 832:

հայոց կաթողիկոսներ Փիլիպոս Աղբակեցու և Հակոբ Ջուղայեցու գնահատանքին, ձեռնադրվել էպիսկոպոս և նշանակվել Ուշիի Ս. Սարգիս եկեղեցու վանահայր՝ դառնալով շրջապատի, առավել ևս հարագատների ու բարեկամների սիրելին: Մինչդեռ ընտանիքի չորրորդ զավակ Ավետիս Դլիճենց Երևանցին (Ջուղայեցին) իր հայրենակիցներից շատերի նման չէր ստացել ցանկալի կրթություն և ամենայն հավանականությամբ ծնողների հորդորով զբաղվել էր վտանգաշատ առևտրական գործունեությամբ ոչ թե մամոնայասիրությունից դրդված, այլ իր կրտսեր համաքաղաքացի, հոգևորականի խաչն ու ավետարանը վաճառականի համրիչով փոխարինած Ստեփանոս Դաշտեցու (Ջուղայեցու) բառերով ասած՝ հայի կյանքի դժնդակ պայմանների հետևանքով, քանզի «ոչ կարելով ի գործ արկանել զինուորութիւն, զնօտարութիւն կամ զայլ իմն ծառայութիւն ի դրունս արքունեաց», նաև չկարողանալով այլ կերպ «գտանել զինարս կեցութեան»: Դատելով տպագրական արվեստի հանդեպ նրա դրսևորած նվիրումից՝ վստահությամբ կարող ենք ասել, որ, իբրև վաճառական թափառելով երկրից երկիր, մշտապես երազել էր մշակութային գործունեությամբ զբաղվելու մասին: Այլապես ինչո՞վ բացատրել, որ ճակատագրի բերումով Ամստերդամում հանդիպելով պարտքերի մեջ խրված Մատթեոս Ծարեցուն՝ առանց վարանելու ընդունում է նրա առաջարկությունը, գոհաբերում ունեցած դրամական միջոցները՝ վաղուց երազած գործունեությամբ զբաղվելու վճռականությամբ: Ըստ այդմ՝ ընկերանում է Ծարեցու հետ «դրամով և այլ ազնութեամբ»՝ պայմանով, որ «աստուած ինչ որ վաստակ տա», իրենց միջև «կիսոյ լինի»: Բայց դեռ առաջին գրքի տպագրությունը չավարտած՝ տեղի է ունենում անսպասելին. 1661 թ. հունվարի 22-ի «լուսի գ շաբաթ գիշերն ժա ժամին» մահանում է Մատթեոս Ծարեցին: Դրանից հետո, անկեղծորեն խոստովանում է Ավետիսը, «ես իբրև որք մնացի ամենէրդամ վասն այն որ սրբագրող ոչ գոյր բայց միայն ես ի կարդացող որ չի խիստ հեմուտ ժամանակ մի տարեկուսեալ և պարապ մընացի ես և սահմանք և գործն և մըշակն ք ամիս ժամանակ անցաւ սկսան նաւերն գնալ ի դէմ արևելս ի քաղաքն զըմոնայ» (էջ 36-37): Կարծում եմ՝ մեծ երևակայություն պետք չէ կռահելու համար այդ վիճակում գործարար վաճառականի ունեցած հոգեկան ծանր ապրումներն ու հուսահատական տարակուսանքները: Ինչևէ, այդ վիճակից դուրս գալու այլ ելք չգտնելով՝ երկամսյա անգործությունից հետո Ավետիսը որոշում է անպայման ավարտել Ծարեցու կիսատ թողած *Յիսուս որդի* գրքի տպագրությունը, ուստի, շարունակում է նա, «անճարութեանն սկսաւ մընացեալ ժո տետրն տպագրեցի վախելով այսպէս սրբայգրեցի օրինակն երդի մի կողմ տպայգրածն մի կողմ մին կու նայի օրինակն մի ի տպայգրածն յորժամ որ սղալ լինէր կու մեկնի այտպէս սրբայգրեցի մընացեալ ժո տետրն ապայ ուսայ ըզսրբայգրելն որ դուրին էր թվին ոճծ

մարտ ամսին իե սուրբ աստուածածինն միջնորդ առնելով և բարեխօս ունիլ և յուս աստուած դընել սուրբն գրիգոր լուսաւորիչն բարեխօս ունիլ ամենայն սուրբքն տպայգրեցի ձերին սուրբ և մաքուր աղաւթիքն մայիս իե աւարտ եղև» (էջ 37): Այսպիսով, Ծարեցու մահից հետո Ավետիսը մինչև 1661 թ. մարտի 25-ը մատնվել է անգործության, որից հետո՝ մինչև մայիսի 27-ը ներառյալ, կարողացել է մի կերպ ծայր հասցնել *Յիսուս որդու* տպագրությունը: Ճիշտ է՝ շատ մեծ են եղել Ավետիսի կրած դժվարություններն ու կատարած դրամական գոհաբերությունը, բայց նա բնավ չի զոջացել այդ ամենի համար, այլ, ընդհակառակը, փառք է տալիս Աստծուն, որ «արժանի արար զիս այսմ բարուս»: Քաջ հասկանալով ձեռք բերած հարստության անգնահատելի արժեքը՝ իր կատարածի մեծությունը հասկացողի անթաքույց հպարտությամբ Ավետիսը հայտնում է մի շարք կարևոր մանրամասներ, բայց ամենից ուշագրավն այն է, որ գործարար վաճառականը երդվել է մինչև կյանքի վերջ զբաղվել տպագրական գործունեությամբ, մանավանդ որ մահացել էր իր «պրսակակիցն... մարիամ տատն», իսկ զավակներ ունենալու մասին ոչինչ չի ասում: Այս գործի վրա, ասում է Ավետիսը, աշխատանք ունի «թէ դէրամով թէ այլ օգնութեանն որչափ որ կարումս կէտ օգնեցի **յանձնել եմ և ուխտադիր եղեր ուր մինչև ի մահըս կարէս ինչ որ ելանէ ցայք և ցերեկ պիտի որ աշխատիմ** վասն սուրբ Էջմիածնուն և ատենահաս սուրբն զօրավար սարգիսին և որդոյն նորա մարտիրոսին որ ես պատճառ եղայ որ տպայգրութեանն ա հետսն որ մաթէոսըն սուրբ Էջմիածնուն վախմ արար թէ որ ես չի նա այնպէս կու մեռնէր չէ գիտէի թէ ով պիտէր տիրել ի վերայ քարխանին: **ո մառչիլ չոր պարտք կէր քարխանին դեռ եճ մառչիլ աժում չէր** ես յուսալով առ աստուած և ամենայն սուրբն յանձն առի որժամ մեռաւ **այլ պարտք յանտեցաւ** վասնէն զիս և ընտանիքն իմ ի յիշայտակարան գրեցի **դարձեալ սորայ յետ աստուածաշընչի գիր պիտի դուս գալ տիրացուն մեռաւ դեռ իս կամ կ գիր չէր փովել դեռ բճի գիր էլ պիտի փորվել ես եմ վարձ տալովս մինչև ի սուրբ խաչն դուս գուքայ թէ վարպետն չի մեռանիլ»** (էջ 37, այս և հետագա ընդգծ. իմն են - Ն. Մ.):

Պարզվում է, որ վերը թվարկված դրամական ծախսերը կատարելու համար Ավետիսն ստիպված է եղել դիմելու այլոց օգնությանը, ուստի, իր հարազատներից բացի, խնդրում է հիշել իր հոգևոր եղբայր «նորաբոյս վաճառական զերեվանցի. Սահմատինէնց Պողոսի որդի գրիգորն իմ յանձն առած պարտքն դորայ էր տալու վասն էն ի յիշատակարանն գրեցաք դորա անունըն» (էջ 37):

Ավարտելով Ծարեցու կիսատ թողած *Յիսուս որդի* գրքի տպագրությունը՝ Ավետիսը կարողանում է ինքնուրույնաբար սովորել գրաշարություն և, համոզվելով, որ դա այնքան էլ դժվար չէ, ավելի ճիշտ, ինչպես ինքն է ասում, «դուրին էր», ուստի ոգևորվելով իր հաջողություն-

նից՝ 1661 թ. միայնակ տպագրում է «Տետր ժամու եւ պարգատումարի» գիրքը: Յավոք, մեզ մատչելի է միայն սրա համառոտ հիշատակարանը (դժբախտաբար Հայաստանում չկա ոչ մի օրինակ), որը շատ կարևոր է գաղափար կազմելու համար, թե կարճագույն ժամանակահատվածում Ավետիսը որքան է առաջադիմել գրատպության ասպարեզում: Այն ունի հետևյալ բովանդակությունը. «Տպեցաւ ժամու և պարգատումարի տետրս ի թուին Հայոց ՌՃ և Ժ յերկրին հօլանտայ ի քաղաքն Ամսրթամ ձեռամբ անետսին ասարտեցաւ յօգոստոսի ե: Ի հայրապետութեան Տեառն Յակօբայ Սրբազան կաթողիկոսի լուսակառոյց սուրբ աթոռոյն Էջմիածնի: Ով եղբարք որք հանդիպիք սմա յիշեսջիք առ քրիստոս զնօտար մաթեոսն որ հանգուցեալ է և զկնի որոյ զնուաստ և զանարժան երեւանցի ղիժէնց անետիսն՝ զկրտսեր եղբայր ոսկան վարդապետին և ասասջիք տէր աստուած ողորմեաց նմա և ամենայն արեան մերձաւորացն նորա և: Աստուածն ամենայնի ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս ողորմեսցի առ հասարակ ի միւս անգամ գալստեանն իւրում ամէն» (էջ 38):

Կարծում եմ՝ դժվար չէ համոզվել, որ Ավետիս Երևանցին կարճ ժամանակում այնպես է առաջադիմել տպագրության արվեստում, որ գրեթե լիովին ազատվել է նախկին անվստահությունից, քանզի եթե նախորդ հիշատակարանում ընթերցողից խնդրում էր «ամէն սեղալիս թողութիւն անէք որ իմ կարբս այս էր ոչ կարեմ շարայդրել բան գրոյ» (էջ 37), ապա երկրորդ հիշատակարանում կարողանում է ազատորեն «շարայդրել բան գրոյ»: Բայց որքան էլ վաճառական Ավետիսը հմտացած լինէր տպագրության արվեստում, այնուամենայնիվ հասկանում էր, որ միայնակ անկարող է շարունակել տպագրական գործը, որովհետև դրա համար նախ և առաջ դրամ էր հարկավոր, որը, ինչպես արդեն տեսանք, այլևս չուներ. ծախսել էր կարելիից ավելին: Իբրև ելք ստեղծված վիճակից՝ գործարար վաճառականը հիշում է ավագ եղբայր, եպիսկոպոս Ոսկանին և նամակով խնդրում՝ գնալ Ամստերդամ և, ինչպես Ոսկանն է գրում իր ինքնակենսագրության մեջ, «յառաջեցուցանել գործարանն», այսինքն՝ համատեղել իրենց կարողությունները և միասին շարունակել գրատպության գործը: Չմոռանանք, որ Ավետիսը նախապես ուխտ էր արել՝ «մինչև ի մահըս կարէս ինչ որ ելանէ ցայք և ցերեկ» աշխատել հօգուտ Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի տպարանի: Այս տեսակետից ուշագրավ է Մ. Չամչանցի կարծիքը. պատմելով Մատթեոս Ծարեցու հետ Ավետիսի կնքած գործարքի և *Յիսուս որդի* գրքի տպագրության մասին՝ ասում է. «Եւ գրեաց վաղվաղակի յէջմիածին առ եղբայր իւր ոսկան վարդապետ՝ զալ անդր, և **յառաջեցուցանել ընդ իւր զգործ տպագրութեանն**. և ինքն ետ փորագրել և լրացուցանել զմիջական գիրսն, զոր սկսեալ էր մատթեոս սարկաւագ. և նովին տպագրեաց

Ժամագիրք յամի տեան. 1662. և թուին հայոց. ռճԺ»⁶:

Ստանալով Ավետիսի նամակ-հրավերը՝ Ոսկանն անմիջապես Ամստերդամ է ուղարկում իր աշակերտ Կարապետ Անդրիանացուն, որպեսզի մինչև իր Ամստերդամ հասնելն աջակցի Ավետիսին, իսկ ինքը, 1662 թ. սեպտեմբերի 27-ին մեկնելով Հայաստանից, մոտավորապես 2 ամիս հետո հասնում է Լիվոռնո և հանդիպում առևտրական գործերով Զմյուռնիա մեկնող Ավետիսին ու նրանից ստանում տպարանին վերաբերող համապատասխան փաստաթղթեր: Ասենք նաև, որ մինչև Ոսկանին հանդիպելը Ավետիսը Կարապետ Անդրիանացու հետ շարունակել էր իր տպագրական գործունեությունը: Նրանց համագործակցությամբ լույս ընծայված առաջին գիրքը լինում է Սաղմոսարանը (1661-1662 թթ.), որի հիշատակարանում Կարապետ Անդրիանացին անկեղծորեն խոստովանում է, որ անտեղյակ լինելով **«տպական արուեստիս եւ եւս բարբառոյ ազգացն հօլանդիզաց որպէս եւ նոքա մերոյս գրի եւ լեզուի»** (էջ 39), այնուամենայնիվ կարողացել է **«հոգաբարձութեամբ և ծախիւք... Դլճենց Աւետիսին Երևանեցոյ»**, ինչպես նաև նրա **«միջնորդութեամբ եւ օժանդակութեամբ»** ավարտին հասցնել Սաղմոսարանի տպագրությունը: Փաստորեն, Ավետիսը՝ որպես տպարանատեր, ոչ միայն հոգացել է խնդրո առարկա Սաղմոսարանի տպագրական ծախսերը, այլև իբրև հրատարակչական որոշակի փորձառություն ունեցող և հոլանդերենին տիրապետող անձնավորություն՝ ինքն է դեկավարել տպարանի գործունեությունը: Բանն այն է, գրում է Անդրիանացին, **«օգնէր միշտ ինձ. խօսելով ընդ նոսա. եւ ի սրբագրել փորձոյն. եւ ի բաղդատել պատկերացն: զի զոմանս ըստ վերնագրացն. եւ զոմանս միոյ տան. կամ շարադրութեան. եւ զայլսն ըստ ֆռանկաց օրինակացն եղինք»** (էջ 39):

Սաղմոսարանի ընդարձակ հիշատակարանում Կարապետ Անդրիանացին, ի թիվս այլ ուշագրավ տեղեկությունների, մանրամասն շարադրում է նաև Ավետիսի կողմից Ծարեցու տպարանը ձեռք բերելու պատմությունը՝ հայտնելով մի շարք նոր փաստեր: Հաշվի առնելով Ավետիսի մասին նրա հայտնած տեղեկությունների կարևորությունը՝ հարկ եմ համարում բերել այդ հատվածը ևս. «Եւ արդ՝ աղաչեմ զձեզ, - գրում է նա, - սիրովն Աստուծոյ յիշել ի Քրիստոս, **զբազմաջան երկամբք. եւ քրտնածոր աշխատութեամբ հոգաբարձուն եւ զմատակարարն տպարանիս. զՏէր Ոսկանի Բաբունեացպետի զեղբայրն, զթէոդորոսի որդի զերեւանցի դլիճենց աւետիսն: Որ եղև պատճառ յորդորելով զմաթէոս սարկաւագն. ընծայել զայս ազնուակերտ եւ ըղձալի տպագրարանս Սուրբ Էջմիածնի եւ Սուրբ սարգսի: Քանզի մաթէոսն ի հի-**

⁶ Միքայել Զամչեանց, Պատմութիւն հայոց, հ. գ., Եր., 1984, էջ 658-659: Ի դեպ, Ավետիսը «Տետր ժամու եւ պարգատօմարի» գիրքը տպագրել է ոչ թե 1662 թ., ինչպես նշում է Զամչեանցը, այլ 1661 թ.:

ւանդութեան իւրում, կոչեալ զվերոգրեալ աւետիսն եւ խնդրէր ի նմանէ. չ ե ժե մառչիլ փոխ. զի տայցէ պարտապանացն իւրոց. որք յոյժ վշտացուցեալ էին զնա: եւ տպենք ասէ բռ. սաղմոսարանս. եւ ո եւ մ Յիսուս որդիս. եւ վաճառեալ եւ զշահն նորա արասցուք բ բաժինս. ինձ եւ քեզ: Իսկ թէ մեռայց դու ի գործ արկեալ զտպարանն մինչեւ վճարեսցես զպարտսն իմ. եւ զքոյն եւս առցես հանդերձ շահիւքն. եւ տէր եղիցի ընդ քեզ: Եվ զայս ոչ էառ յանձն աւետիսն ասելով. եթէ տացես զտպարանդ յիշատակ սուրբ Էջմիածնին եւ սուրբ սարգսին. եւ տամ զփողս. **եւ եւս աշխատիմ անձամբս ի տպարանիս որքան եւ կենդանի իցեմ.** եւ զարդինս դրամին իմոյ բաշխեմ վերոգրեալ սրբոցն. եւ յետ մահուան իմոյ զբովանդակն: Որոյ հաւանեալ մաթեոսն. եւ յօժար սրտիւ արար կտակ՝ զի յետ մահուան իւրոյ՝ եւ վճարման պարտուց երկոցունցն՝ տացի տպագրատունն վերոգրեալ մենաստանիցն: Եւ ինքն չեւ եւս աւարտեալ զյիսուս որդիսն հանգեաւ ի քրիստոս: Չորոյ զթերին լցեալ աւետիսն. եւ սկսեալ բաղձանօք եւ փափագմամբ տպել ս եւ չ գեղապաճոյճ եւ գովելի սաղմոսարան, առ ի ընթերցումն Աստուածասիրաց. արանց եւ կանանց» (էջ 39):

Ինչպէս տեսնում ենք, Ավետիս Երևանցին՝ որպէս հեռատես ու խելացի գործարար, նաև՝ «զայր բարեպաշտօն և երկիրդած», սկզբից և եթ չի փորձել օգտվել Ծարեցու ծանր վիճակից, այլ դրսևորել է անշահախնդիր վարքագիծ և առաջարկել նրան տպարանը նվիրել Սուրբ Էջմիածնին, որի միաբանն էր Ծարեցին, և Ուշիի Սուրբ Սարգիս եկեղեցուն, որի վանահայրն իր ավագ եղբայր Ոսկանն էր: Այս իմաստով միանգամայն իրավացի է Ռ. Իշխանյանը, որ, անդրադառնալով Ծարեցու և Ավետիսի միջև կնքված գործարքին, Ավետիսի մասին հիացմունքով գրում է. «Պարզվում է, որ այս վաճառականը շատ տարբեր է իր եվրոպացի, նաև հայ ոչ քիչ գործընկերներից, և նրան ոչ թե դրամական շահն էր հետաքրքրում, այլ տպարանը պարտքատերերից որևէ կերպ փրկելն ու հայերեն գրքերի հրատարակության գործը կանոնավորելը»⁷:

Երբ Ծարեցին սիրով ընդունում է իրեն արված առաջարկությունը, Ավետիսը խոստանում է ոչ միայն վճարել տպարանի պարտքերը, այլև ողջ կյանքում աշխատել տպարանում և ստացված շահույթը նվիրաբերել այդ եկեղեցիներին, իսկ կյանքի վերջում՝ նաև տպարանը: Ուշագրավ է, որ Կարապետ Անդրիանացին ոչինչ չի ասում Ավետիսի տպագրած ժամագրքի մասին, բայց հայտնում է *Յիսուս որդի* և *Սաղմոսարան* գրքերի տպաքանակը, համապատասխանաբար՝ 1200 և 2700, Յիսուս որդի գրքի ողջ տպաքանակը փաթեթավորելու և նավով Զմյուռնիա ուղարկելու համար Ամասիացի Խուդաբաշխի որդի Մինասից փոխ վերցրած դրամի չափը և այլ մանրամասներ: Ըստ այդմ՝ պարզ-

⁷ Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 415:

վում է, որ չնայած ծագած դրամական լուրջ դժվարություններին՝ Ավետիսը կարողացել է առևտրականների միջավայրում ունեցած իր հեղինակությամբ հաղթահարել դրանք և ինքնուրույնաբար կամ Կարապետ Անդրիանացու հետ շարունակել տպագրական գործունեությունը: Եթե *Յիսուս որդի* գրքի 1200 օրինակը կազմելու և նավով Ջմյունիա առաքելու համար նրան որոշակի գումար էր փոխ տվել Ամասիացի Խուդաբաշխի որդի Մինասը, ապա *Սաղմոսարանի* տպագրության համար նրան մեծապես օգնել է Նոր Ջուղայեցի նշանավոր խոջա Շահրիմանը: Կարապետ Անդրիանացին նույն հիշատակարանում հայտնում է, որ «տարակուսեալ պաշարեաք վասն դրամի եւ բազումք ունէին կարողութիւն, բայց ոչ կարէին օգնել, թէ զգիրսն աւարտեաք, իսկ սա ձեռտու եղեւ եւ ետ մեզ. ո եւ էճ մառչիլ որով. աւարտեցինք. գրեւ եւ զէճ. սաղմոսարանսն» (էջ 40): Ոգևորվելով խոջա Շահրիմանի ցուցաբերած հիրավի գովելի վերաբերմունքից՝ հիշատակարանում խնդրվում է հիշել ոչ միայն «զջուղայեցի խօջայ շահրիմանն. եւ զկողակիցն իւր շահգատէն. եւ զորդին իւր խօջայ սահրատն եւ զկողակիցն իւր սալվարն. եւ զորդիսն իւր զգաքարիայն եւ զմարգարէն» և մյուս հարազատներին, այլև «զընկերն, իւր միրզենց յովհանն. եւ զհայրն իւր մնացականն եւ զմայրն իւր անային. զեղբայրն իւր մկրտումն հանդերձ ազգականովն իւրով» (էջ 40): Այո՛, խոջա Շահրիմանի դրսևորած բարյացակամության ու առատաձեռնության դիմաց խոսքաշատ են դարձել տպագրիչները՝ հարկ համարելով հիշատակել նաև խոջա Շահրիմանի ընկերոջ ու նրա հարազատների անունները, փաստ, որը խիստ հազվադեպ է պատահում հայ գրքի հիշատակարաններում:

Ավետիս Դլիճենցին պատկանող տպարանի չորրորդ արտադրանքը եղել է Կարապետ Անդրիանացու հեղինակած *Այբբենարանը* (1662 թ.), որը նախատեսված էր «ոչ վասն վաճառման», այլ ձրի բաշխելու համար դրա կարիքն զգացողներին: Ցավոք, գրքի անվանաթերթից չի հասկացվում, թե տպագրության գործին ինչպես է մասնակցել տպարանատեր Ավետիսը, բայց կասկածից վեր է, որ նա ունեցել է որոշակի մասնակցություն, քանզի անհնար է, որ նրան պատկանող տպարանում լույս տեսներ որևէ գիրք՝ այն էլ ձրի բաշխելու համար, առանց նրա գիտության ու համաձայնության:

Ավետիս Դլիճենցի տպարանի 5-րդ արգասիքը կոչվում է *Տաւազհիրք*, որի տպագրությունն սկսվել է 1662 թ. օգոստոսին (երբ Ավետիսը դեռ Ամստերդամում էր) և ավարտվել 1663 թ. փետրվարին⁸: Ընդ որում,

⁸ Հիմք ընդունելով *Տաւազգրքի* տպագրության ավարտման ժամկետը՝ Ռ. Իշխանյանը գրում է, որ սրա «տպագրությունից հետո Ավետիս Դլիճենցը մեկնում է Լիվոռնո, այստեղից էլ Ջմյունիա՝ առևտրական գործերով» (նշվ. աշխ., էջ 424): Ըստ այսմ, Ավետիսը Լիվոռնոյում Ոսկանին կարող էր հանդիպել 1663 թ. գարնանը, մինչդեռ երկու եղբայրների հանդիպումը կայացել է նախորդ թվականի վերջերին: Հետևաբար, Ավետիսը Ամստերդամից Լիվոռնո էր մեկնել *Տաւազգրքի* տպագրությունը դեռ չավարտած:

այն լույս է տեսել ժամանակի համար բավական մեծ տպաքանակով՝ 3000 օրինակ, ուստի հիշատակարանում գնահատված է որպես «դիրագին և ձեռնահաս և ամենեցուն ստանալի»: Առաջաբանում ասված է, որ տպագրվել է «գոյիք և արդեամբք և հոգացողութեամբ. ղլիճենց աւետսին Երևանցոյ՝ որ է վերակացու և թարգման տպարանիս: և մատակարարող և առաջնորդող ամենայն գործակալաց արուեստարանիս» (էջ 41): Ինչպես տեսնում ենք, Ավետիս Դլիճենցը՝ որպես տպարանատեր, ունեցել է նյութական, կազմակերպչական, թարգմանչական և ընդհանրապես հրատարակչական գործընթացը ղեկավարող դերակատարություն: Պարզապես զարմանալ կարելի է, որ այս ամենից հետո համառոտ հիշատակարանում Կարապետ Անդրիանացին թեև նշել է՝ «արդեամբք և սպասաւորութեամբ. երևանցի ղլիճենց Աւետսին», բայց թե ով է Երևանցի Դլիճենց Ավետիսը, հարցի պատասխանը ստանում ենք «Եղբոր Տեառն ոսկանի Բարունապետի երկրորդ թարգմանչին հայոց»⁹ (էջ 41) արտահայտությունից: Մեզ հետաքրքրող տեսանկյունից խիստ հատկանշական է, որ թեև Ոսկանը դեռ առժամանակ հետո էր հասնելու Ամստերդամ և զբաղվելու տպագրությամբ, բայց կրտսեր եղբոր տպարանում նրա իսկ հրատարակած գրքի հիշատակարանում արդեն հոչակվում է Բարունապետ ու երկրորդ թարգմանիչ հայոց (առաջին թարգմանիչ էր համարվում Մեսրոպ Մաշտոցը), իսկ կրտսեր եղբայրը այդ նույն գրքում ներկայացվում է լոկ որպես եղբայր «Տեառն ոսկանի»: Ինչպես դեռ կտեսնենք, Ավետիսն այդպես է բնութագրվում ոչ միայն Ոսկանի կենդանության ժամանակ, այլև մահվանից հետո, իսկ որ ամենից զարմանալին է, այդ բանաձևման հեղինակը հենց ինքը՝ Ավետիսն է, որը իր մասին տված առաջին իսկ տեղեկության մեջ ասում է. «Ես Երևանցի ղըլէջեցն ոսկան վարդապետի եղբար աւետիսս» (էջ 36): Ավետիս Երևանցու կենսագրությունից պարզվում է, որ վերը շարադրվածով չի սպառվում նրա տպագրական գործունեությունը, այլ 1662 թ. վերջերին Լիվոռնոյում Ոսկանին հանդիպելուց և տպարանը նրան հանձնելուց հետո մեկնել է Չմյոռնիա, բայց որոշ ժամանակ անց վերադարձել է Ամստերդամ և ավագ եղբոր հետ շարունակել հայ գրքի տպագրությունը:

Ոսկան Երևանցու կենսագրությունից հայտնի է, որ նա Ամստերդամ է հասել 1664 թ., և առաջին գիրքը, որի անվանաթերթին նշված է Ոսկանի անունը (Կարապետ Անդրիանացու անվան հետ միասին) որպես հրատարակիչ, 1664-1665 թթ. տպագրված Շարակնոցն է, որի հիշատակարանում Ավետիսի մասին Ոսկանը հայտնում է միայն, որ հանուն տպարանի հասնելով Լիվոռնո՝ այնտեղ հանդիպել է իր եղբայր Ա-

⁹ Դիտելի է, որ Ոսկանը «երկրորդ թարգմանիչ հայոց» է անվանվել ոչ թե տպագրական գործունեության համար, ինչպես կարծել է Ռ. Իշխանյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 465), այլ նախքան տպագրությամբ զբաղվելը:

վետիսին, «զի գնայր յիզմիւռնիայ. **վասն որոյ զտպարանն առի ի ձեռաց նորա ձեռագրով իւրով**» (էջ 43): Ավետիսը տպարանը ձևակերպել է Ոսկանի անունով, որովհետև առևտրական գործերով մեկնում էր Ջմյուռնիա, և իր բացակայության ընթացքում կարող էին տպարանի հետ կապված այնպիսի խնդիրներ ծագել, որոնք լուծելու համար պետք էր տպարանատիրոջ ներկայությունը: Ասենք նաև, որ Ավետիսի՝ Ջմյուռնիա մեկնելու նպատակների մեջ մտնում էր նաև իր տպագրական երախայրիքի՝ *Յիսուս որդու* վաղօրոք ուղարկած 1200 օրինակի վաճառքի հետ կապված հարցերի լուծումը: Ոսկանի հրատարակած երկրորդ գրքում, որ կոչվում էր *Այբբենարան և քրիստոնեական* և ունի շատ համառոտ հիշատակարան, Ավետիսի անունը չի հիշատակվում, իսկ ահա 1666 թ. փետրվարի 12-ին հրատարակված երրորդ գրքի, որ հեղինակել էր Ոսկանը և կոչվում էր **Քերականութիւն**, հիշատակարանում Ոսկանը խնդրում է հիշել նաև «**զեղբայրն իմ աւետիս. որ է ելև մուտ առնօղ և մատակարար մեր**» (էջ 44): Սա նշանակում է, որ Ավետիսն արդեն վերադարձել էր Ամստերդամ (հավանաբար նախորդ տարվա վերջերին) և գործուն մասնակցություն էր ունենում գրատպությանը: Նույնն ենք տեսնում նաև *Աստվածաշնչի* տպագրության ընթացքում, որն սկսվել էր 1666 թ. և ավարտվել 1668 թ.: Վերջինիս հիշատակարանում Ոսկանը խնդրում է իր հարազատներից հիշել Թորոս հորը, Գոհարագիզ մորը, հանգուցյալ եղբայր Հովհաննեսին, «որոյ ընչիւքն մտի ես ի գործս յայս», ինչպես նաև «**զմիւս եղբայրն իմ զաւետիսն որոյ գրովն սկսաւ գիրքս. և ինքն ևս աշխատեցաւ ժամանակս ինչ ի խահարարութեան և ի տուրևառութիւն գործոյս**» (էջ 50): Ավետիսի պատրաստած գրերով է տպագրվել նաև 1669 թ. հրատարակված՝ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» երկը, որի հիշատակարանում Ոսկանը խնդրում է հիշել տպարանում աշխատողներին, «**նա և զեղբայրն իմ զաւետիսն, որ պատճառե եղել այսորիկ գործարանի Էջմիածնի լինելոյն. մանաւանդ՝ զի զայս գիրս ինքն ընչիւք իւրովք է արարեալ՝ որոյ ներումն յանցանաց մաղթել և վարձս բարեաց ի Քրիստոսէ, ինքեան և ծնօղաց իւրոց հօրն Թորոսին. և մօրն Գոհարագիզին. և այլոց արենառուաց մերձաւորաց**» (էջ 60): Ուշագրավ է, որ Ոսկանը, նշելով Ավետիսի կողմից տպարանը ձեռք բերելու հանգամանքը, հատկապես արժևորում է գրերի պատրաստումը, որից այն տպավորությունն ենք ստանում, որ տպագրությամբ զբաղվելու համար, տպարանից բացի, շատ կարևոր էր նաև սեփական տառեր ունենալը:

1669 թ. Ամստերդամում տպագրված *Տոնացույցի* հիշատակարանում Ոսկանը խնդրում է հիշել իր հանգուցյալ ծնողներին, Հովհաննես եղբորը, Հռիփսիմե քրոջը «և զկենդանի զեղբայրն իմ զԱւետիսն, որ է առիթ գործարանիս», բայց ոչինչ չի ասում Միրզախան ամենակրտսեր եղբոր մասին:

Հանրահայտ է, որ տարբեր պատճառների հարկադրանքով 1669 թ. վերջերին Ոսկանը տպարանը տեղափոխել է նախ Լիվոռնո, այնուհետև՝ Մարսել: Այստեղ 1672 թ. հուլիսին տպագրել սկսած *Մաղմուսարանի* հիշատակարանում Ոսկանն իր եղբայր Ավետիսին համարում է «պատճառ և աշխատատեղ տպարանի»: Մա նշանակում է, որ Աստվածաշնչի տպագրությանը «ժամանակս ինչ» մասնակցելուց հետո շուրջ երեք տարի կամ գուցե փոքր-ինչ ավելի զբաղված լինելով առևտրական գործունեությամբ՝ հարմար ժամանակ գտնելուն պես Ավետիսը նորից մասնակից է դարձել իր իսկ ձեռք բերած տպարանի գործունեությանը: Օգտվելով պատեհ առիթից՝ կցանկանայի անդրադառնալ Ոսկանի կենսագրական մեկ փաստի, որը, իմ կարծիքով, ցավալիորեն վրիպել է հայ գրքի պատմության մասնագետների ուշադրությունից: 1668 թ. Ամստերդամում տպագրված Նոր Կտակարանի հիշատակարանում գրված է, որ այն լույս է տեսել «Երկասիրութեամբ նուաստ Ոսկանի Եպիսկոպոսի և բանի սպասաւորի երևանցոյ: **Ի տպարանի աշակերտին իմոյ կարապետի բանի սպասաւորի բայց իմովք գրովք: իսկ արդեամբ երկուցունցս**» (էջ 53): Մա նշանակում է, որ Ոսկանն առժամանակ ստիպված է եղել Ս. Էջմիածնի և Ս. Մարգսի տպարանը ձևակերպել իր աշակերտ Կարապետի անունով, բայց շարունակել է համագործակցել նրա հետ: Իրավամբ հարց է ծագում. իսկ ինչո՞ւ էր Ոսկանը դիմել նման քայլի: Այս հարցի պատասխանն ստանում ենք 1673 թ. Մարսելում¹⁰ «արդեամբք և ծախիւք... Ոսկանայ Արհի եպիսկոպոսի» տպագրված *Ճամագրքի* առաջաբանից, որտեղ Ոսկանն ասում է, որ կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին քանիցս իրեն հորդորել է անպայման տպագրել ատենի Մաղմուսարան՝ խոստանալով հոգալ տպագրական ծախսերը, բայց ոչ միայն չի կարողացել վճարել անհրաժեշտ գումարը, այլև հնարավորություն չի ունեցել խրախուսելու թեկուզ խոսքով «վասն վրդովմանցն որ անկաւ ի մէջ նոցին»¹¹. որոյ վրդովման վնասն և ինձ ժամանեաց՝ վասն այն ես կարի ստրկացայ վասն պարտուցն՝ **որք ի վերայ իմ բարդեցան, և բարդեալք կան սակս Աստուածաշնչոցն և այլոց գրոց. որք ավոռեցան ի մէջ Հայաստանեայց. որ և յուսահատեալ քանի մի տարի բարձիթողի արարի, վասն նեղութեան և վտանգին. որք հասին ի վե-**

¹⁰ Համաձայն մատենագիտական նորահայտ տվյալների՝ Մարսելում Ոսկանի հրատարակած առաջին գիրքը ոչ թե Նարեկացու «Մատենան ողբերգութեանն» է, ինչպես կարծել է Ռ. Իշխանյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 478), այլ 1672 թ. հուլիսի 25-ին տպագրել սկսած Մաղմուսարանը, որից հետո՝ 1673 թ. մարտին, ձեռնարկել են Պարզատոմարի, իսկ ապրիլին՝ Նարեկացու Մատյանի տպագրությունը:

¹¹ Նկատի ունի 1665-1672 թթ. Երուսաղեմի պատրիարք Եղիազար Այնափցու պառակտողական գործունեության դեմ Հակոբ Ջուղայեցու մղած 7-ամյա դժվարին պայքարը, որով կարողացավ դրամական վիթխարի ծախսերի գնով կասեցնել հայ եկեղեցու գրեթե իրականացած երկփեղկումը (մանրամասն տե՛ս **Հ. Միրզոյան**, Արդյո՞ք եղել են հակահակոբյան ժողովներ. տպագիր սկզբնաղբյուրների քննական վերլուծություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն». 138.1, 2012):

րայ իմ, և պատեցան զինն: Իսկ այժմ հայելով զի յուսահատութեամբ լքանիլն ոչինչ օգնէ. այլ **յաւէտ զվնասս հասուցանէ ինձ և ազգիս մերոյ»** (էջ 66), ուստի նորից անցել է գործի: Փաստորեն, *Աստվածաշնչի* և այլ գրքերի տպագրության պատճառով Ոսկանն այնքան մեծ պարտքերի տակ էր ընկել, որ կանգնել էր տպարանից զրկվելու վտանգի առջև, ուստի դրանից խուսափելու նպատակով տպարանը ժամանակավորապես ձևակերպել է Կարապետ Անդրիանացու անունով:

Վերը բերված խոսքերը գրելուց ամիսներ անց՝ 1674 թ. փետրվարի 4-ին, մահանում է Ոսկան Երևանցին, բայց տպարանը շարունակում է աշխատել նրա քեռորդի Սողոմոն Լևոնյանի ղեկավարությամբ: Վերջինս, նույն թվականին ավարտելով Ոսկանի կիսատ թողած Մաղմուսարանի տպագրությունը, «Ծանուցումն առ ընթերցողս» վերջաբանում խնդրում է հիշել ոչ միայն Ոսկանին, այլև «ի Քրիստոս հանգուցեալ զեղբարսս սորին. զյովանէսն: և զմիրգախանն: և զքոյր սոցին մայրն իմ զհոիփսիմէն: և կենդանի զեղբայր սոցին **զբարեպաշտ և զքրիստոսասէր պարոն աւետիսն պատճառն հաստատութեան գործարանիս»** (էջ 67): Սողոմոն Լևոնյանի այս համառոտ տեղեկությունը պարունակում է ժողովրդագրական հարուստ բովանդակություն. պարզվում է, որ Թորոս և Գոհարազիզ ամուսնական զույգի հինգ զավակներից 1674 թ. վերջերին ողջ էր մնացել միայն Ավետիսը: Իսկ եթե հաշվի առնենք, որ նրանց անդրանիկ զավակ Ոսկանը մահացել էր այդ նույն թվականի փետրվարի 4-ին՝ 60-ը դեռ նոր բոլորած (ծնվել էր 1614 թ. հունվարին), Հովհաննեսը 1662 թ. արդեն հիշատակվում է որպես մահացած, այսինքն՝ դեռ 50-ը չբոլորած, ապա ենթադրելի է, որ մոտավորապես նույն տարիքում են մահացել նաև Հոիփսիմե դուստրը և վերջին զավակ Միրգախանը: Դիտելի է և այն պարագան, որ Սողոմոնը միայն Ավետիսի համար է գործածում գնահատական բառեր՝ «զբարեպաշտ և զքրիստոսասէր պարոն աւետիսն պատճառն հաստատութեան գործարանիս»՝ ընդգծելով հայ գրքի տպագրության գործում նրա անուրանալի վաստակը: Ի դեպ՝ Ոսկանը ևս իր ինքնակենսագրության մեջ գրեթե նույն բառերով է բնութագրում Ավետիսին՝ «այր բարեպաշտ և երկիրդած», մինչդեռ Միրգախան եղբոր անունը, ինչպես ասել ենք, երբեք չի հիշատակում, իսկ Հովհաննես եղբոր մասին, որի դրամով էր Ոսկանը մտել «ի գործս այս», և շուրջ 10 տարի հետո նորից խոստովանում է, որ «ես նորայ ընչիւքն մտի յայս գործարանս. ահա այս տասն ամ է՝ զի դեռ նորայ դրամն ներ գործարանումս է» (էջ 64), համանման ոչ մի գնահատողական բառ չի գործածում: Սողոմոն Լևոնյանի՝ խնդրո առարկա վերջաբանը շատ հետաքրքիր տեղեկություններ է պարունակում ինչպես Ոսկանի ու հայ գրատպության պատմության, այնպես էլ հենց Սողոմոն Լևոնյանի մասին: Պարզվում է, որ Ոսկանի կուտակած պարտքերը դատարանի որոշմամբ դրվել են Լևոնյանի վրա՝ բնականաբար

գումարելով նաև դատական ծախսերը: Բանն այն է, գրում է Լևոնյանը, որ «հաւն իմ հեզահոգի. զկնի վախճանին իւրոյ. եթող վասն իմ զցաւս անբուժելիս. և զփորձութիւնս անելս: զբարդութիւն պարտուցն ասեմ աւելի քան զքսան հազար մառչիլաց. թէ աստ ի Մարսիլիայ. և թէ յամստերդամ և յայլ ուրեք: և զգումարումն պարտատիրացն: և զժողովումն ի մի վայր հնից և նորոց թշնամեաց և բնաւից նեղչաց ամենից կողմանց. զորս անկարելի է զամենայն ընդ գրովք արկանել. վասն զի ընդ մտանելն լուսաւոր հոգւոյն ի գերեզման, մատնեցայ ես տառապեալս յոգնատեսակ և զանազանից նեղութեանց. կրելով յարածամ ի ձեռանէ մերայնոց և յօտարաց. ի հայոց և ի ֆռանկաց. ի մերձաւորաց և ի հեռաւորաց. ի կերպարանեցեալ բարեկամաց. և յանձնախնդիի թշնամեաց. որք միանգամայն համարեին փշրել զվտիտ անձն իմ ժանեօք կամակորութեանց իւրեանց. և կենդանւոյն մուծանել զիս ի յերկիր» (էջ 67):

Որքան էլ ծանր է եղել Սողոմոնի վիճակը, այնուամենայնիվ տպարանը շարունակել է աշխատել և լույս աշխարհ բերել նորանոր գրքեր, որոնցից մի քանիսում հիշատակվում է Ավետիսի անունը: Այդ տեսակետից ուշագրավ է հատկապես 1676 թ. դեկտեմբերին սկսված և ամենայն հավանականությամբ 1677 թ. կամ գուցե 1678 թ. Մարսելում տպագրված *Մաշտոցը*, որի անվանաթերթին գրված է՝ **«Արդեամբ և գոյիք Աւետիսի և Սողոմոնի»**, իսկ հիշատակարանում խնդրվում է հիշել «զհոգևոր հայրն և զբազմաշխատ մշակն զոսկան արհի եպիսկոպոսն հանգուցեալ ի քրիստոս: և **զկենդանի եղբայրն նորին զաւետիսն**, և զքեռ որդի սոցին զսողոմոնն, **որ կայ մատնեցեալ բազմաց չարչարանաց ի մառչիլիայ սակս գործարանի սրբոյ աթոռոյն էջմիածնի ի պարծանս ազգի»** (էջ 77): Նախ ասենք, որ այս հիշատակարանը գրել է ոչ թե Սողոմոնը, այլ նրա բացակայությամբ գրքի տպագրությունն իրականացրած Մկրտիչ վարդապետ Ջուղայեցին, որը Սողոմոնի մասին ասում է, որ հանուն էջմիածնին պատկանող տպարանի՝ **«կայ մատնեցեալ բազմաց չարչարանաց ի մառչիլիայ»**: Դա նշանակում է, որ Սողոմոնն այդ ժամանակ չի զբաղվել տպագրությամբ, ուստի չի բացառվում, որ գտնվել է բանտում: Երկրորդ, հնարավոր ենք համարում այս գրքի տպագրությունը 1678 թվականին այն պատճառով, որ Սողոմոն Լևոնյանն իր գրած «Յառաջաբանութիւն մատենիս»-ում ամենասուր ձևով դատապարտելով Թադևոս Երևանցու (Ջուղայեցու) գործադրած հակառականյան խարդավանքները, որոնց պատճառով Ոսկանը «դառն մահուամբ բարձաւ ի կենաց աստի», միաժամանակ հայտնում է, որ «զկնի մահուան տեսոն իմոյ մատնեցայ ես տրուպս փոխանակ նորին ի ձեռն անօրէն գոգոսսին **ամս չորս կալով ի չարչարանս** պղծասէր լրբադիմին. գործելով միշտ ընդդէմ հայոց ազգին և սրբոյ աթոռոյն էջմիածնի և գործարանի նորին» (էջ 77): Արդ՝ եթե Ոսկանից հետո (ասացինք, որ մահացել է 1674 թ. փետրվարի 4-ին) Սողոմոնը չորս տարի ե-

դել է բանտարկված կամ պարզապես դատական քաշքշուկների մեջ, իսկ հիշատակարանում ասված էր, որ դեռ «**կայ մատնեցեալ բազմաց չարչարանաց ի մատչիլիայ**», ապա այստեղից հետևում է, որ խնդրո առարկա Մաշտոցն ամենաշուտը կարող էր լույս տեսնել 1678 թ. ձմռան վերջերին կամ գարնանամուտին¹²: Երրորդ, այդ ժամանակ Ավետիսը փաստորեն ողջ էր և աջակցում էր տպարանի գործունեությանը: Չորրորդ, առերևույթ հնարավոր է հակասություն տեսնել հիշատակարանի և առաջաբանի տեղեկությունների միջև, քանզի հիշատակարանում ասված է, որ Սողոմոնը դեռ չարչարանքների և քաշքշուկների մեջ է, իսկ առաջաբանում հայտնվում է, որ Սողոմոնն արդեն ազատ է արձակվել: Իրականում այդ հակասությունը թվացյալ է, որովհետև խնդրո առարկա գրքի մատենագիտական նկարագրությունից անառարկելիորեն հետևում է, որ առաջաբանը գրվել է ոչ թե սկզբնապես, ինչպես արվում է սովորաբար, այլ տպագրությունն ավարտելուց հետո: Այդ է պատճառը, որ առաջաբանի էջերը մնացել են չհամարակալված¹³: Այսինքն՝ Սողոմոնն այն գրել է դատական քաշքշուկից ազատվելուց հետո, երբ գիրքն արդեն շարված ու էջակալված է եղել: Բանն այն է, որ բողոքելով մինչ այդ կրած դժվարություններից, որոնց պատճառով չի կարողացել իրականացնել Հակոբ Ջուղայեցու ցանկությունը, հավելում է. «**Այլ այժմ սակաւ ինչ զոգի առեալ ի բաց եղաք զծանրաբեռնութիւն պարտուցն և զյարուցմունս ամենաչար չիրիցոյն. յուսալով յողորմութիւնս աստուծոյ և յաղօթս սրբոյ հօրն մերոյ տեառն Յակօբայ, և ի խնամարկութիւնս բարեսէր և աստուածապաշտ հաւատարիմ և բարեբարոյ ազգին հայոց: ձեռնարկաք առ ի տպել վայելչապէս ակնունելով բարեպէս կատարմանն. նախ զփոքր մաշտոցն և ապայ զկատարեալ բունն ըստ հրամանի հոգևոր տիրին**» (էջ 77): Ինչպես տեսնում ենք, Սողոմոնը բավական ոգևորված է, իր բառերով՝ «սակաւ ինչ զոգի առեալ», որովհետև կարողացել է ազատվել պարտքերի բեռից և ամենաչար երեցի հարուցած քաշքշուկներից՝ «**ի բաց եղաք զծանրաբեռնութիւն պարտուցն և զյարուցմունս ամենաչար չիրիցոյն**», նաև որ գտնվել են տպարանի գործունեությանն աջակցող հայրենակիցներ, ուստի խոստանում է փոքր Մաշտոցը տպագրելուց հետո վերջապես իրականացնել հոգևոր տիրոջ հրամանը և հրատարակել բուն Մաշտոցը:

Փաստորեն, 70-ական թվականների վերջերին Ավետիս Երևանցին

¹² Ռ. Իշխանյանը կարծում է, որ այն տպագրվել է «1679 կամ գուցե 1680 թ.»:

¹³ Տե՛ս **Նինել Ոսկանյան, Քնարիկ Կորկոտյան, Անթառամ Մավայան**, նշվ. աշխ., էջ 76: Օգտվելով պատեհ առիթից՝ հարկ եմ համարում նշել, որ հիրավի կողողային այս մատենագիտության մեջ նշմարվում են հայ գրքի տպագրության ժամանակագրական որոշ անճշտություններ: Ի մասնավորի ճշգրտման կարիք է զգում 1676 թ. Ս. Էջմիածնի և Ս. Մարգսի տպարանում հրատարակված գրքերի տպագրության ժամանակագրությունը՝ հիմք ընդունելով անվանաթերթին նշված ամսաթվերը: Ըստ այդմ, կունենանք ոչ թե № 98 հուլիս, № 99-դեկտեմբեր և № 100-հունիս, այլ՝ 98-հունիս, 99-հուլիս, 100-դեկտեմբեր ժամանակագրությունը:

դեռ ողջ էր և շարունակում էր աջակցել տպարանի գործունեությանը, այսինքն՝ գործուն մասնակցություն էր ունենում հայ գրքի տպագրությանը: Վերջին անգամ Ավետիսի անունը հիշատակվում է 1669 թ. հուլիսին Ամստերդամում Ոսկանի սկսած, բայց կիսակատար թողած *Շարակնոցում*, որը 80-ական թվականներին շարունակել ու ավարտել է Ոսկանի մոտ ծառայած և գրատպություն սովորած Պետրոս Ջուղայեցին: Վերջինս հիշատակարանում հայտնում է, որ Ոսկանի կիսատ թողածը ինքը շարունակել ու ավարտին է հասցրել «ի հայրապետութեան տեառն Եղիազարու ամենայն հայոց կաթողիկոսի»: Երախտագետ տպագրիչը ցանկանում է, որ Տիրամոր «նպաստութիւնն անսպառ լիցի բնաւից ընթերցողաց: Եւ մանաւանդ զվերոյգրեցեալ Ոսկան վարդապետն: Եւ զեղբայր նորին **աւետիսն: որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի**» (էջ 61): Քանի որ Եղիազար Այնթափցին կաթողիկոսել է 1682-1691 թթ., բնական է, որ այս հիշատակարանը գրվել է հենց այդ թվականներին, բայց թե որոշակիորեն ո՞ր թվականին, առայժմ դժվար է ճշգրիտ պատասխանել այս հարցին: Մեկ բան ստույգ է, սակայն, որ դեռ թարմ է եղել Ավետիսի մահվան հիշատակը, այլապես հազիվ թե Պետրոս Ջուղայեցին Ոսկանի հետ միասին հիշատակեր նաև Ավետիսի անունը և հատուկ շեշտեր, որ նրա «յիշատակն օրհնութեամբ եղիցի»: Չենք բացառում նաև, որ տարիներ շարունակ Ոսկանի մոտ աշխատած Պետրոսը, քաջածանոթ լինելով տպարանի ձեռքբերման պատմությանն ու գործունեությանը, ինչպես նաև Ավետիսի խաղացած դերին և գրատպության գործընթացին մշտական մասնակցությանը, դրանով իսկ անուղղակիորեն գնահատել է հայ գրատպության պատմության մեջ նրա ունեցած բացառիկ դերակատարությունը: Որ Ավետիս Դլիճենցը մահացել է 80-ական թվականների սկզբներին, ունենք նաև հայ գրատպության մեծ երախտավոր, երկար տարիներ Ոսկանին ու Սողոմոն Լևոնյանին անշահախնդրորեն աջակցած Մատթեոս Վանանդեցու անուղղակի վկայությունը. 1685 թ. Ամստերդամում հրատարակած *Շարակնոցի* հիշատակարանում համառոտակի պատմելով իր անցած ուղու մասին՝ ասում է, որ Հռոմից գալով Լիվոռնո՝ «առ ոտս աշակերտի տեառն ոսկանայ արհիեպիսկոպոսի տեառն կարապետի վարդապետի, և ուսայ ի նմանէ զարհեստ շարաբարդութեան, և **մնացի ընդ վեհին ոսկանայ արհի եպիսկոպոսի և քեռորոյ նորա սաղօմոնի ամս չորեքտասան և վարձուց կողմանէ ոչինչ ընկալայ... և զկնի փոխելոյն նոցա առ աստուած. և իմ տեսեալ զշարակրութիւն և զանաջողութիւն յամենայն կողմանց. վասն որոյ դիմեցի յերկիրն հօլանդիոյ ի վայելուչ քաղաքն յամստէլօղամ» (էջ 95-96): Ոսկանի տպարանի պատմությունից հայտնի է, որ այն Լիվոռնո է տեղափոխվել 1669 թ. կեսերին, և հոկտեմբերի 30-ին սկսվել է Ռոբերտոս Բելարմինոսի «**Վարդապետութիւն քրիստոնէական**» երկի տպագրությունը, որն ավարտվել է 1670 թ. հենց**

Կարապետ Անդրիանացու «սրբագրութեամբ»: Բնականաբար, եթե Մատթեոս Վանանդեցին ևս Լիվոռնո է եկել հենց 1669 թ. վերջերին և Ոսկանի ու Սողոմոնի մոտ աշխատել 14 տարի, ապա դա նշանակում է, որ նա Մարսելում մնացել է մինչև 1683 թ.: Իսկ քանի որ այդ ժամանակ, ինչպես ինքն է ասում, մահացել էր նաև Սողոմոնը, և տպարանը գտնվում էր անհուսալի վիճակում, նշանակում է՝ այլևս չկար նաև բուն տպարանատերը՝ Ավետիս Դլիճենց Երևանցին:

Կարծում եմ՝ վերը շարադրվածը լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ հայ գրատպության պատմության մեջ հայ վաճառական Ավետիս Դլիճենց Երևանցին խաղացել է բացառիկ դեր ոչ միայն այն պատճառով, որ զոհաբերելով դրամական մեծ միջոցներ՝ կարողացել է փրկագնել Մատթեոս Ծարեցու կյանքի գնով ստեղծված տպարանը, անվանակոչել այն Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի ու նվիրել իր եղբայր Ոսկանին, այլև առժամանակ անձամբ աշխատեցրել է այն, տպագրել հինգ գիրք, իսկ այնուհետև մինչև կյանքի վերջը ամենատարբեր ձևերով գործուն մասնակցություն ունեցել տպարանի աշխատանքներին: Հենց միայն այն փաստը, որ այսօր հայ գրքի մատենագիտության մեջ գործածվում է «Ավետիսի տառեր» հասկացությունը, ինքնին վկայում է այդ մարգում նրա անուրանալի վաստակի մասին: Թե որքան անարդարացի է այս ամենից հետո հայ գրքի պատմության մեջ Ավետիսին միայն որպես վաճառական ներկայացնելը, բերեմ ընդամենը երկու փոքրիկ փաստ: 1. 1661 թ. մի կերպ ավարտին հասցնելով Ծարեցու կիսատ թողած *Յիսուս որդի* գրքի տպագրությունը՝ Ավետիսը, իբրև բարեխիղճ և երախտագետ անձնավորություն, հիշատակարանում խնդրել է հիշել սկսնակ վաճառական Գրիգոր Երևանցուն, քանզի Ծարեցու տպարանի փրկագնման «իմ յանձն առած պարտքն դորա էր տալու»: Ընդամենը այսքանը, և ուրիշ ոչինչ, բայց թե՛ Ավետիս Երևանցու և թե՛ Գրիգոր Երևանցու անվան դիմաց հայ հնատիպ գրքի մատենագիտության անձնանունների ցանկում կարդում ենք միայն «վաճառական»: 2. Թեև Ոսկան Երևանցու պապի (Ջաքարիա), տատի (Մելիք խաթուն) և կրտսեր եղբոր (Միրզախան) անունները հիշատակել է միայն Ավետիսը, իսկ Ոսկանը՝ երբեք, բայց նույն մատենագիտության անձնանունների ցանկում նրանք ներկայացված են որպես Ոսկան Երևանցու պապ, տատ և եղբայր: Կարծում եմ՝ ակնհայտ է անարդար վերաբերմունքը...

Հետևաբար գտնում եմ, որ այսուհետ Ավետիս Դլիճենց Երևանցին հայ գրքի պատմության մեջ պետք է ծանուցվի ոչ թե լոկ որպես «վաճառական», այլ առնվազն որպես «վաճառական-տպագրիչ», քանզի եթե չլիներ նա, հազիվ թե Ոսկանը կարողանար հայ գրքի տպագրության գործում ունենալ այն վիթխարի դերակատարությունը, որի համար միչև օրս գնահատվում է որպես հայ մշակույթի մեծագույն երախտավորներից մեկը: Այո՛, շա՛տ ճիշտ է ասված. «Աստծունը՝ Աստծուն, Կեսարինը՝ Կեսարին»:

Բանալի բառեր – գիրք, գրատպություն, հայ հնատիպ գիրք, տպարան, տպագրիչ, վաճառական, վաճառական-տպագրիչ

ГРАЧИК МИРЗОЯН – *Аветис Ереванци – купец или печатник?* – Подвергнув критическому анализу сохранившиеся в колофонах старопечатных армянских книг сведения о младшем брате Воскана Ереванци, купце Аветисе, автор на неопровержимых фактах показывает, что тот сыграл заметную роль в истории армянского книгопечатания: не только выкупил типографию Маттеоса Цареци в Амстердаме и подарил её Воскану, но и сам, занявшись печатным делом, издал пять книг.

Аветис и далее до конца жизни принимал деятельное участие в работе купленной им типографии. Учитывая всё это, автор предлагает отныне в исследованиях по истории армянской книги представлять Аветиса не купцом, как это делалось до сих пор, а по меньшей мере «купцом-печатником».

Ключевые слова: книга, книгопечатание, старопечатная армянская книга, типография, печатник, купец, купец-печатник

HRACHIK MIRZOYAN – *Avedis Yerevantsi, a Merchant or a Printer?* – Analyzing the information about the younger brother of Voskan Yerevantsi preserved in the literary monuments of the early printed book, the author shows irrefutable facts about the vital role he had played in the history of Armenian typography not only by redeeming the printing house of Mattheos Tsaretsi and donating it to Voskan, but also by personally being engaged in the printing business, he had published five books and then, till the end of his life, had an active participation in the work of the printing house he had bought himself. Taking this into consideration, the author of the article offers to present Avedis not merely as a merchant as it has so far been done, but at least as a “merchant-publisher” in the studies devoted to the history of the Armenian book.

Key words: book, typography, early Armenian printed book, printing house, publisher, merchant, merchant-publisher

ЛАЗАРЕВСКИЙ ИНСТИТУТ ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВ – ЦЕНТР АРМЕНОВЕДЕНИЯ В РОССИИ

СЕРГЕЙ САЯДОВ

Возникновение центра армянского просвещения

В первой четверти XIX века в Москве возник крупный очаг армянского просвещения – Лазаревский институт восточных языков (ЛИВЯ), сыгравший важную роль в развитии русско-армянских отношений, в становлении отечественной ориенталистики.

Представители крупного торгово-промышленного капитала, Лазаревы подчиняли всю свою деятельность национальному возрождению. Известные меценаты, они заботились о сохранении и развитии армянской культуры, когда «задались целью подготовить кадры образованных граждан не только для многочисленных армянских общин России, но и для будущей свободной Армении»¹.

Государственный и общественный деятель, Иван Лазаревич Лазарев, наиболее известный из представителей этого рода, давно вынашивал идею создать учебное заведение и завещал крупные средства для его основания. Решение задач, стоящих перед армянским просвещением, должно было, как считал он, активно повлиять на развитие национальной экономики и культуры.

В духовном завещании, написанном за год до смерти, И. Л. Лазарев обязал своего наследника, младшего брата Екима, внести в Опекунский совет 200 000 рублей. Из основного капитала и процентов с него должна была сложиться сумма, достаточная, дабы «...соорудить со временем приличное здание для воспитания и обучения бедных детей из армянской нации». Еким Лазаревич с семейством добавил к пожертвованиям брата 300 000 рублей ассигнациями, в том числе 50 000 в память о сыне, ротмистре лейб-гвардии гусарского полка Артемии Екимовиче, павшем в 1813 г. в сражении под Лейпцигом.

Сразу после Отечественной войны Е. Л. Лазарев начал строительство учебного заведения. «Это важное дело, полезное и национальное, – писал он сыновьям. – <...> Весь мир глядит на нас. Может быть, начав дело, понеся затраты, мы не сможем завершить его и среди народов и наций, своих и чужих, опозоримся»². Однако это начинание ожидало блестящее будущее. Благодаря трудам Екима Лазарева в 1815 г. открылось учебное заведение на 30 воспитанников из армян.

¹ **Ананян Ж. А.** Лазаревский институт восточных языков в первой половине XIX века // «Историко-филологический журнал» (Ереван), 1998, № 1-2, с. 63.

² Цит. по: **Վ. Ա. Գիրյան**, Լազարյանների հասարակական քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես), Եր., 1966, էջ 261:

В 1818 г. Еким Лазаревич передал своё детище на попечение сыновей Ивана и Христофора, которые не жалели ни средств, ни трудов, чтобы держать фамильное учреждение на высоте современных педагогических требований. Их усилиями новое московское училище стало популярным не только среди армян.

Лазаревы полагали, что учебное заведение в Армянском переулке поможет «установить тесное духовное и политическое соединение обитателей Кавказа с прочими странами России», а также были уверены, что с упрочнением его положения будет возможно «доставить юношеству средства к воспитанию и образованию в науках, служащих приготовлением к государственной службе, военной и гражданской, и к поступлению в университет, академию»³.

Правительство оказывало содействие Лазаревскому училищу, которое не только способствовало распространению просвещения среди армян, но и было школой восточных языков, готовило молодых людей для дипломатической службы и торговых сношений с Азией и при этом не брало у казны ни копейки на свое содержание.

В 1827 году, накануне присоединения Восточной Армении к России, частное училище Лазаревых перешло в ведение министерства народного просвещения и получило название «Лазаревский институт восточных языков». В 1828 году для него была учреждена должность «главноначальствующего», которую занял граф А. Х. Бенкендорф. Его покровительство способствовало дальнейшему развитию института.

В 1835 г. Лазаревский институт особым указом включается в число правительственных учебных заведений и получает все права казенных гимназий. В 1837-м институт получил преимущества правительственных заведений 2-го разряда. В 1841-м по ходатайству армянского католика при институте открылось духовное отделение: для тех, кто готовил себя к духовному поприщу в Армянской церкви, стали читаться лекции по богословию и церковной истории. В 1839 г. институт приравнивали к таким учебным заведениям, как Академия художеств, Московский дворянский институт, Петербургский горный институт, а в 1848-м институт получил права высшего учебного заведения. К этому времени слава Лазаревского института распространилась и в России, и за её пределами.

В институте была своя типография, где на средства Лазаревых издавались общеобразовательные учебники и книги на армянском и русском языках; они рассылались в Московскую публичную библиотеку, школы, училища в армянских поселениях России. Армянским учебным заведениям оказывалась помощь не только учебниками, но и финансовыми средствами и преподавателями. Так, ряд уроженцев Нахичевани-на-Дону – выпускники Лазаревского института преподавали в приходском училище и пансионе родного города⁴.

³ Цит. по: **Калишевский М.** Лазаревский институт – первое специализированное дипломатическое училище // <http://www.mgimo.ru/study/dean/docs/6420/6624/document145668.phtml>

⁴ См. «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа». Ч. III, М., 1838, с. 15.

Издательская деятельность Лазаревых началась покупкой типографии И. Иоаннесова, которую в 1829 г. перевезли из Петербурга в Москву и разместили в институте. Годы спустя из Парижа и Лондона доставили высококачественное типографское оборудование: шрифты на европейских и восточных языках, скоропечатные машины и матрицы. Монографии, учебники, буклеты и брошюры по разным отраслям знания печатались на тринадцати языках. Лазаревская типография в 1830-е годы считалась одной из лучших в Москве. Наряду с трудами классиков армянской истории и литературы она печатала сочинения В. Жуковского, А. Пушкина, М. Лермонтова, Е. Баратынского, Ф. Достоевского, переводы произведений европейских ученых и писателей.

В типографии института восточных языков были изданы: «Грамматика книжно-армянского языка» (1827), «Музы Араратские. Собрание сочинений в стихах и прозе воспитанников института» (1829), «Учебник христианского вероучения, по началам апостольско-грегорианской церкви» (1831). В 1838 г. увидел свет первый полный «Армяно-русский словарь» А. М. Худобашева, выпускника института. Словарь был издан по высочайшему повелению, и автор начинает свой труд с обращения к Николаю I, в котором отмечает настоятельную необходимость изучения армянского языка в России. «От точного уразумения сего языка, – пишет он, – будут зависеть многочисленные отношения, на коих должно довершиться их счастье и упрочиться неразрывная связь между великодушною Россиею и всегда признательною к ней Арменией»⁵.

Лазаревский институт сыграл важную роль в истории русского востоковедения. Ованес и Хачатур Овакимовичи Лазаревы являлись членами Парижского Азиатского общества словесности и древностей. Обладая разносторонними знаниями, в том числе в области истории восточных народов и государств, Лазаревы вели оживленную переписку с различными учебными и научными заведениями в Париже, Вене, Венеции, Константинополе и др. Они имели своих корреспондентов в странах Европы, Ближнего и Среднего Востока и из первых рук получали необходимые материалы по ориенталистике⁶.

Характеризуя научно-образовательную деятельность института, Ж. А. Ананян указал четыре основные задачи, которые он решал: готовил высококвалифицированных учителей для армянских школ России и Закавказья, сделал учебное заведение одновременно центром изучения восточных языков, способствовал сближению двух национальных культур, русской и армянской, выступал очагом армянского просвещения⁷. Добавим, что со временем Лазаревский институт становится и центром русской арменистики. Это было связано с тем, что в институте впервые в России была создана серьёзная база для научных исследований по армянской филологии и

⁵ Цит. по: Григорьян Н. А. Центр отечественной ориенталистики // «Вестник РАН». 2001. Т. 71, № 12, с. 1100-1106 // http://babon.sitcity.ru/ltxt_0903104639.phtml?p_ident=ltxt_0903104639.p_2007153803

⁶ См. Ананян Ж. А. Указ. соч., с. 71.

⁷ См. там же, с. 73.

истории. Институт не только знакомил армян с русской культурой, но и способствовал распространению сведений об истории и культуре армянского народа, его многовековой национально-освободительной борьбе⁸. Одно только наличие Лазаревского института обеспечивало «не только знакомство представителей армянской общественности с трудами русских историков, но и их научное изучение»⁹.

В 1832-1833 гг. в институте были подготовлены и изданы два тома книги С. Н. Глинки «Обозрение истории армянского народа от начала бытия до возрождения области Армянской в Российской империи», а в 1833-1838 гг. – «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» в трех томах.

Обстоятельства работы С. Н. Глинки и Лазаревых над этими произведениями являются предметом нашего исследования, поскольку, на наш взгляд, эти вопросы ещё недостаточно освещены в исторической литературе.

История зарождения проекта армянской истории

Анализируя исторические исследования дореволюционного, советского и современного периодов, мемуары о жизни и творчестве С. Н. Глинки, мы обратили внимание на то, что почти нигде не упоминаются его работы по истории Армении, не объясняются обстоятельства, обусловившие его обращение к арменистике. Некоторый материал на эту тему можно найти в работах С. Г. Арешян, Л. М. Мкртчяна, К. Н. Григорьяна, Р. Г. Хачатряна, Э. А. Акопяна¹⁰.

В литературе по истории ориенталистики в России, в частности в сюжетах, посвященных ЛИВЯ¹¹, мы не нашли свидетельств, рассказывающих о подготовке и издании в типографии института вышеупомянутых сочинений С. Н. Глинки. Если они и упоминаются, то отдельно друг от друга, не рассматриваются как единый комплексный труд по истории Армении, который являлся результатом творческого сотрудничества русского писателя и видных представителей армянского национально-освободительного движения.

⁸ См. **Ванян Л. В.** Роль семьи Лазаревых в развитии русско-армянских отношений // «Армяне юга России: история, культура, общее будущее». Материалы Всероссийской научной конференции (30 мая – 2 июня 2012 г., Ростов-на-Дону). Ростов-на-Дону, 2012, с. 331.

⁹ **Хачатрян Р. Г.** Русская историческая мысль и Армения (XVII – начало XIX вв.). Ер., 1987, с. 348–349.

¹⁰ См. **Арешян С. Г.** Из предыстории арменоведения в России // «Երևանի համալսարանի հայագիտական թանգարանի», 1955, № 1, с. 3-12; **Мкртчян Л.** Армянская поэзия и русские поэты XIX – XX вв. Ер., 1968, с. 12; **Григорьян К. Н.** Из истории русско-армянских литературных и культурных отношений (X – нач. XX в.). Ер., 1974, с. 175-176; **Хачатрян Р. Г.** Указ. соч., с. 329, 335, 340, 350; **Акопян Э. А.** Арменоведение в России. Ер., 1988, с. 71-81.

¹¹ См. **Зиновьева А. В.** Очерк Лазаревского Института с биографией учредителей института. М., 1863; «Очерк 50-летней деятельности Лазаревского института восточных языков, в связи с краткою историей водворения армян в России». М., 1865; 75-летие Лазаревского института восточных языков (Исторический очерк с приложениями). М., 1891; **Дилоян В. А.** Хозяйственная, политическая и культурная деятельность Лазаревых в России во второй половине XVIII века; История отечественного востоковедения с середины XIX века до 1917 года. М., 1997 и др.

В литературе, содержащей разнообразные сведения по истории рода Лазаревых, которые касаются их государственной, культурно-просветительской, хозяйственной деятельности, их вклада в укрепление русско-армянских отношений, ничего не говорится о руководстве Христофора и Ивана Лазаревых подготовкой и осуществлением публикаций по истории армянского народа.

Логика исследования предопределила необходимость обращения к архивным документам, касающимся Лазаревых, Глинки и их сотрудничества. Нас интересовало, как возникла концепция публикации книг по истории Армении, какова роль Лазаревых и Глинки в её осуществлении, как происходила работа: её этапы, проблемы, состав участников и т.д.

Изучение истории и культуры армянского народа в России восходит к XVIII веку, когда начался систематический сбор материалов, которые в основном касались армянского населения, проживающего на территории империи. С начала XIX века в связи с политико-экономическим освоением Закавказья интерес к истории армянского народа заметно усилился.

Идея Х. Е. и И. Е. Лазаревых о необходимости новой книги по истории Армении могла возникнуть в результате присоединения Восточной Армении к России, накануне и в ходе которого обсуждались вопросы о форме государственного устройства, роли церкви, исторических традициях армянского народа. По-видимому, во время работы над проектом управления Армянской областью у Х. Е. Лазарева и возникает замысел дать целостную картину армянской истории, религии, государственности. В Армянской области требовалось наладить такое управление, которое позволило бы «наилучше воспользоваться духом Армянского народа». Об этом указывал Х. Е. Лазарев в «Записке о мерах по водворению гражданского и церковного порядка в Армении», направленной им в 1828 г. Николаю I¹². Этот документ был призван помочь новой администрации Армянской области правильно соотнести интересы Российского государства с интересами местного населения. Для обоснования своих мыслей автор «Записки» обращается к армянской истории, в том числе к истории зарождения христианства в Армении. Предполагаемые сочинения по истории Армении должны были на основе широкого круга источников всесторонне развернуть, оформить и обосновать мысли Лазарева о необходимости возрождения «некогда самостоятельной древней Армении» к пользе империи.

Когда Восточная Армения вошла в состав России, возникла потребность в новом взгляде на ее историю. Лазаревы полагали, что теперь Армению, её народ, культуру, историю, в том числе историю русско-армянских отношений, следовало представить российской общественности в более полном виде и довести повествование до «возрождения области армянской в Российской империи». При этом было желательно увидеть армянскую историю глазами русского писателя, известного широкой публике и сочетающего консервативно-патриотическое мировоззрение с сочувствием к народам, борющимся за своё национальное освобождение. Такой труд не только познакомил бы

¹² Записка Х. Е. Лазарева Николаю I, апрель 1828. РГАДА, ф. 1252, оп. 1, д. 530.

русского читателя с единоверным дружественным народом, но и внёс бы позитивный вклад в укрепление русско-армянских отношений.

Для претворения в жизнь замысла Лазаревых требовался автор, способный на основе многочисленных источников изложить материал для массового читателя, не столько исследователь, сколько талантливый популяризатор. Выбор пал на Сергея Глинку – писателя, который умел находить нужное слово для самой разной аудитории, о чём, в частности, свидетельствовала его активная журналистская и пропагандистская деятельность в 1812 году. Кроме того, его сочинения по истории и культуре разных стран и народов получили одобрительные отзывы современников¹³.

*Общая картина работы С. Н. Глинки, Х. Е. и И. Е. Лазаревых, сотрудников
Лазаревского института над армянской историей*

Собранные нами архивные материалы свидетельствуют, что под руководством Лазаревых одновременно подготавливалось к изданию оригинальное сочинение Глинки «Обозрение истории» и собрание документов, дополняющее его. Некоторые из предоставленных Лазаревыми материалов по древней и новой истории Армении использовались Глинкой для написания «Обозрения истории», также эти и другие материалы обрабатывались и распределялись по тематическим группам в соответствующие отделы «Собрания актов». Кроме Глинки в этой работе принимали, в частности, участие: И. Ф. Краузе¹⁴, профессор Казанского университета и преподаватель французского и немецкого языков ЛИВЯ, И. И. Давыдов, профессор русской словесности, историк А. М. Худобашев¹⁵, священник Н. И. Архангельский.

Рассматривая творческую лабораторию создания книг по истории армянского народа, выделим, в частности, следующие аспекты: поиск заглавия книг, их структура, основные темы, круг источников, состав авторов, распределение обязанностей, цензурное рассмотрение книг.

Выявленный нами архивный документ, автором которого предположительно являлся Х. Е. Лазарев, раскрывает общую структуру и внутреннее единство этого труда: «Заглавие может быть книги г. Глинки 1 и 2-й части: “Обозрение Истории древнего Армянского Царства, от начала существования народа Армянского до возрождения области Армянской в России”. 3-й и 4-й части: “Собрание Актов, относящихся к Обозрению Истории Армянского народа”. Другая особенная впрямь церковная книга; заглавие может быть: “Историческое, Догматическое и таинственное изложение исповедания Христианския веры Православныя Католическия Восточныя Армянския Церкви”»¹⁶.

¹³ См. **Саядов С. М.** Глинка С. Н. От русской истории к истории армянского народа. Ер., 2006, с. 64-65, 71.

¹⁴ И. Ф. Краузе принимал участие в обработке документов для «Собрания актов», особенно тех, которые были переведены с западноевропейских языков.

¹⁵ См. его книгу: **Худобашев А. М.** Обозрение Армении в географическом, историческом и литературном отношениях. СПб., 1859.

¹⁶ Материалы об издании истории армянского народа (рукописные заметки, записки, справки). РГАДА, ф. 1252, оп. 1, д. 532, л. 15. Священник Архангельский вместе с Х. Е. Лазаревым работали над книгой по истории армянской церкви (см. РГАДА, ф. 1252, оп. 1, ч. 2, д. 4390, л. 101-102).

Глинка почти полностью воспользовался рекомендацией о заглавии 1-й и 2-й части книги. Что касается 3-й и 4-й части, то на первом этапе «Собрание актов» предполагалось как приложение «Обозрения истории», но документов набралось на три объёмных самостоятельных тома, поэтому первоначальная структура издания, в том числе «Собрания актов», была изменена.

Один из первоначальных вариантов развёрнутого плана для «Обозрения истории» включал следующие центральные темы: о древней истории Армении, об истории христианства в Армении, о настоящем состоянии Армении, об истории армяно-русских отношений, в том числе об армянских поселениях в России¹⁷. Документ в общем виде намечает план целостного освещения истории армянского народа в единстве духовного и государственного начала. Такая концептуальная постановка вопросов предполагаемого исследования, на наш взгляд, могла принадлежать заказчику работы.

Литература и документы, касающиеся истории Армении, истории армянской церкви, переселения армян, пересылались из Петербурга в Москву Х. Е. Лазаревым¹⁸. Это были материалы на русском и французском языках, переводы с армянского, выписки из книг, подлинники и копии; многие из них содержали приписки, касающиеся порядка и сроков доставки источников.

Подбор материалов и источников, предоставляемых Глинке, во многом предопределял его позицию в освещении истории Армении. Здесь нет документов о жизни простого народа. Они в основном рассказывают о деятельности выдающихся исторических лиц.

Глинка хорошо ориентировался в предоставляемом ему материале. Он часто цитировал Мовсеса Хоренаци, Ш. Джерпета, В. Ваганова, Я. Шамирова и других авторов, полемизировал с ними, приводил свидетельства как древних и средневековых писателей, так и новые, малоизвестные в России сведения об армянах и армянской истории. Глинка использовал разнообразные источники, а при сравнении свидетельств «внешних» и армянских историков, больше доверял последним¹⁹. Соотнося данные из книги «Любопытные извлечения из древней истории Азии»²⁰ с «Историей Армении» Хоренаци, он критикует французских авторов за недооценку уровня общественной нравственности в Древней Армении, которая обеспечила её независимое развитие в окружении более мощных держав: «Древние армянские устные и исторические предания свидетельствуют, что желание сохранить свою независимость подвигло Гайково поколение переселиться с цветущих полей и долин и удалиться от насилия в обитель гор. Это чувство слилось, так сказать, с жизнью его народа

¹⁷ См. Материалы об издании истории армянского народа (рукописные заметки, записки, справки). РГАДА, ф. 1252, оп. 1, д. 532, л. 4-5 об.

¹⁸ См. там же, л. 2-3 об.; 13-13 об. Статский советник Х. Е. Лазарев служил в это время в Коллегии иностранных дел и имел доступ к документам из официальных источников.

¹⁹ См. Глинка С. Н. Обзорение истории армянского народа от начала бытия до возрождения области Армянской в Российской империи. Ч. II. СПб., 1833, с. 98-102; С. 54, 65, 159-160, 166-167, 171-173.

²⁰ «Любопытные извлечения из древней истории Азии, почерпнутые из восточных рукописей, хранящихся в парижской библиотеке». СПб., 1816.

и превратилось в самобытное и общественное его существование»²¹.

Обнаруженные архивные документы упоминают о работе над изданием армянской церковной истории²², которая была поручена священнику Н. И. Архангельскому. Методические рекомендации, литературу, конспекты и переводы он получал непосредственно от Х. Е. Лазарева²³. В «Собрании актов» вопросам армянской веры был посвящён «Духовный отдел». Лазаревы собирались ходатайствовать об освобождении этого отдела от гражданской цензуры²⁴, поскольку считали важным подчеркнуть принципиальное единство армянской и православной веры.

Документы фонда Абамелек-Лазаревых отражают процесс работы над «Обозрением» и «Собранием актов», в них рассказывается о редакторских рекомендациях, методических инструкциях, способах группировки, систематизации и обработки материалов²⁵. Они показывают объём, характер и приемы работы авторского коллектива. Обращает на себя внимание документ о чтении И. Давыдовым по просьбе Х. Лазарева рукописи «Обозрения истории». Рецензент о самой книге отзывался весьма положительно. Выбор рецензента еще раз подтверждал цели Лазаревых – подготовить книгу по истории Армении для массового российского читателя. Упоминаемый документ свидетельствует о тщательной, неспешной работе с текстом, поиске наиболее точных формулировок, которые не могли бы каким-то образом задеть интересы конкретных лиц²⁶. Среди указаний Лазаревых, адресованных авторам, встречаются такие: «обеспечить благопристойное изложение», «исключить сильные возражения против тех или других книг», «обойтись без личностей и оскорблений», «чтобы потом не навлечь каких-либо неприличностей, возражений»²⁷. Если судить по архивным документам, Лазаревы не ставили перед авторами задачу критиковать источники, инициировать научную полемику и т. п., их интересовало беспрепятственное прохождение книг через цензуру и своевременный их выход. Главным для них, по-видимому, было решение культурно-просветительных и политических задач, связанных с развитием русско-армянских отношений.

Документы свидетельствуют не только о непосредственном участии Х. Е. Лазарева в обработке материалов, предназначавшихся для «Собрания актов», но и его ведущей роли редактора: он отмечал карандашом, что «не нужно печатать», что сократить²⁸. Можно говорить о том, что при сложившейся системе творческого сотрудничества участникам проекта давались персональ-

²¹ Глинка С. Н. Указ. соч., с. 101-102.

²² См. РГАДА, ф. 1252, оп. 1, д. 4120, л. 1, 6; РГАДА, ф. 1252, оп. 1, д. 4121, л. 77. После присоединения Армении к России было принято «Положение об управлении Армяно-григорианской церковью в России» (1836), подтвердившее основные привилегии Армянской апостольской церкви.

²³ См. РГАДА, ф. 1252, оп. 1, ч. 2, д. 4390, л. 101-102. Об этом же см. РГАДА, ф. 1252, оп. 1, д. 532, л. 4-5 об.

²⁴ См. РГАДА, ф. 1252, оп. 1, д. 532, л. 4-5 об.; л. 8-8 об.; л. 12; л. 32-32 об.

²⁵ См. там же, л. 2-3 об.; 4-5 об.; 21-21 об.; л. 26-27 об.; л. 32-32 об.; л. 46-47 об.

²⁶ См. РГАДА, 1252, оп. 1, д. 342, л. 23, 24, 36.

²⁷ РГАДА, ф. 1252, оп. 1, д. 532, л. 26-27 об.

²⁸ См. там же, л. 35, 37-37 об.; л. 46-47 об.

ные инструкции и предоставлялись документы и другие материалы, каждому в соответствии с его задачей. Лазаревы добивались регулярных отчетов по выполнению своих распоряжений, а также того, чтобы все печатавшиеся в их типографии книги пересылались им²⁹. Именно характер работы над «Обозрением истории» и «Собранием актов» позволил Р. Г. Хачатряну сделать вывод о том, что в 1830-е годы «совместными усилиями русских и армянских историков» был издан ценный многотомный труд³⁰.

Итак, общая картина работы над армянской историей в 1831-1838 годах само по себе является историографическим фактом, который любопытен уже тем, что рассказывает о единственном в своем роде опыте творческого сотрудничества русских и армянских историков. Это плодотворное сотрудничество имело большое значение в то время и о нем важно напомнить сейчас. Без него не могло быть и сочинений Глинки по истории армянского народа.

Эти сочинения были первыми в дореволюционной русской историографии, где рассказывалось о древней истории армянского народа, его давних исторических связях с русским народом и давалась высокая оценка присоединению Восточной Армении к России.

Уже сам факт появления этих трудов имел значение для взаимопонимания соседних народов, укрепления их литературных и культурных связей. Х. Е. и И. Е. Лазаревы, С. Н. Глинка, весь авторский коллектив Лазаревского института восточных языков внесли большой вклад в изучение в России армянской истории, стояли у истоков русской школы арменоведения.

Ключевые слова: армянское просвещение, Лазаревский институт восточных языков, история русского востоковедения, история армянского народа, арменоведение в России

ՄԵՐԳԵՅ ՄԱՅԱՂՈՎ – *Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը՝ Ռուսաստանում հայագիտության կենտրոն* - XIX դարի առաջին քառորդում Մոսկվայում հիմնադրվեց հայ լուսավորականության խոշորագույն մի օջախ՝ Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը, որը կարևոր դեր խաղաց հայ-ռուսական հարաբերությունների զարգացման և հայրենական արևելագիտության ձևավորման գործում: 1832-1833 թթ. ճեմարանում պատրաստվեց և հրատարակվեց Ս. Ն. Գլինկայի «Հայ ժողովրդի պատմության քննությունը գոյության սկզբից մինչև Ռուսաստանի կայսրության կազմում Հայկական մարզի վերածնունդը» երկհատորյակը, իսկ 1833-1838 թթ.՝ «Հայ ժողովրդի պատմության քննությանը նվիրված նյութերի ժողովածու» եռահատորյակը: Այդ գրքերը աշխատասիրելու, հրատարակելու և հայ ժողովրդի պատմության մասին տվյալ ժամանակաշրջանում սկզբնաղբյուրային բազմազան նյութեր հավաքելու և մշակելու ուղղությամբ կատարված մեծ աշխատանքը դեռևս հավուր պատշաճի չի ներկայացվել պատմագրության մեջ:

Մույն հոդվածի քննության առարկան Ռուսաստանի կայսրության կազմում Հայկական մարզի ձևավորման ժամանակաշրջանում հայ ժողովրդի

²⁹ См. там же, л. 26-27 об.

³⁰ См. Хачатрян Р. Г. Указ. соч., с. 230.

պատմության վերաբերյալ համալիր աշխատությունների ստեղծման պատմությունն է: Հայոց պատմության նոր մեկնությունը արդյունք էր ոուս և հայ պատմաբանների ստեղծագործական համագործակցության, որոնք դրեցին հայագիտության ոուսական դպրոցի հիմքերը:

Բանալի բառեր – *հայկական լուսավորականություն, Արևելյան լեզուների Լազարյան ճեմարան, ոուս արևելագիտության ինստիտուտ, հայ ժողովրդի պատմություն, հայագիտությունը Ռուսաստանում*

SERGEY SAYADOV – *Lazarev Institute of Oriental Languages – Center for Armenian Studies in Russia.* – In the first quarter of XIX century, a big center of Armenian education – Lazarev Institute of Oriental Languages emerged in Moscow. It played a great role in developing of Russian-Armenian relationships and rising of the Russian orientalism. In the 1832-1833, there were two parts of Glinka's book on Armenian history published in the Lazarev Institution, and in 1833-1838 – the three parts of his second book.

The huge work of collecting and processing the information from the different sources on Armenian history and publishing of these books has no response in the historical literature.

The matter of the combining of all researches on Armenian history in the times of emerging the Armenian region as a part of the Russian Empire became the object of our research. The new sight of Armenian history became a result of the creative cooperation of Russian and Armenian historians. It created a basis of the Russian school of Armenian studies.

Key words: *Armenian education, Lazarev Institute of Oriental Languages, the history of the Russian orientalism, the history of the Armenian nation, Armenian studies in Russia*

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՒ ԽՍՀՄ-Ի ԳԱՂՈՒԹԱՑՄԱՆ ՀԻՏԼԵՐՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ

Մինչև 1940 թ. ավարտը Գերմանիան նվաճեց Նորվեգիան, Դանիան, Հոլանդիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Ֆրանսիան:

Այս իրադարձությունների մասին հետաքրքիր վերլուծություններ ու բացահայտումներ կան Չերչիլի վկայություններում: Մեծ Բրիտանիայի վարչապետը սնափառորեն գրում էր. «Հիտլերը, համոզվելով, որ Գյոթրինգի հուսադրումն ու պարծենկոտությունը, սնապարծությունը վերածվեցին դատարկ բառերի՝ Անգլիան ծնկի բերելու հարցում, հարձակման ուղղությունը փոխեց դեպի Արևելք, ինչպես վարվեց Նապոլեոնը 1804 թ.»¹:

ԽՍՀՄ-ի վրա հարձակման խնդիրը քննարկվել է նաև ԱՄՆ պետքարտուղար Կ. Խեյլի և Ստալինի բանակցությունների ժամանակ: Պարզվում է, որ դեռևս 1941 թ. ապրիլին Ստալինին հաղորդվել է հարձակման ստույգ օրը, սակայն ԽՍՀՄ ղեկավարը հանդիպման ժամանակ ասում է. «Ինձ որևէ զգուշացում պետք չէր: Ես գիտեի, որ պատերազմը կսկսվի, բայց ես մտածում էի, որ ինձ կհաջողվի շահել ևս վեց ամիս կամ մոտավորապես այդքան»²:

Սակայն Ստալինի հույսերը չարդարացան. ԽՍՀՄ-ը փաստորեն անպատրաստ էր մեծ պատերազմի: Իսկ Հիտլերը, Ֆրանսիան ջախջախելու ծրագիրը համարելով ԽՍՀՄ-ի վրա հարձակման նախերգանք, նենգորեն նախապատրաստվում էր Արևելքը նվաճելու գործընթացին: Այս առթիվ պետք է նշել, որ ԽՍՀՄ-ի վրա հարձակման նախապատրաստվելու առաջին հրահանգը Հիտլերը տվեց 1940 թ. գարնանը, որն ավելի հստակեցվեց 1940 թ. հուլիսի 30-ից հետո, երբ Ֆրանսիան ընդունեց իր պարտությունը: 1940 թ. դեկտեմբերի 12-ին Հիտլերը հաստատեց «Բարբարոսա» գործողության պլանը:

Ինչպես վկայում է գերմանական բանակի շտաբի պետի նախկին տեղակալ, Հիտլերի մերձավոր և հավատարիմ գեներալ Վ. Վարլիմոնտը, որը «Բարբարոսայի» հեղինակներից էր, Հիտլերը անմիջական մասնակցություն է ունեցել պլանի մշակմանը, կատարել ուղղումներ, լրացումներ³:

¹ «Вторая мировая война в воспоминаниях», М., 1990, с. 83.

² Նույն տեղում, էջ 174:

³ Տե՛ս **Варлимонт В.** Воспоминания немецкого генерала. 1939-1945. М., 2005, էջ 1, 2:

Պատերազմի առաջին օրերը արդարացնում են Հիտլերի հույսերը: Գերմանիայի ցամաքային ուժերի շտաբի նախկին պետ, գեներալ Ֆ. Գալդերը իր «Զինվորական օրագրում» 1941 թ. հունիսի 22-ի տեղեկագրում հայտնում է, որ առավոտյան հարձակումը, «ինչպես երևում է, ... բացահայտ անսպասելի էր», խորհրդային զորքերի առանձին միավորումներ մնացել էին գորանոցներում, քողարկված ինքնաթիռները կանգնած էին օդանավակայաններում⁴:

Հիտլերը նվաճված տարածքները կառավարելու յուրահատուկ լուծումներ էր առաջադրել, որոնց նպատակը ԽՍՀՄ հանքային, տնտեսական հնարավորությունների օգտագործումն էր, գաղութային համակարգի հաստատումը: Այս խնդիրների իրագործման համար 1941 թ. ապրիլի 20-ին Հիտլերը Ալֆրեդ Ռոզենբերգին նշանակեց «Արևելավերոպական տարածքների խնդիրների ուսումնասիրման» վարչության ղեկավար:

Ապրիլի 23-ին Ռոզենբերգի շտաբը հուշագիր ներկայացրեց, որով սահմանվում էին արևելավերոպական շրջանների ղեկավարման իրավունքները: Հրահանգների սկզբնաղբյուրը ֆյուրերի «Իմ պայքարը» գիրքն էր: Նվաճված բոլոր տարածքների գյուղերն ու քաղաքները ենթարկվելու էին զինվորական միավորումներին: Առաջինը սկսվելու էր նյութական ու մշակութային թալանը, նվաճված ժողովուրդները վերածվելու էին ստրուկների, որոնք դրվելու էին «Արևելքի հետ առևտրի կենտրոնական» և «Արևելքից մթերման» միավորումների իշխանության տակ:

Արևելքի ստրկացման Հիտլերի ծրագիրը լավագույն ուղենիշ էր Ա. Ռոզենբերգի համար, որի նախարարությունում քարտուղարի աթոռը զբաղեցրած ազգայնամոլ Լյուդվիգ Ռունտեի ակտիվ գործունեությամբ ասպարեզ բերվեց «Դարչնագույն թղթապանակը»: Այն պարունակում էր նվաճված տարածքների օրենսդրությանը, կառավարմանը, քաղաքական հարցերին, ծառայողական պարտականություններին վերաբերող հրահանգներ: Գոյություն ուներ նաև Գյոթինգի «Կանաչ թղթապանակը», որը վերաբերում էր գրավյալ տարածքների տնտեսական կառավարմանը, իսկ իրականում ծրագիր էր նվաճված շրջանների կազմակերպված թալանի, բնակչության ոչնչացման, գերմանացի օկուպանտների համար բարենպաստ պայմանների ստեղծման: «Հարկավոր է ցանկացած միջոցներով հասնել այն բանի, որ գերմանացիները նվաճեն աշխարհը: Եթե մենք ցանկանում ենք ստեղծել գերմանական մեծ կայսրություն, ապա պետք է դուրս մղենք, ոչնչացնենք սլավոնական ժողովուրդներին՝ ռուսներին, լեհերին, չեխերին, սլովակներին, բուլղարացիներին, ուկրաինացիներին, բելոռուսներին: Դա

⁴ Տե՛ս Գալդեր Փ. Военный дневник. М., 1971, էջ 3:

չանելու համար որևէ պատճառ չկա»⁵, - պահանջում էր Գյորինգը:

Գյորինգի թղթապանակը առանձնակի «հոգատարություն» էր դրսևորում բանվորական ուժի և բնակչության հնարավորությունների օգտագործման հարցում:

Գյորինգի նկատառումները թերևս անբավարար էին կամ համահունչ չէին ֆյուրերի տեսակետներին, որովհետև Ա. Ռոզենբերգի «Դարչնագույն թղթապանակը» լրացնում և ճշգրտում էր առանցքային շատ հարցեր:

1941 թ. ապրիլին Ա. Ռոզենբերգի կազմած նախագծով ԽՍՀՄ նվաճված տարածքներում կազմավորվելու էր կայսերական կոմիսարիատ: Հեղինակը առաջարկում էր գերմանացի լիազոր ներկայացուցչի գլխավորությամբ ստեղծել դաշնային պետություն: 1941 թ. հունիսի 20-ին Ա. Ռոզենբերգը հանդես եկավ «Գերմանիայի քաղաքական նպատակները ԽՍՀՄ դեմ առաջիկա պատերազմում և նրա մասնատումը» ծրագրային ճառով: Կայսրության պաշտոնական քաղաքականության սահմանումից բացի ճառասացը ընդգծում էր Արևելքում Գերմանիայի նպատակները, խելացի և նպատակային մոտեցումները ԽՍՀՄ ժողովուրդների անկախության ձգտումների նկատմամբ և հսկայական տարածքում այնպիսի պետական միավորումների կազմավորման մասին, որոնք կայսրությանը առաջիկա 100 տարում կազատեին արևելյան խնդիրներից: Այդ պատճառով Ա. Ռոզենբերգը առաջարկում էր կազմավորել «Մեծ Ֆինլանդիա», «Մերձբալթիկա», «Ուկրաինա» և «Կովկաս» կոմիսարիատները:

Կովկասում կայուն, հաստատուն վիճակ ապահովելու համար պետք է ձևավորվեր կենտրոնական ուժեղ իշխանություն, որպեսզի բացառվեր այն վիճակը, երբ 1918-1920 թթ. ազգությունների խառնարան երկրամասում վրացիները, հայերը, թաթարները, չեքեզները, չեչենները, արբսագները և այլ ազգություններ «միմյանց կոկորդ էին կրծում...»⁶: Այդ ամենից խուսափելու համար Կովկասում ոչ թե պետք է ստեղծվեին ազգային պետական միավորումներ, այլ դաշնային կարգ, որը ղեկավարելու էր գերմանացի լիազոր ներկայացուցիչը: Թեև Ա. Ռոզենբերգի թղթապանակի այս հատվածը տարաձայնությունների տեղիք տվեց, սակայն Հիտլերը այն համարեց ժամանակավոր միջոցառում:

1941 թ. հուլիսի 16-ին Հիտլերի աշխատասենյակում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ որոշվեց ԽՍՀՄ-ում կազմավորել կայսրական չորս կոմիսարիատ, որոնք ենթարկվելու էին Ա. Ռոզենբերգին: Մեծբալթիկայի կամ Օստլանդի, Ուկրաինայի, Մոսկվայի և Կովկասի կոմիսարիատներում աշխատելու համար ուղարկվելու էին 144 սպա-

⁵ Леонтьев А. Зеленая папка Геринга. М., 1942, с. 27.

⁶ Розенберг А. Мемуары. Харьков, 2005 կամ տե՛ս <http://www.kavkazweb.su/forum/topic/36225-germaniia-kavkaz-esli-nemtcy-pobedili/>

ներ, ներքին գործերի և աշխատանքային ճակատի 711 աշխատակիցներ: Տեղական ժողովուրդներից կազմավորված զինվորական միավորումները ունենալու էին այնպիսի կարգավիճակ, որով չկարողանային ազդել վարվող քաղաքականության վրա: Կովկասի կայսերական կոմիսար նշանակվեց ժուռնալիստ Ա. Շիկեդանցը, ՄՍ և ոստիկանության ղեկավարությունը հանձնվեց օբերֆյուրեր, էսէսական Կորզմանին: Հիտլերի 1941 թ. հուլիսի 17-ի հրամանով Ա. Ռոզենբերգը նշանակվեց Արևելքի նվաճված տարածքների կայսերական նախարար: Կովկասում ծրագրված էր կազմավորել ադրբեջանական, վրացական, լեռնային շրջանների, Կուբանի, Թերեքի հինգ հաուպտկոմիսարիատներ:

Մշակված ծրագրի համաձայն՝ Կովկասում բոլոր ազգություններն ու ցեղերը պետք է ստանային անսահմանափակ ազատություն, քարոզվելու էր այն գաղափարը, որ գերմանացիները արյուն թափելով կովկասցիներին փրկել են տառապանքից, որը նրանց պատճառել էին ցարիզմն ու բոլշևիզմը: Կովկասում վերացվելու էին կոլեկտիվ տնտեսությունները, փոխվելու էր կրթական համակարգը, դասագրքերը, հանդուրժողականություն էր դրսևորվելու կրոնի նկատմամբ, կազմավորվելու էին զինվորական միավորումներ, որոնք, Ռոզենբերգի գնահատմամբ, «խորը տպավորություն» էին թողնելու բնակչության վրա: Յուրաքանչյուր լեզուն ունենալու էր հազար հոգանոց անձնակազմ՝ կրելով հատուկ նշաններ և խորհրդանիշներ⁷:

Գերմանիայի համար շատ շահեկան էր, որ Կովկասում ապրող ազգերը, ցեղերը միմյանց նկատմամբ անհաշտ էին, ունեին կուտակված հակասություններ, որոնց լուծումը դուրս է տիրող ազգի պարտականություններից, ավելին՝ այդ «հակասությունները, ատելությունը կհեշտացնեին նրանց վրա գերմանական հրամանատարության իշխելու հնարավորությունը»⁸:

Այստեղ կարևորվում էր ամենաառաջնայինը՝ հումքի արտահանումը: Այս առիթով 1942 թ. հունիսի 1-ի խորհրդակցության ժամանակ Հիտլերը հայտարարում է. «Եթե ես չստանամ Մայկոպի և Գրոզնիի նավթը, ես պարտավոր եմ ավարտել այս պատերազմը»⁹:

Այնուամենայնիվ, Հիտլերը չկարողացավ ստանալ սպասված արդյունքը. թեև ծրագրեց Կովկասի ուղղությամբ նոր հարձակում, սակայն 1942 թ. իրադարձությունները, հատկապես Ստալինգրադի ճակատամարտը, խառնեցին ֆյուրերի հաշիվները:

Մինչ ԽՍՀՄ-ի վրա հարձակումը հատուկ տեղ էր տրվում մուսուլմանական գործոնին: Նկատի ունենալով, որ մուսուլմանները թշնամա-

⁷ Տե՛ս նույն տեղը:

⁸ <http://coollib.net/b/197062>, տե՛ս նաև՝ «Материал из Википедии: Коричневая папка А. Розенберга»; Нюрнбергский процесс. М., 1954, т. 2, էջ 208:

⁹ Նույն տեղում:

բար էին տրամադրված Ռուսաստանի նկատմամբ՝ վերնախտը փորձում էր այն օգտագործել նախ Կովկասը նվաճելու, ապա ԽՍՀՄ-ը տապալելու, մասնատելու նպատակով: Շարունակելով իր հեռահար ծրագիրը՝ 1941 թ. նոյեմբերի 28-ին Հիտլերը հանդիպել ու բանակցել էր մուսուլմանների մուֆտի Ալ Հուսեյնի, այնուհետև՝ Իրանի հոգևոր առաջնորդի և շահի հետ: Բայց վերջինս հրաժարվել էր դիրքավորվել Գերմանիայի ճամբարում և պահպանել էլ իր երկրի չեզոքությունը, ինչի պատճառով օրակարգային էր դարձել նրան գահընկեց անելը: Արարների ճանաչելով որպես գերմանացիների ազգակից՝ հիտլերյան վերնախավը 1942 թ. ապրիլի 1-ին Բաղդադում կազմակերպեց հեղաշրջում և իշխանությունը հանձնեց Ռաշիդ ալ Գեյլանին, որը խոստացավ պայքարել Անգլիայի դեմ:

Կովկասի նկատմամբ անթաքույց հետաքրքրություններ ունեին նաև Անգլիան և Ֆրանսիան, որոնք փորձում էին այդ գործընթացի մեջ ներքաշել նաև Թուրքիային ու Իրանին, որոնցից յուրաքանչյուրը ուներ իր առանձին շահերն ու նպատակները:

Կովկասի նվաճման, նավթային շրջանների ավերման քաղաքականությունը ավելի սրվեց ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև պայմանագրի կնքումից հետո, երբ ԽՍՀՄ-ը սկսեց նրան նավթ մատակարարել: Անգլիան ու Ֆրանսիան ձեռնամուխ եղան Կովկասի նվաճմանը, որպեսզի դրանով թուլացնեն ԽՍՀՄ-ը: 1939-1940 թթ. Անգլիան և Ֆրանսիան ծրագրել էին ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ, որը ենթադրում էր հարձակում Սև ծովով, անմիջական ներխուժում Կովկաս և Կովկասի մուսուլմանների ապստամբություն: Բայց իրադարձությունները այլ ընթացք ունեցան, և, ավարտելով ֆիննական պատերազմը, տեղյակ լինելով անգլոֆրանսիական ծրագրերին, ԽՍՀՄ-ը ուժեղացրեց Բաքվի, Գրոզնիի և Մայկոպի պաշտպանությունը: Այս գործողությունները ստիպեցին Իրանին և Թուրքիային ընտրել զգույշ և սպասողական քաղաքականություն, թեև Թուրքիան մեծ նկրտումներ ուներ Կովկասի նկատմամբ՝ միավորելու ազգակից Ադրբեջանին, լուծելու Հայկական հարցը: Ճիշտ է, Թուրքիան 1939 թ. պայմանագիր էր կնքել Անգլիայի և Ֆրանսիայի հետ, այնուամենայնիվ դա ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ սկսելու վճռական գործոն չդարձավ:

Գերմանիայի նվաճողական ծրագրերում անդրադարձներ կային նաև Հայկական հարցին, սակայն գերմանական ռազմաքաղաքական վերնախավը առաջնային էր համարում երկրամասի բնական հարստություններին տիրանալը, որից հետո կլուծվեին ժողովուրդների ապագայի խնդիրները: Հենվելով Առաջին աշխարհամարտի և հետագա տարիներին Վրաստանի գերմանական կողմնորոշման վրա՝ վրացիները ճանաչվում էին որպես համակիր ժողովուրդ, և նրանց վրա հենվելու նախագծեր էին կազմվում: Օրինակ՝ Ա. Ռոզենբերգը գտնում էր, որ

պետք է նախապատվություն տալ վրացիներին, իսկ հայերի նկատմամբ համեմատաբար պակաս ուշադրություն ցուցաբերել¹⁰:

Անդրադառնալով Կովկասում նոր կազմավորումների ստեղծմանը՝ նույն կայսերական նախարարը առաջարկում էր ապագա կոմիսարիատների շարքում ձևավորել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի առանձին կոմիսարիատներ: Հետաքրքրական է, որ Ադրբեջանից առանձնացվում էր նաև Նախիջևանի մարզը: Պետք է ենթադրել, որ վերնախտը հատուկ ծրագիր ուներ նաև կովկասյան երկրների տարածքի նկատմամբ, որի վկայությունն են Նախիջևանի առանձնացումը և մինչ այդ Հայաստանի մաս համարվող Լեռնային Ղարաբաղին նոր կարգավիճակ տալը¹¹:

Թուրք-հայկական, հայ-ադրբեջանական հարաբերություններին անդրադառնալիս Ա. Ռոզենբերգը դրսևորում է պատմության քաջատեղյակություն. նա նշում է, որ ադրբեջանցիները հակված են դեպի Թուրքիան և խոսում են նրա լեզվով, իսկ հայերը, որ քրիստոնյա են, դարեր շարունակ «նրանց թշնամին են»¹²:

Մշակելով բազմաթիվ ժողովուրդների ոչնչացման, պատմության ասպարեզից ջնջելու դիվային ծրագիր՝ ֆաշիզմը ցանկանում էր իրականություն դարձնել ընտրյալ ժողովուրդների հակամարդկային քաղաքականությունը, աշխարհում հաստատել արիական ժողովուրդների գերիշխանություն:

Հանձին Հիտլերի՝ գերմանական միլիտարիզմը գտավ այն դերակատարին, որը պետք է սրբազրեր Առաջին աշխարհամարտի արդյունքները, բարձրացներ գերմանական հարցը, իրականացներ աշխարհի վերաբաժանման ու աշխարհակալման գերմանական ծրագրերը:

Եվրոպայում հաստատելով իր տիրապետությունը՝ 1941 թ. հունիսի 22-ին՝ առավոտյան ժամը 4-ին, Գերմանիան, առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա: Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Հայ ժողովուրդը նամակով դիմեց իր զավակներին՝ կոչ անելով անմնացորդ նվիրվածությամբ պայքարել մարդկության թշնամի ֆաշիզմի դեմ: Հայաստանում 1941-1942 թթ. գարնանը կազմավորվեցին 89, 390, 409, 408, 261, 76-րդ դիվիզիաները, որոնք, քաջաբար մարտնչելով գերմանական բանակների դեմ, իրենց ավանդը ներդրեցին պատերազմի հաղթական ավարտի գործում:

Դեռևս 1933 թ. գերմանական ազգայնամուլները սկսեցին ուսումնասիրել իրենց ծագումնաբանությունը: Ուշադրության կենտրոնում հայտնվեց հատկապես Իրանը: Գերմանական վերնախավը գտնում էր, որ Արևելքն է արիականության օրբանը: Իրան անվանումը ծագում է

¹⁰ Տե՛ս **Розенберг А.**, նշվ. աշխ., էջ 14:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 41:

¹² Նույն տեղում, էջ 42:

«Էրան վեջ» բառից, որը թարգմանաբար նշանակում է արիացիների երկիր: Իրանցիներին ճանաչելով որպես զտարյուն արիացիներ՝ թուլատրվեց գերմանացի աղջիկների ամուսնությունը Իրանի քաղաքական, տնտեսական, զինվորական վերնախավի ներկայացուցիչների հետ, շիա հավատը ճանաչվեց ճշմարիտ արիական կրոն, տարածվեց այն տեղեկությունը, որ Ադոլֆ Հիտլերը ծնվել է մեջքի կանաչ եզրագարդով, ինչը մուսուլմանական սրբագործություն էր, իսկ դա նշանակում էր, որ Հիտլերը Մուհամմեդի ժառանգներից է, մուֆտի է, որ ժամանակին կգա և կղեկավարի մուսուլմաններին ու երկրում կհաստատի արդարություն: Գերմանացիները հավաստիացնում էին, որ Հիտլերը ընդունել է իսլամ և կրում է Հեյդար անունը¹³: Այս ամենը շարունակությունն էր 1898 թ. Երուսաղեմ և Սիրիա այցելած Վիլհելմ Երկրորդի կեղծ մուսուլմանասիրության, երբ Դամասկոսում հայտարարում էր, թե ինքը սուլթանի և բոլոր մուսուլմանների ընկերն է: Նախադեպը կար, և Հիտլերը, անդրադառնալով մուսուլմանական գործունին, այն անգլո-ֆրանսիական ծրագրերի դեմ օգտագործելու նպատակով քաղաքական սիրախաղ էր սկսում նրանց հետ, որը տվեց իր արդյունքը: Կազմավորվեց «Փ» կորպուսը՝ թուրքեստանյան լեգեոնը, որը մարզվում էր՝ պատրաստվելով Թուրքմենստան պարաշյուտային ներխուժման:

Ծագումնաբանական փնտրտուքները գերմանացիներին ուղղորդեցին նաև Հայկական լեռնաշխարհ: 1930-ական թվականներին կազմակերպված գիտարշավների նպատակն էր առավել շատ տեղեկություններ հավաքել հայերի, նրանց ծագման, մշակութային ժառանգության մասին: Գերմանացի հետազոտողները բարի հարաբերություններ հաստատեցին Մխիթարյանների հետ, փնտրում և ձեռք էին բերում հայկական ձեռագրեր, ուսումնասիրում դրանք, բացում հայագիտական կենտրոններ, տպագրում գրքեր, որոնք ընդունելի էին գերմանական վերնախավի կողմից: Հայերի նկատմամբ ստեղծված բարյացակամ վերաբերմունքը անհանգստացրեց Թուրքիային: Վարելով խուսանավելու, այսպես կոչված չեզոքության քաղաքականություն՝ թուրքերը հող էին նախապատրաստում նաև իրենց երկիր գերմանական ներխուժման համար: Միակ ելքը փորձված միջոցներին դիմելն էր: Կեղծավորության, շողոքորթության շնորհիվ նրանք կապեր հաստատեցին գերմանական վերնախավի հետ, պատվիրված հողվածներ տպագրեցին թերթերում՝ «ապացուցելով», որ հայերը սեմական ծագում ունեն և արժանի են հրեաների ճակատագրին:

Թուրքական դավադիր քաղաքականության բացահայտման մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Մանասե Մևակը: Արտաշես Աբեղյանին նվիրված հոդվածաշարում նա անդրադառնում է

¹³ Տե՛ս <http://www.kavkazweb.net/forum//index...topic/=33144>

նան վիճակագրությանը: 1920 թ., գրում էր նա, Գերմանիայում ապրում էին 600.000 հրեաներ: Հիտլերի իշխանության գալուց հետո (1933 թ.) մնացել էր 215 հազարը, որոնք «պատերազմի ընթացքին ենթարկվեցան խողխողումի»¹⁴:

Բացի այն բանից, որ հրեաները հալածվում էին սեմական ծագման համար, նրանց մեղադրում էին նաև բոլշևիկների հետ համագործակցելու, ԽՍՀՄ կառավարման համակարգում աշխատելու և հատկապես ցարիզմը տապալելու մեջ: Ըստ այդմ՝ սկսվում են հրեաների նկատմամբ հալածանքները: 1938 թ. Եվրոպայում ապրում էր 9.494.363 հրեա, պատերազմի ժամանակ ոչնչացվեց 4.5-6 միլիոնը¹⁵:

Ա. Ռոզենբերգը, որը 1939 թ. տպագրել էր «XX դարի առասպելը» գիրքը, խոսելով 1917 թ. բոլշևիկյան հեղափոխության մասին, գրում էր, որ հաղթեցին «պաշտոնաթափ փաստաբանները և ժպիրի հրեաները», Ռուսաստանը բաժանվեց երկու մասի՝ հյուսիսայինը հեռացավ պայքարից, իսկ արևելյան մոնղոլականը թռիչք կատարեց: **«Հրեաներ և Հայեր սպրդեցան դեկավարության մեջ և՛ դալմուկ թաթար Լենինը տեր դարձաւ իշխանութեան»**¹⁶ (ընդգծումը մերն է - Հ. Ջ.): Դրանով Ա. Ռոզենբերգը հավասարության նշան էր դնում հայերի և հրեաների միջև, ասել է թե հաստատում էր հայերի սեմական ծագումը, որի համար հայերը ևս պետք է ոչնչացվեին:

Մանասե Սևակը պատմում է նաև, որ ինքը, լինելով Ամերիկայի քաղաքացի, գիտական աշխատանք էր կատարում Ռոբերտ Կոխի հաստատությունում: Աշխատակիցներից մեկի հակահրեական պոռթկումների ժամանակ նա պաշտպանում է հրեաներին, քննադատում նրանց ոչնչացման ծրագիրը: Չայրացած աշխատակիցը հայտարարում է, թե Սևակը ևս սեմական ծագում ունի և պահանջում է արյան զննություն կատարել: Սևակը համաձայնում է: Արդյունքը դրական էր, արյունը արիական էր, և հողվածագիրը շարունակում է. «Խնդալով եւ շեշտելով բառերս, ըսի իրեն՝ **«Հայերը արիական ցեղերու նախահայրերն են»**»¹⁷:

Ընդունելի տեսակետ էր ձևավորվել, որ արիական էին համարվում հնդիրանական լեզվախմբին պատկանող ժողովուրդները: Սա, իհարկե, լոկ լեզվաբանական ընդհանրության առումով, իսկ ֆիզիոլոգիայի ասպարեզում այդպես էլ չստեղծվեց կամ չընդունվեց արիացու որևէ կերպար: Ահա այսպես ծնունդ առած տեսությունը մնաց անավարտ և կենդանացավ միայն 20-րդ դարի 30-ական թվականներին, երբ իշխանության եկած հիտլերյան վարչակարգը, «ուսումնասիրելով» ժողովուրդների ծագումնաբանությունը, հայտնաբերեց, որ գերմանացիները

¹⁴ «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1955, 9 հունիսի:

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

արիական ցեղ են: Հիտլերը, օրինակ, հայտարարում էր, որ ֆիզիկապես ու հոգեպես կապ ունի հարյուրավոր տարիներ առաջ ապրած գերմանական ցեղերի հետ:

Ապա ասպարեզ բերվեցին «Գերմանացիների արյան մեջ է ճշմարտությունը», «Գերմանացիների ռասսայական մաքրությունը» տեսությունները, որոնք հիմնավորելու համար Հիտլերի հրահանգով ստեղծվեց «Նախնիների որոնման ինստիտուտ»-ը:

Կանխագգալով այդ մտահղացման հեռուն գնացող հետևանքները, ի մասնավորի՝ դեռևս ձևավորման ընթացքում գտնվող հակահայ տեսության վտանգավորությունը մեր ժողովրդի համար, Գերմանիայում գործող ՀՅԴ գործիչները ձեռնամուխ եղան հակահայ տեսության խափանմանը:

Դեռևս 1926 թ. դոկտոր Արտաշես Աբեղյանը Բեռլինի համալսարանում հիմնել էր Հայոց լեզվի ամբիոն, որի ստեղծմանը սատարել էին գերմանացի մի շարք արևելագետներ: Օգտվելով նրանց բարյացակամությունից՝ Ս. Աբեղյանը Պ. Ռոբիբախի հետ 1934 թ. Բեռլինում հրատարակում է «Հայկականություն արիականություն» ժողովածուն, որի էջերում տպագրվել են Հանս Հայնրիխ Շրիդերի, Հովհաննես ֆոն Լեերսի, Կարլ Ռոթի, քահանա Գերհարդ Բլինգեի, Երվանդ Շթիրի, Յոզեֆ Ստիրժիկովսկու, Սաքսոնիայի դուքս ֆոն Մաքսի, Ռիխարդ Շեֆերի, Պաուլ Ռոբրբախի հայանպաստ տարաբնույթ հոդվածները, ինչպես նաև հատվածներ գերմանացի ականավոր հայագետներ Յոզեֆ Մարկվարտի, Հայնրիխ Հյուբշմանի, Ֆրանց Ֆինկլի, Կարլ Նոյմանի և միջազգային լայն ճանաչում ունեցող Ֆրիտյոֆ Նանսենի, Յոհաննես Լեփսիուսի՝ Հայաստանին, հայ ժողովրդին և հայագիտության տարաբնույթ հայցերին նվիրված աշխատանքներից: Դրանք բոլորը միասին գալիս էին հավաստելու, որ հայ ժողովուրդը ոչ միայն ունի արիական ծագում, այլև ծանրակշիռ ավանդ է բերել համաշխարհային մշակույթին:

Ժողովածուն, անշուշտ, դրական ազդեցություն է թողնում, քանզի տպագրվելուն պես, գրում է Ս. Սևակը. «Դադարեցան հակահայ յոդվածները թերթերու մեջ, եւ «Armenien» անունը արիական ցեղերու անուանացանկին մեջ առաջին տեղը գրաւեց այբուբենական կարգով: Ես տեսա զայն ոստիկանատան մը պատէն կախուած»¹⁸:

«Հայկականություն արիականություն» գիրքը տպագրվեց 3000 օրինակով և բաժանվեց գերմանական վերնախավին, դեսպաններին, հասարակական, քաղաքական գործիչներին ու կազմակերպություններին, գիտնականներին:

Հսկայական ջանքերի շնորհիվ փոխվեց հայ ժողովրդի նկատմամբ վերաբերմունքը: Ա. Ռոզենբերգը, Թ. Օբերլինդերը (կովկասագետ) արդեն մտորում էին Հայաստանի, հայ ժողովրդի վերաբերյալ նպաստա-

¹⁸ «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1955, 10 հունիսի:

վոր ծրագիր մշակելու և վերնախավին ներկայացնելու մասին, որը, անշուշտ, ենթադրում էր նաև Կովկասում հայկական պետական կազմավորման ստեղծում: Թուրքիայի «չեզոքություն» կոչված քաղաքական դիրքորոշումը արդեն ձեռնտու չէր գերմանական ղեկավարությանը, ուստի մշակվում են Թուրքիայի վրա հարձակվելու ու մասնատելու պլաններ: Ընդամին՝ օրակարգի մեջ էր մտել հայկական կոմիսարիատ կազմավորելու հարցը: Ենթադրվում է, որ նրա սահմանները լինելու էին Սևան-Վան-Ուրմիա լճերի հարակից շրջանները:

Այս պայմաններում, զգալով վերահաս վտանգը, Թուրքիան ավանդական կեղծավոր քաղաքականությամբ փորձում է խուսափել գերմանական ներխուժումից: Ուստի կարողանում է կրկին բարձրացնել հայերի արիական ծագման խնդիրը և 1939 թ. նորից շրջանառության մեջ դնել հայերի ոչ արիական ծագման տեսակետը: Անհրաժեշտություն է դառնում անմիջական շփումների միջոցով փոխել հայերի նկատմամբ ձևավորվող բացասական մտայնությունը, ուստի Գ. Նժդեհի նախաձեռնությամբ Մոֆիայում հանդիպումներ են կազմակերպվում Գերմանիայի դեսպանի հետ, որի խորհրդով էլ Գ. Նժդեհը 1942 թ. վերջերին մեկնում է Բեռլին:

Մինչ այդ Ա. Աբեղյանը 1942 թ. Շտուտգարտում վերահրատարակում է իր վերոհիշյալ գիրքը, իսկ դաշնակցական նշանավոր գիտնական Հայկ Ասատրյանը Գ. Նժդեհի առաջաբանով գրում է «Հայաստան-արիական նախադիրք Առաջավոր Ասիայում» հայերեն աշխատության առաջին հատորը և նախապատրաստում է գերմաներեն թարգմանությունը: Թուրքիայի դեմ ծավալված հայկական հակաքարոզչությունը ավարտվում է նրանով, որ Գերմանիայի կառավարությունը ընդունում է հայերի արիական պատկանելությունը:

Այլևս կասկած չկար, որ թուրքական զառանցանքները հաղթահարվել էին: Գերմանիայում և Եվրոպայի գրավյալ տարածքներում ապրող հայերը ստանում էին վկայագրեր, որոնք հաստատում էին իրենց արիական ծագումը: Միաժամանակ զինվորների համար տպագրվում է «Գերմանացի զինվորներ՝ հայերը ձեր եղբայրներն են» վերնագրով գերմաներեն-հայերեն խոսակցական բառարան-գրուցարան: Այն միաժամանակ զինվորին զգուշացնում էր, որ հայերի նկատմամբ ցանկացած ոտնձգություն, որպես անօրինական գործողություն, ենթակա է քրեական պատասխանատվության:

Բարեբախտաբար այս ամենը տապալեց թուրքական նոր ոճրագործության ծրագիրը, և Եվրոպայում, հատկապես Ֆրանսիայում, Գերմանիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Լեհաստանում բնակվող շուրջ 500.000 հայերը ապահովագրվեցին ոչնչացումից:

Փաստորեն, Բեռլինում հաստատված հայ քաղաքական, կուսակցական գործիչները իրենց փոքրաթիվ ուժերով կարողացան շրջադարձային դեր խաղալ:

Արիականության խնդիրներով զբաղվում էին նաև Բուալիայում: Գերմանացի մեկ այլ հեղինակի «Ձեզ նայում են արիացիները» վերնագրով գրքի երկրորդ հրատարակությունը հարստացվեց հայ ժողովրդի բարեկամ իտալացի գիտնականների հայագիտական հոդվածներով: Գրքի շապիկը ձևավորված էր Հայաստանի և հայոց պետականության խորհրդանիշերով՝ Արարատով և Հայաստանի Հանրապետության զինանշանով:

Հայ ժողովրդի ապագայի շուրջ վերմախտի հետ բանակցությունները շարունակվում էին:

Այսպես, 1942 թ. դեկտեմբերի 15-ին կազմավորվեց Հայոց Ազգային խորհուրդ (նախագահ՝ Արտաշես Աբեղյան, փոխնախագահ՝ Աբրահամ Գյուլխանդարյան, անդամներ՝ Դրո (Դրաստամատ Կանայան), Վահան Փափազյան (Կոմս), Դավիթ Դավիթխանյան, Գարեգին Նժդեհ, Սահակ Տեր-Թովմասյան, քարտուղար՝ Հարություն Բաղդասարյան): Խորհուրդը տպագրում էր «Ազատ Հայաստան» անունով թերթ, որի խմբագիրն էր Ա. Գյուլխանդարյանը, փոխխմբագիրը՝ Գ. Նժդեհը:

Հայ ժողովրդի գոյատևման, հետագա կարգավիճակի հարցերով խորհուրդը բանակցում էր գերմանական վերմախտի հետ՝ հետապնդելով «հայության գլխին կախված՝ հրեաների ճակատագրին արժանանալու շատ իրական վտանգը» վերացնելու, հայ ռազմագերիներին անխուսափելի ոչնչացումից փրկելու, և «Գերմանիայի կողմից Թուրքիա ներխուժելու դեպքում... հայկական ջոկատներով կռուել Թուրքիայի դեմ՝ Հայաստանի անկախությունը վերականգնելու եւ Արեւմտահայաստանն ազատագրելու»¹⁹ ակնկալիքով: Այն գործեց մինչ 1943 թ. նոյեմբեր ամիսը:

Գերմանիայի հետ գրեթե նույն ծրագրով համագործակցում էր նաև Դրոն: Կազմելով Հայկական լեգեոն՝ Դրոն բացառապես հետապնդում էր հայրենիքը ազատագրելու, Թուրքական վտանգը կանխելու նպատակ: Որպես հավելում նշենք, որ Դրոյի շնորհիվ հազարավոր հայ ռազմագերիներ փրկվեցին անխուսափելի ոչնչացումից, ազատվեցին մահվան ճամբարներից՝ ներգրավվելով լեգեոնում: Հետագայում լեգեոնականներից շատերը կարողացան նորից մասնակցել ֆաշիզմի դեմ պայքարին՝ որպես պարտիզանական ջոկատների անդամներ կամ խորհրդային բանակի զինվորներ:

ԽՍՀՄ ժողովուրդներից զինվորական միավորումներ ստեղծելու հարցը 1942 թ. մարտի 28-ին բարձրացրել էր Ա. Ռոզենբերգը հատուկ փաստաթղթով, որտեղ հիմնավորում էր այդ միավորումների կազմավորման անհրաժեշտությունը: Նա առաջարկում էր հավաքագրել հայերի, վրացիների, ադրբեջանցիների և մյուս ազգերի ու ցեղերի ներկայա-

¹⁹ Նույն տեղում, էջ 120-121:

ցուցիչներ՝ շուրջ 6.5 հազար մարդ, որոնք գործելու էին գերմանական հրամանատարության ներքո²⁰:

Ազգային լեգեոնների կազմավորման աշխատանքները սկսվեցին 1942 թ. գարնանը: ԽՍՀՄ տարբեր ազգությունների լիազորված ներկայացուցիչները, գերմանական սպաների ուղեկցությամբ այցելելով համակենտրոնացման ճամբարներ, հավաքագրում էին մահվան սպառնալիքի տակ գտնվող ռազմագերիներին՝ համալրելու իրենց զորամասերը: Ընձեռելով նման արտոնություններ՝ գերմանական վերնախավը չէր կորցնում զգոնությունը: Հ. Գյորինգը իր «Կանաչ թղթապանակում» անվստահություն էր արտահայտում հայերի նկատմամբ, նշում նրանց անբարյացակամությունը գերմանացիների հանդեպ²¹: Նման տեսակետ ուներ նաև Հիտլերը: Կովկասյան ժողովուրդներից զինվորական ստորաբաժանումների ձևավորումը համարելով «արտակարգ վտանգավոր», ֆյուրերը ընդգծում էր. «Ես չեմ վստահում հայերին»²²:

Առաջին ստորաբաժանումը, որի հրամանատարն էր մայոր Հոֆմանը, իր շարքերում ուներ 800 հայ մարտիկ, որոնց հավաքագրել էին լեհական Պուլավի և ուկրաինական Լոխվիցա քաղաքներում: Հայ լեգեոնականների թիվը հասավ շուրջ 25.000 մարդու²³:

Ամենամեծը 100.000-անոց ռուսական ազատագրական բանակն էր գեներալ-լեյտենանտ Ա. Վլասովի հրամանատարությամբ: Ս. Բենդերը և Ե. Կենովալցան ղեկավարում էին ուկրաինական բանակը: Լեգեոններ ունեին նաև լիտվացիները, լատիշները, էստոնացիները և բելոռուսները²⁴:

Հայկական լեգեոնի կազմավորումը թշնամաբար ընդունեց Թուրքիան և Բեռլինի իր դեսպանի միջոցով հայտնեց իր դժգոհությունը:

Ուկրաինայում կազմավորված հայկական զորամիավորումները Գոմել-Խարկով-Ռոստով-Տիխոբեցկ-Արմավիր-Մայկոպ-Պյատիգորսկ ուղղությամբ պետք է հասնեին Հյուսիսային Կովկաս, սակայն ճանապարհին պարտիզանների կողմն անցան սկզբում 100 մարդ, ապա մեկ ջոկատ, և Նևտոգորսկ քաղաք հասավ ընդամենը 900 զինվոր²⁵:

Հայկական ստորաբաժանումներում գործում էր ընդհատակյա կազմակերպություն, որը նախապատրաստվում էր ապստամբության: Սակայն խումբը բացահայտվեց, 33 ղեկավարներ գնդակահարվեցին,

²⁰ Տե՛ս **Розенберг А.** Коричневая папка, էջ 44, 45:

²¹ Տե՛ս <http://avalon.law.yale.edu/imt/12-10-45.asp>, Nuremberg Trial Proceedings Volume 3, «Зеленая папка» Геринга. Եր., 1999, էջ 20:

²² «Документы обвиняют». Выпуск 1. М., 1943, с. 22.

²³ Տե՛ս **Абрамян Э.** Армянский легион вермахта (1941-1945). Եր., 2004, էջ 73, 86: **Арутюнян К.** Вклад армянского народа в победу в Великой Отечественной войне (1941-1945). Եր., 2010, էջ 485:

²⁴ Տե՛ս նույն տեղը:

²⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 4:

շարքային մարտիկներին տեղափոխեցին շինարարական ջոկատ, այլ վայրեր, 550 հոգի նետվեցին համակենտրոնացման ճամբարներ²⁶:

Լոխվիցայի 850 հայ լեզեռնականների կեսը փախավ պարտիզանների մոտ, իսկ մնացածները հեռացան հարավային Ֆրանսիա: Հատկանշական է, որ Ա. Միկոյանի անվան պարտիզանական ջոկատի անձնակազմի մեծ մասը Պուլավիում կազմավորված լեզեռնականներն էին²⁷:

Հայ լեզեռնականների հայրենիքին նվիրվածության, գերմանական բանակի դեմ գործողություններին դրվատանքի խոսքեր են հղել Սևծովյան գորքերում ծառայած գնդապետ, ԽՄԿԿ ապագա գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևը, Կիրովոգրադի մարզի «Գրոզա» (Ամպրոպ) միավորման պատասխանատու քարտուղար Ա. Շապովալովը, Վորոշիլովի անվան պարտիզանական ջոկատի մարտիկ Մ. Պենիչնին: Զինվորական միավորումներում հավաքագրված հայ լեզեռնականները ընդհատակյա պայքար էին մղում ֆաշիստական հորդանների դեմ:

Պատմությունը ցույց տվեց, որ հարկադրաբար ներքաշվելով Երկրորդ աշխարհամարտի հակադիր ուժերի շարքում՝ Հայկական լեզեռնը չդավաճանեց ռուս և խորհրդային միության մյուս ժողովուրդներին՝ իր գործունեությամբ նպաստելով իրեն «վստահված» տարածքներում պարտիզանական, ազատագրական պայքարին:

Անտեսելով այս և բազմաթիվ այլ ապացույցներ՝ պատերազմից հետո ստալինյան խժոռո մեքենայի հարվածներն ուղղվեցին նաև լեզեռնականների դեմ: 1947-1949 թթ. ձերբակալվեցին և 25 տարվա ազատազրկման դատապարտվեցին լեզեռնի 50 մարտիկներ: Նրանց շարքերում էին Եվրոպայի, հատկապես Ֆրանսիայի պարտիզանական պայքարի մասնակիցներ, որոնք արժանացել էին Ֆրանսիայի Հանրապետության շքանշանների և մեդալների:

Հայկական լեզեռնի կազմավորումը պարտադրված քայլ էր: Գերմանիայի հետ համագործակցության անվան տակ այն ապահովում էր հայ ժողովրդի գոյությունը, Խորհրդային Հայաստանի անվտանգությունը:

Բանալի բառեր – *նվաճում, գրավում, կոմիսարիատ, հարձակում, գաղութ, փառք, կայսրություն, պլան, դեկավար, գեներալ*

ОГАНЕС ЗАТИКЯН – *Армянский вопрос в контексте гитлеровской программы колонизации СССР.* – В статье с опорой на немецкие источники раскрывается германская программа закрепощения и колонизации СССР. Указано, к примеру, какие интересы преследовала нацистская Германия на Кавказе и в За-

²⁶ Տե՛ս **Կ. Հարությունյան**, Հայկական լեզեռնը, «Գարուն», 1994, № 7, էջ 70:

²⁷ Տե՛ս նույն տեղը:

кавказье. В частности, речь идёт о судьбах Армении и армянского народа согласно проектам и перспективам, которые разрабатывались в Третьем рейхе.

Ключевые слова: *завоевание, комиссариат, нападение, колония, империя, план*

HOVHANNES ZATIKYAN – *The Armenian Issue in the Context of Hitler’s Program of Colonization of the USSR.* – The article mainly explains Hitler’s program of colonization and enslaving with the help of German sources and by focusing especially on Caucasus themes. It emphasizes the origins of German interests in the region and particularly turns to the content and prospects of developed projects regarding Armenia and Armenian people.

Key words: *achievement, accomplishment, Commissariat, attack, colony, glory, empire, plan, leader, General*

«ԲԱՑԱՐՉԱԿ ԱՆԵՐԵՎՈՒՅԹԻ» ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՈՒՐՁ

ԼԵՈՆԻԴ ԹԵԼՅԱՆ

Դիմավոր բայի և անորոշ դերբայի զուգորդմամբ առաջացող շարահյուսական կառույցը հայերենի շարահյուսության դասագրքերում, զանազան կարգի ուսումնական ու գործնական ձեռնարկներում, հանրամատչելի հրատարակություններում ու հոդվածներում բավական հաճախ է քննարկման առարկա դարձել և այսօր էլ չի դադարում տարակարծիք մեկնաբանությունների առիթ տալ: Տարամիտվող գնահատումները վերաբերում են կառույցի թե՛ շարահյուսական արժեքին, թե՛ դրա՝ ժամանակակից հայերենի կանոնին (նորմին) համապատասխանելու խնդրին: Ստորև կփորձենք ի մի բերել այդ երկու հայեցակետերով կառույցին տրված գնահատականները և կատարել որոշ եզրահանգումներ:

Խոսքը առավելապես վերաբերում է հիշյալ կաղապարի հետևյալ երկու կարգի իրացումներին.

ա) անորոշ դերբայը խնդրառական հարաբերությամբ լրացնում է տարբեր արժեքի դիմավոր բայերի (*ուզում է գնալ, սիրում է նկարել, ձգտում է հասնել(ու), հրաժարվում է հանդիպել(ուց)* և այլն) կամ էլ հիմնականում ածական վերադրով բաղադրյալ ստորոգյալների (*պատրաստ եմ գնալ(ու), ուրախ եմ ծանոթանալ(ու)* և այլն),

բ) անորոշ դերբայը զուգորդվում է եղանակային այլևայլ երանգներ արտահայտող (կարելիական, անհրաժեշտական, գնահատողական և այլն) միադիմի կապակցությունների հետ, որոնց կազմում հանդես է գալիս է բայը՝ որպես հանգույց (*պետք է գնալ, անհրաժեշտ է մեկնել, հարկավոր է զգուշացնել, հնարավոր է հասնել, հաճելի է տեսնել, դժվար է հավատալ* և այլն):

Այս երկու կարգի կառույցներում էլ հիմնական գործողությունն արտահայտվում է անորոշ դերբայով, իսկ դիմավոր բայը կամ միադեմ կապակցություններն ունեն եղանակավորիչ կամ կերպավորող արժեք: Սրանց տարբերությունը, Գ. Ջահուկյանի բնորոշմամբ, այն է, «որ առաջին դեպքում ենթական դիտվում է որպես ակտիվ, երկրորդ դեպքում՝ որպես պասիվ կողմ (հմմտ. «Ես ուզում եմ գնալ» և «Ինձ հարկավոր է գնալ», թեև հնարավոր են արտահայտության հակառակ ձևերը ևս. հմմտ. «Ես պարտավոր եմ գնալ»)»: Սրանց են հարում նաև այն կառույցները, որոնցում անորոշ դերբայը կապակցված է մի բայական հարադրության և նրա հետ կա մ մի ամբողջական կառույց է ձևավորում՝

¹ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 413:

ուղիղ ձևով դրվելով, կա՛մ էլ ընկալվում է որպես հարադրության անվանական մասի հատկացուցիչ՝ դրվելով սեռական-տրական հոլովով (*կարիք չկա խոսել - կարիք չկա խոսելու, հարկ չկա հիշեցնել - հարկ չկա հիշեցնելու, իրավունք ունես տեղեկանալ - իրավունք ունես տեղեկանալու, ցանկություն չունի գնալ - ցանկություն չունի գնալու, հույս ունես քեզ տեսնել - հույս ունես քեզ տեսնելու* և այլն)²: Առանձին է մնում անորոշ դերբայի և *տալ* բայի դիմավոր ձևերի գուգորդմամբ ստացվող կապակցությունը (*Գրել եմ տալիս*)՝ որպես սեռի քերականական կարգի արտահայտության վերլուծական ձև:

Քննության առարկա առաջին կադապարի իրացումները կարելի է խմբավորել նկատի ունենալով գերադաս (դիմավոր) բայի քերականական և իմաստային հատկանիշները³:

1. Դիմավոր բայը ներգործական սեռի է և ուժեղ խնդրառությամբ պահանջում է ուղիղ խնդիր: Անորոշ դերբայն այս դեպքում միշտ ուղիղ ձևով է, գերազանցապես առանց հոդի: Անորոշի դիրքում կարող է հանդես գալ գոյական (կամ դերանուն)՝ ուղղական կամ տրական (հայցական) հոլովով (*սիրում է երգել - սիրում է բանաստեղծություն, սկսեց աշխատել - սկսեց գործը, շարունակում է խոսել - շարունակում է ելույթը, սովորում է կարդալ - սովորում է դասը, մոռացել է զգուշացնել - մոռացել է ընկերոջը* և այլն):

2. Խնդրառու դիմավոր բայը սովորաբար չեզոք սեռի է և բայիմաստով պայմանավորված ուժեղ խնդրառությամբ պահանջում է տրական կամ բացառական հոլովներով ձևավորված խնդիրներ: Գոյական (կամ դերանուն) խնդրի դեպքում նշված հոլովները միակ հնարավոր ձևերն են, մինչդեռ նույն դիրքում անորոշ դերբայը ի հայտ է բերում գործառական երկվություն. այն կարող է դրվել նշված (տրական կամ բացառական) հոլովներով՝ ենթարկվելով խնդրառական կանոնին, կամ էլ դրվել ուղիղ ձևով՝ «չհնազանդվելով» խնդրառու բայի պարտադրանքին: Այսպես. *պատրաստվում է քննության - պատրաստվում է մեկնելու - պատրաստվում է մեկնել, ձգտում է փառքի - ձգտում է հասնելու - ձգտում է հասնել, հակված է զիջումների - հակված է ներելու - հակված է ներել, հրաժարվում է ուսելիքից - հրաժարվում է ուսելուց - հրաժարվում է ուսել, վախենում է հանդիպումից - վախենում է հանդիպելուց - վախենում է հանդիպել* և այլն): Գերադաս դիմավոր բայի խնդրառությամբ թելադրվող տրական կամ բացառական հոլովների փոխարեն ուղիղ ձևով դրված անորոշ դերբայը (*ձգտել է պատկերել, ամաչում է պատասխանել* և այլն) քերականական ավանդույթով հաճախ կոչվում է «բացարձակ աներևույթ» կամ «բացարձակ անորոշ»:

3. Խնդրառու բայը գոյական կամ դերանուն խնդիրների հետ չի կապակցվում և ունենում է միայն անորոշ դերբայի ուղիղ ձևով արտա-

² Այս մասին տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 470:

³ Հմմտ. **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1987, էջ 159:

հայտված լրացում (*համարձակվում է դիմել, աշխատում է չխանգարել, չի կարողանում քնել* և այլն):

Անորոշի և դիմավոր բայի նշված զուգորդումների և առանձնապես «բացարձակ աներևույթ» կոչվածի մեկնաբանություններում առկա զանազանությունները հանգում են հետևյալ երկու հարցերին տրվող պատասխանների տարբերություններին.

ա. շարահյուսական ի՞նչ արժեք ունի հիշյալ կառույցը. այն մեկ միասնական գործառույթ է դրսևորում, թե՞ շարահյուսական տարբեր պաշտոններ կատարող միավորների կապակցություն է,

բ. ժամանակակից հայերենի նորմի տեսակետից ընդունելի՞ է «բացարձակ աներևույթը», թե՞ դրա գործածությունը սխալ և մերժելի պետք է համարվի:

Այս հարցերի պատասխանները կարծես թե տարբեր հարթություններում են և չպետք է խաչաձևվեն. դիտումները, սակայն, ստեղծում են տպավորություն, թե դրանք հաճախ փոխապայմանավորված են լինում. «բացարձակ աներևույթի» գործածությունը մերժելի համարելու «հիմնավորումը» հաճախ դրա շարահյուսական արժեքի գնահատման դժվարությունն է լինում: Փորձենք համառոտ ներկայացնել առաջին հարցի հետ կապված տարբեր տեսակետները:

1. «Դիմավոր բայ+անորոշ դերբայ» կառույցը շարահյուսական մեկ միավոր է բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ. դիմավոր բայը ունի եղանակավորիչ-կերպավորիչ արժեք՝ անկախ սեռից (Ս. Աբրահամյան, Հ. Օհանյան, Վ. Առաքելյան, Գ. Ջահուկյան)⁴: Գ. Ջահուկյանն ընդամին **բարդ ստորոգյալ** է կոչում ոչ միայն անորոշի ուղիղ ձևի, այլև դրա տրական և բացառական հոլովների զուգորդումները դիմավոր բայի կամ բաղադրյալ ստորոգյալի հետ՝ *ուզում է գնալ, պարտավոր է գնալ, կարող է գնալ, պատրաստ է գնալու, դադարում է քայլելուց* և այլն, ինչպես նաև *հարկավոր է գրել, անհրաժեշտ է ասել, պետք է նշել* տիպի անդեմ (միադեմ) կապակցությունները⁵: Վ. Առաքելյանը **բարդ ստորոգյալ** տերմինով կոչում է միայն «անվանական և բայական ստորոգյալների միասնությունից» կազմվածները՝ *կարող եմ, անկարող եմ, ուրախ եմ, մտադիր եմ, պատրաստ եմ, հոժար եմ, անգոր եմ + անորոշ դերբայ*, իսկ դիմավոր բայի և անորոշ դերբայի զուգորդումները անվանում է **բայական բաղադրյալ ստորոգյալ** բացառություն անելով այն դեպքերի համար, որոնցում դիմավոր բայը և անորոշ դերբայն ունեն տարբեր ենթականեր՝ *հրամայում է գնալ, ստիպում է խոսել* և այլն⁶: «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության 3-րդ հատորում անորոշ դերբայի կա-

⁴ Տե՛ս Ս. Աբրահամյան, Հայոց լեզու. Շարահյուսություն, Եր., 2004, էջ 30, Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 159-162, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Ա., Եր., 1958, էջ 139-147, Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 412-415:

⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 412-413:

⁶ Տե՛ս Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 139, 146:

պակցությունները *պետք է, պիտի, անհրաժեշտ է, կարելի է, անկարելի է, անհնար է, կարող է, դժվար է, հեշտ է, ապարդյուն է* և այս կարգի միադիմի ձևերի հետ համարվում են «բաղադրյալ ստորոգյալ անդեմ նախադասությունների համար»⁷:

2. Ներգործական սեռի բայերին զուգադրվող անորոշ դերբայը (*ուզում է գնալ, սիրում է նկարել, սկսում է աշխատել* և այլն) դիմավոր բայի լրացում է՝ ուղիղ խնդիր (Մ. Ասատրյան, Ս. Գյուլբուդադյան)⁸: Չեզոք սեռի բայերին լրացնող՝ տրական և բացառական հոլովով անորոշ դերբայները (*պատրաստվում է գնալու, խուսափում է հաղիպելուց*) համապատասխանաբար հանգման և անջատման խնդիրներ են, իսկ սրանց՝ անորոշի ուղիղ ձևերով տարբերակները (*պատրաստվում է գնալ, խուսափում է հանդիպել*) մեկ միավոր են՝ բաղադրյալ ստորոգյալ: Այս մոտեցումը հստակորեն ձևակերպված է Ս. Գյուլբուդադյանի կողմից. Մ. Ասատրյանը շարահյուսության բուհական դասագրքում անորոշի ուղիղ ձևով այս կառույցների շարահյուսական դերի մասին որոշակի դիրքորոշում չի արտահայտում, սակայն ավելի վաղ հրատարակած մի աշխատության մեջ այդ կառույցները միանշանակորեն գնահատում է որպես բաղադրյալ ստորոգյալներ: Նա գրում է . «...«Ձգտում է ընդունվել», «Պատրաստվում է մեկնել», «Վախենում է ասել», «Ամաչում է ընդունվել» տիպի կապակցությունների մեջ անորոշ դերբայը զուրկ է հոլովի քերականական կարգից և դիմավոր բայի հետ կազմում է մեկ միասնական բաղադրյալ ստորոգյալ»⁹: Այսպես կոչված պարտավորական, կարելիական, անհրաժեշտական և այս կարգի եղանակային իմաստներ արտահայտող *պետք է, անհրաժեշտ է, կարելի է, հաճելի է, տհաճ է* և նման այլ ձևերի ու անհող անորոշ դերբայի կապակցություններում Մ. Ասատրյանը, հետևելով Աբեդյանին, դերբայը համարում է ենթակա, միադիմի կապակցությունը՝ ստորոգյալ¹⁰:

3. «Դիմավոր բայ + անորոշ դերբայ» կառույցի բոլոր իրացումները շարահյուսորեն վերլուծելի են՝ անկախ դիմավոր բայի սեռից և անորոշի հոլովական ձևավորումից (Ռ. Իշխանյան, Հ. Հարությունյան, Ա. Պապոյան և ուրիշներ)¹¹: Բնական է, որ ներգործական սեռի բային լրացնող անորոշը պետք է համարվի ուղիղ խնդիր, տրական և բացառական հոլովներով դրվածները՝ անուղղակի խնդիրներ, իսկ թե ինչ շարահյուսական պաշտոններ են կատարում «բացարձակ աներևույթը» կամ

⁷ Մ. Աբրահամյան և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 161:

⁸ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 159, Ս. Գյուլբուդադյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1988, էջ 110:

⁹ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Եր., 1973, էջ 243:

¹⁰ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 163:

¹¹ Տե՛ս Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Եր., 1986, էջ 120-121, 220-221, Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1983, էջ 196, Ա. Պապոյան, Ստորոգյալի ըմբռնումը հայ քերականագիտության մեջ, ԲԵՀ, 1992, հ. 2, էջ 118, Գ. Ներսիսյան, Հայերենի բաղադրյալ ստորոգյալի արդի ըմբռնումը, ԲԵՀ, 2002, հ. 2:

միայն դերբայառու դիմավոր բայերի լրացումները (*կարողանում է գնալ* տիպի), սովորաբար մնում է առկախ (Ռ. Իշխանյանը դրանք *անորոշ խնդիր* է կոչում): Մի բան հստակ է. այս տեսակետին հետևողները բացառում են կառույցը մեկ ամբողջական միավոր՝ ստորոգյալ համարելու վարկածը և փորձում են բերել հակադիր փաստարկներ: «Անորոշ դերբայով խնդիր (լրացում) պահանջող բայերը, - գրում է Հ. Հարությունյանը, - կարող են գործածվել ոչ միայն դիմավոր, այլև անդեմ ձևով, հետևաբար բացառվում է կառույցը բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ կոչելու հանգամանքը...., օրինակներ. *Առաջարկելով օգտագործել այն հասարակական նպատակների, Պատրաստվելով ընդունել մոտեցող նավին, Չուզենալով նրա մտորումները խանգարել, Աշխատելով զսպել բարկությունը՝ նա հարցրեց* և այլն»¹²: (Այս դրույթը հետագայում վկայակոչում է նաև Գ. Ներսիսյանը)¹³: Այսօրինակ հիմնավորումը, սակայն, տարակուսանք է հարուցում. չէ՞ որ բերվող դերբայական դարձվածները դիմավոր բայով կառույցների փոխակերպներ են: Նման մոտեցմամբ կարելի է ժխտել բաղադրյալ ստորոգյալի գաղափարն ընդհանրապես, քանի որ դրանց վերադիրները ևս փոխակերպման արդյունքում կարող են դառնալ անդեմ բայի լրացումներ (հմմտ. *Դարձավ ուսուցիչ – ուսուցիչ դառնալը, համարվում է ուսանող – ուսանող համարվող, նշանակվեց տնօրեն – տնօրեն նշանակված* և այլն): Նույնքան տարակուսելի է նաև հետևյալ պնդումը. «...Եթե **բայ + անորոշ դերբայ** կառույցը համարվում է մեկ միասնական բաղադրյալ ստորոգյալ, նախադասության մեկ անդամ, ապա անորոշ դերբայն առանձին հարցի չպետք է պատասխանի»¹⁴: Բայց չէ՞ որ բաղադրյալ ստորոգյալի վերադիրը նույնպես պատասխանում է առանձին հարցի. դարձավ բժիշկ – ի՞նչ դարձավ, աշխատում է որպես տնօրեն – որպես ի՞նչ է աշխատում, նրան ընկեր են համարել – ի՞նչ են համարել և այլն: Ի դեպ, Վ. Քոսյանը ևս դիմավոր բայի և հաջորդող անհող անորոշ դերբայի կապակցությունը շարահյուսական մեկ միավոր է համարում՝ դրանց միջև չտեսնելով խնդրառական հարաբերություն: «...Ուզում է մեռնել, փորձեց աշխատել այլևս սովորական բառակապակցություններ չեն, որտեղ դիմավոր բայն այլևս լրացյալ չի դիտվում, այլ երկուսը միասին շարահյուսական մի ամբողջություն են: ...Մակայն պետք է նշել, որ մի շարք բայերի մոտ անորոշ դերբայը հայցականաձև չի լինում, և տվյալ բայի մոտ անորոշ դերբայն այլևս բայական բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչ չէ, այլ ինքնուրույն խնդիր: Այսպես, գործածվում են մի կողմից՝ *շտապեց* կարծիք *հայտնել*, մյուս կողմից՝ *շտապեց* կարծիք *հայտնելու, ձգտում է* բարձր արդյունքների *հասնել* և *ձգտում է* բարձր արդյունքների *հասնելու* և այլն: Երկրորդ դեպքում դրսևորվում է բայական բառակապակց-

¹² Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 193:

¹³ Տե՛ս Գ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 139:

¹⁴ Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 206:

ցություն, որտեղ լրացյալ բառը հանդես է գալիս իր խնդրառական հատկությամբ (մինչդեռ առաջին տեսակի կառուցվածքում այն խնդրառական հատկություն չունի, կամ ինչպես հին քերականներից ոմանք էին ասում՝ խնդիրն արգելվել է)»¹⁵:

Ամփոփելով այս հատվածը՝ ուզում ենք նշել, որ մեզ ավելի համոզիչ ու տրամաբանական և ուսուցողական առումով էլ նպատակահարմար է թվում դիմավոր բայի և դրան հետադասված ուղղականաձև անհոդ անորոշ դերբայի կապակցությունը համարել շարահյուսական մեկ միավոր՝ ստորոգյալ (**բաղադրյալ** կամ **բարդ** անվանումը տվյալ դեպքում սկզբունքային չենք համարում): Այս դիրքում և այսպիսի ձևավորմամբ անորոշ դերբայը, կարծում ենք, դրսևորում է իր բայական բնավորությունը, պետք է ընդունի *ի նչ անել* հարցը: Միայն դերբայի հետ զուգորդվող բայերի դեպքում (*աշխատում է, կարողանում է, դժվարանում է, համաձայնում է, համարձակվում է, խորհուրդ է տալիս, հորդորում է* գնալ) անորոշի հոդով կամ թեքված ձևեր հնարավոր չեն, և կառույցի՝ մեկ ամբողջական միավոր համարելը հավանաբար այլընտրանք չունի: Տրական և բացառական հոլովներով, ինչպես նաև հոդ ունեցող ուղղականաձև անորոշ դերբայների և դիմավոր բայերի կապակցությունները (*սկսում է նվազելը, պարաստվում է մեկնելու, հրաժարվում է խոսելուց, իրավունք ունի արտահայտվելու* և այլն) շարահյուսորեն վերլուծելի են. անորոշ դերբայը խնդրի կամ հատկացուցչի պաշտոն է կատարում, կարող է պատասխանել նաև *ի նչ(ը), ի նչի(ն), ի նչից* հարցերին՝ դրսևորելով իր անվանական բնավորությունը: Մրան կարող է նպաստել նաև անորոշի՝ դիմավոր բային նախորդող դիրքը (*նկարել (ի նչ) է սիրում*). շարադասության փոփոխությունը տվյալ դեպքում շարահյուսական նշույթի արժեք ունի: Երևի ճիշտ կլինի նման մոտեցումով գնահատել նաև *պետք է, անհրաժեշտ է, հնարավոր է, կարելի է, հաճելի է, ցանկալի է + անորոշ դերբայ* կապակցությունները՝ դիտարկելով դրանք որպես միակազմ նախադասություններ: Այս դեպքում էլ անորոշ դերբայի հոդով կիրառությունները (*խոսելն անհրաժեշտ է, ինձ պետք է քո գնալը* և այլն) միանշանակորեն ենթակայի պաշտոն են կատարում, մինչդեռ այդպիսիք չեն կարող համարվել դրանց հետադաս անհոդ կիրառությունները. այստեղ ևս անորոշը գերազանցապես իր բայական բնույթն է դրսևորում: Ասվածը կարող է հիմնավորվել թեկուզ և նրանով, որ այս դիրքում հանդես եկող բազմակի անորոշ դերբայները կապվում են եզակի թվով դիմավոր բայերի հետ, ինչը հակասում է ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության կանոնին (հմմտ. *մի կողմից՝ Անհրաժեշտ է տեսնել նրան և վերցնել գրքերը, Կարելի է գնալ և անձամբ համոզվել, մյուս կողմից՝ Բնձ անհրաժեշտ են քո ներկայանալը և ելույթ ունենալը, Նրա նվազելը և երգելը հաճելի էին մեզ*):

¹⁵ Վ. Քոչյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1975, էջ 461:

Ինչևէ: Այժմ ժամանակն է անդրադառնալ քննության առարկա կառույցի գնահատման վերևում արդեն հիշատակված մյուս հայեցակետին, որն ավելի շատ ոճաբանության ոլորտին է առնչվում: Խոսքը վերաբերում է բացարձակ աներևույթին տրվող գնահատականներին ժամանակակից հայերենի շարահյուսական նորմի (կանոնի) դիրքերից:

Նախընթաց շարադրանքում վկայակոչված աշխատությունների մեծ մասում, անկախ կառույցի քերականական – կառուցվածքային բնութագրումներից, լռելյայն կամ հատուկ շեշտադրմամբ ընդունվում է հայերեն խոսքի մեջ դրա գործածության մեծ հաճախականությունը, բերվում են բազմաթիվ օրինակներ հայ դասական և ժամանակակից գրականությունից, նշվում է դիմավոր բայերի հետ անորոշի ուղղականաձև կիրառությունների գնալով ավելի տարածվելու միտումը: Հ. Հարությունյանը բերում է նաև վիճակագրական տվյալներ. «Պատրաստվել բայը (նաև նույնարմատ *պատրաստ* ածականը) առնում է տրականով լրացում (քննության, քննելու, ելույթի, ելույթ ունենալու, վազելու, վազքի): Մեր 18 օրինակներում այն հավասարաչափ առել է անորոշ դերբայի ուղղական և տրական հոլովներ: Բայ+անորոշ դերբայ կառույց պարունակող 458 նախադասություններից միայն 56-ում է, որ անորոշ դերբայն առնված է տրական և բացառական հոլովներով, այսինքն՝ հարաբերությունը 402/56 է: ...Տարբերակային ձևեր ունեցող բայերը գոյականով լրացում առնելիս կանոնավորապես պահանջում են տրական և բացառական հոլովներ, սակայն երբ գոյականի փոխարեն գործածվում է անորոշ դերբայ, հոլովառությունը տալիս է տատանումներ՝ հոգուտ ուղղականի: Նշանակում է, սա նկատելի միտում է»¹⁶: Այս միտումը Հ. Հարությունյանը բացատրում է համաբանության գործոնով. «Դա լեզվում գործող մի օրինաչափության արտահայտություն է, այն է՝ միօրինակության ձգտման, նմանակության: Քանի որ անորոշ դերբայի ուղղականով լրացումներ առնող բայերի քանակը բացարձակորեն շատ է տրականով և բացառականով լրացումներ առնող բայերից, ուստի նմանակությամբ ոչ ուղղականով լրացում առնող բայերի լրացումն էլ առնվում է ուղղականով, ուղիղ ձևով»¹⁷: Սա տրամաբանական փաստարկում է, թեև քերականական այլ աշխատանքներում անորոշի ուղղականաձև կիրառությունները (սպասելի տրականի կամ բացառականի փոխարեն) համարում են օտար լեզուների (հիմնականում ռուսերենի) կամ գրաբարի ազդեցության հետևանք: Այս տեսակետը ձևակերպել է Մ. Աբեղյանը անցյալ դարասկզբին և կրկնվել հետագա հեղինակների կողմից. «Անորոշ դերբայն իբրև բայանուն իր հոլովով կախված է խնդրառու բառից. բայց երբ այս դերբայն անհոդ է, հաճախ տրական և հայցական հոլովներն իրար հետ շփոթվում են գրաբարի և օտար լեզուների ազդեցությամբ: Իբրև ընդհանուր կանոն պետք է իմանալ, որ անո-

¹⁶ Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 204:

¹⁷ Նույն տեղում, էջ 206-207:

րոշ դերբայը նույն հոլովով է դրվում, ինչ հոլովով որ դրվում է ոչ-դերբայ խնդիրը...»¹⁸: Սա թերևս ներդաշնակում է Աբեղյանի՝ անորոշ դերբայը գոյական համարելու տեսակետին: Այսօրվա լեզվական վիճակը, այնուամենայնիվ, թույլ է տալիս արձանագրել, որ Աբեղյանի նշած «ընդհանուր կանոնից» շեղումներն այնքան են տարածված, որ հիմք կարող են դառնալ մի այլ օրինաչափության հաստատման: Դա այն է, որ, անկախ օտար ազդեցության գործոնից, անորոշի ուղղականաձև կիրառությունները խորթ չեն հայոց լեզվի ոգուն և կառուցվածքին, դրանցում գերակշռում է անորոշի բայական էությունը, ինչը հատուկ է նաև ռուսերենին և այլ լեզուների: Հայերենի անորոշ դերբայը յուրահատուկ է նրանով, որ հավասար չափով ունի նաև անվանական բնույթ՝ արտահայտված առաջին հերթին հոլովի քերականական կարգի միջոցով: Բացարձակ աներևույթի լեզվական էությունն այս առումով բավական հիմնավոր մեկնաբանության է արժանացել Մ. Ասատրյանի հիշյալ ուսումնասիրության՝ անորոշ դերբային նվիրված հատվածում: Որոշակի թերահավատություն արտահայտելով բացարձակ աներևույթի գոյությունը հայերենում օտար լեզուների ազդեցությամբ բացատրելու արեղյանական դրույթի նկատմամբ՝ լեզվաբանը անորոշի ուղիղ և թեք ձևերով կառույցները համարում է շարահյուսական համանիշներ, բերում է տասնյակ բնագրային օրինակներ և բացարձակ աներևույթի մասին էլ գրում է. «...հենց այն բանը, որ նա (բացարձակ աներևույթը – Լ. Թ.) իր հոլովական ձևով կախված չէ խնդրառու բառից, նշանակում է նրա մեջ սուկ դրսևորված է գործողության, ընթացքի իմաստ. անորոշ դերբայն այդ դեպքում չի արտահայտում բայանվանական նշանակություն, հետևաբար և նրա մեջ չկա առարկայական իմաստ: Բացարձակ աներևույթը իր այս էության, այսինքն՝ բայական էության համապատասխան՝ պատասխանում է միայն *ի՞նչ անել* հարցին, բայց ոչ երբեք *ի՞նչ* հարցին, օրինակ՝ նա ձգտում է *ի՞նչ անել* – ընդունվել, պաշտպանել, դաստիարակել, հասնել. Ամաչում է *ի՞նչ անել* – ասել, խոստովանել, հանդիպել, տեսնել, և այլն»¹⁹: Թե՛ այս և թե՛ բացարձակ աներևույթի շարահյուսագիտական տարբեր աշխատություններում եղած նկարագրությունները, կառույցի համատարած գործածությունը գրողների, մտավորականության խոսքում արդյոք հիմք չե՞ն տալիս ասելու, որ գործ ունենք հայերենի շարահյուսական կանոնի մեջ արդեն իսկ արմատ նետած կառույցի հետ՝ անկախ իր «բնիկ» կամ «օտարածին» լինելուց: Այնուամենայնիվ, մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են և շարունակում են արտահայտվել տեսակետներ, թե բացարձակ աներևույթը հայերենին խորթ, սխալ և մերժելի կառույց է: Ստորև ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Հայերենագիտության մեջ ստորոգյալի մեկնաբանությանը նվիրված

¹⁸ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 469:

¹⁹ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, էջ 242-243:

իր մի հոդվածում Ա. Պապոյանը, առարկելով Վ. Առաքելյանի կողմից բարդ ստորոգյալ համարվող միավորի ըմբռնմանը, գրում է. «...Այսպես «Անգոր էր հասկանալ» և «Ուրախ եմ ծանոթանալ» նախադասությունները համարված են ամբողջովին մեկական բարդ ստորոգյալներ, մինչդեռ սրանք սխալ խնդրատեսակի հետևանք են. պետք է լինեն «Անգոր էր հասկանալու» և «Ուրախ եմ ծանոթանալու», այսինքն՝ սովորական բաղադրյալ ստորոգյալներ (*ուրախ եմ, անգոր էր*)՝ համապատասխան լրացումներով՝ դրված անորոշ դերբայի սեռական-տրական հոլովով:

Ինչ վերաբերում է բերված բնագրային վկայություններին (Շիրվանզադեից ու Շաթիրյանից), թեև դրանք տարածված են, սակայն ակնհայտ օտարաբանություններ են, ռուսերենից պատճենման արդյունք (*рад познакомиться*), ուստի և մերժելի են: **Բնավ կարիք չկա դրանք օրինականացնել, վրան էլ տեսություն մշակել**»²⁰ (ընդգծումը մերն է – Լ. Թ.): Քաղվածքի վերջին նախադասությունը ընդգծեցինք ուշադրություն հրավիրելու համար այն փաստի վրա, որ հենց այստեղ էլ մեծարգո լեզվաբանն ինքը գործածել է իր իսկ մերժելի համարած «օտարաբան» կապակցությունները (*կարիք չկա... օրինականացնել... մշակել*), այնքան սովորական են դրանք հայերեն խոսքում:

«Հայ լեզուն և մեր խոսքը» գրքում, որ արևելահայերենի շատ օգտակար գործնական մի ուղեցույց է, Պ. Բեդիրյանը բացարձակ աներեվույթի գործածությունը համարում է «մեղանչում հայերենի օրենքի դեմ», և ավելացնում, որ «...մեղանչումներն էլ շատ, շատ են, շատերի բանավոր ու գրավոր խոսքի մեջ»²¹: «Հետաքրքրականն այն է, - գրում է լեզվաբանը, - որ լեզվին անգամ վատ տիրապետող մեկը երբեք «աշխատանք հրաժարվել» կամ «պատասխան խուսափել» և այլն չի ասի: Բայց հենց որ *աշխատանք* գոյականի փոխարեն *աշխատել*-ն է գործածում կամ *պատասխան*-ի փոխարեն *պատասխանել*-ը, հայերենի օրենքի դեմ մեղանչում է»²²: Ահա հայ մամուլից քաղված տասնյակ այդ կարգի օրինակներից մի քանիսը. «*Լիազորված է երկու համալսարանների գործակցության հարցերով զբաղվել*», «Նա *համաձայն է* պաղեստինցիներին նաև մի շարք զիջումներ *անել*», «Երբեք *չի վախեցել* ճշմարտությունը խոսակցի երեսին *ասել*», «Սրբապղծություն կլինի...», եթե մենք *հրաժարվենք* մեր խաչը *կրել*» և այլն: Բոլորն էլ միանշանակ սխալ է համարում և այդ կարգի սխալներից խուսափելու գործնական միջոցներ է առաջարկում. «...Եթե բայի հետ *ինչի՞ց* հարցն եք տալիս, ուրեմն նրա կողքին *-ելուց, -ալուց* ձևը (անորոշ դերբայի բացառականը) դրեք», «...Եթե բայի հետ *ինչի՞ն* հարցն եք տալիս, ուրեմն նրա կողքին *-ելու, -ալու* ձևը (անորոշ դերբայի տրականը) դրեք»²³: Խնդրառական օրինաչափությունն, իհար-

²⁰ Ա. Պապոյան, նշվ. աշխ.:

²¹ Պ. Բեդիրյան, Հայ լեզուն և մեր խոսքը, Եր., 1999, էջ 131:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, էջ 135:

կէ, ստույգ ներկայացված է, բայց հանիրավի անտեսված չէ՞ արդո՞ք անորոշ դերբայի բայական էությունը (*ի՞նչ անել* հարցն առնող):

Այս մոտեցումը իր արտահայտությունն է գտել նույնիսկ դիմորդներին հասցեագրվող շտեմարանում (բարեբախտաբար քննական թեստեր չի թափանցել). ահա այդպիսի առաջադրանքի օրինակ.

«4. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա»: Հարցի ճիշտ պատասխան է համարված հետևյալը. «*Մենք խուսափում էինք նրան որևէ հարց տալ, որովհետև համոզված էինք, որ կխաբի*»²⁴:

Բացարձակ աներևույթի գործածությունը հայերենի համար անթույլատրելի շեղում է համարում նաև հարցին առնչվող ամենաթարմ հրապարակման հեղինակ Դ. Սաքայանը: Կառույցի տարածված լինելը նա բացատրում է մեզանում լեզվաբանական գիտության թերացումով: «Բավական է մի հայացք նետել մեր լեզվում բայերի արժույթների իրացման այսօրվա եղանակներին, և կհամոզվենք, թե որքան ետ է մնացել մեր կիառական լեզվաբանությունը»²⁵ - գրում է նա: Հետաքրքիր է, որ իր կողմից եղանակավորող անվանվող բայերի (*ուզում եմ, կարող(անում) եմ, սկսում եմ* և այլն) և անորոշ դերբայի կապակցությունները նա բաղադրյալ ստորոգյալ է համարում. անորոշն այստեղ խնդիր չի համարվում և պատասխանում է միայն *ի՞նչ անել* հարցին, իսկ որպես բացարձակ աներևույթ (ինքն այս տերմինը չի գործածում) հանդես եկող անորոշի ճիշտ ձևը որոշելու համար իբրև ստուգիչ հարց ընդունվում է միայն *ի՞նչ-ը (ինչի՞ց է նա հրաժարվում – նա հրաժարվում է ծխելուց)*. *ի՞նչ անել* հարցն այս դեպքում, չգիտես ինչու, բացառվում է: Համենայն դեպս մենք համաձայն չենք Դ. Սաքայանի այն եզրահանգմանը, թե «...պարզորոշ է, որ այսօր «պատրաստ եմ գնալ» տիպի նախադասությունները հայոց լեզվի տրամաբանության մեջ որևէ հենարան չունեն»²⁶:

Կարևոր ենք համարում անդրադառնալ հոդվածի հեղինակի ևս մի նկատառման: «Սխալների այս անսանձ տարածումը,- գրում է նա,- ավելի է խորացնում այն անջրպետը, որ առանց այն էլ գոյություն ունի մեր լեզվի երկու ճյուղերի՝ արևելահայերենի և արևմտահայերենի միջև լեզվական որոշ մակարդակներում: Այս անգամ կարծես հերթը հասել է շարահյուսությանը...»²⁷: Բացարձակ աներևույթի կիրառության մա-

²⁴ «Հայոց լեզու և գրականություն, 2012 թ. պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարան», մաս 4, էջ 101:

²⁵ Դ. Սաքայան, Խնդրառության մի քանի հարցեր, Ջահուկյանական ընթերցումներ, Եր., 2014, էջ 180:

²⁶ Նույն տեղում, էջ 181-182: Ի դեպ, մենք համամիտ ենք Դ. Սաքայանի հետ, երբ նա նույն հոդվածի երկրորդ մասում անդրադառնում է *որպեսզի* շաղկապի օտարաբան կիրառություններին (*ուզում եմ, որպեսզի... կարևոր է, որպեսզի...* և նման կառույցներում): Սակայն կարծում ենք, որ սրանք իրենց կիրառության ոլորտի առումով (տարածված են հատկապես մամուլում և քաղաքական գործիչների խոսքում) համեմատելի չեն բացարձակ աներևույթի հետ, մնում են որպես լեզվական կանոնի կողմից առայժմ գոնե չյուրացված և լեզվական ցածր ճաշակի արտահայտություններ են:

²⁷ Նույն տեղում, էջ 185:

սին այսպիսի պնդում անելը հավանաբար ճիշտ չէ. այս կառույցը հավասարապես, գուցե և ավելի մեծ չափով, տարածված է նաև արևմտահայերենում (և այս դեպքում բնականաբար ավելորդ է խոսել ռուսերենի ազդեցության մասին): Ահա մի քանի օրինակ Պարոնյանից. «Խորեն չուշացավ հայտնել, թե յուր ծնունդովն բանաստեղծ մ' ալ ավելցավ ազգին և ոչ թե փորձանք» (Երկեր, Եր., 1969, էջ 22 «Երբեք նպատակ ունեցած չենք ո՛չ փափուկ ստամոքսի տեր ընթերցողներուն մարտողությանը ծառայել և ո՛չ ալ քիչ կերակուր ուտողներուն ախորժակը բանալ» (էջ 21), «Ինք ամեն ճիգ կըստիեր դներու գոյությունը հաստատել յուր գոյությամբը» (էջ 49), «Կնքահայրն, որ վարժված էր զավակին տալ ինչ որ ուզեր, չհամարձակեցավ սանին խնդիրքը մերժել» (էջ 96), «Ըստ քաղաքավարության ոչ ոք իրավունք ունի բողոքել իրեն ուղղված այն հայեությունաց դեմ, որք առաջին ձայնով չեն երգվի», «Կիներեն շատերն այն ատեն միայն կհագվին, երբ դուրս ելնել կամ հյուր ընդունիլ հարկ ըլլա» (էջ 12), «Եթե երբեմն բամբասանք ընել պետք ըլլա՝ խիստ քաղաքավարությամբ կը վարվին» (էջ 12) և այլն: Ավելորդ չէ նշել նաև, որ արևմտահայերենում տարածում ունի անորոշ դերբայի ուղղականաձև կիրառությունը նպատակի պարագայի պաշտոնով, մի բան, որ արևելահայերենում սակավադեպ է և ոչ նորմատիվ: Օրինակ. «Հոովմեն հոս դրկված էր մոլորյալ և հերետիկոս քրիստոնյաները համոզել, որ ս. պապին հողաթափը համբուրեն» (49), «Եվ ալիք մը թևը բացած կը վազե / գրկել ափունքն իդձիս ոսկե ավազե» (Մեծաբենց):

Առարկելի է նաև մի այլ հրապարակման մեջ տեղ գտած այն դիտարկումը, թե անորոշի ուղղականաձև կիրառությունները հատուկ են ռուսական կրթություն ունեցողների խոսքին²⁸: Ուզում ենք բերել ևս մի քանի օրինակներ, որոնց հեղինակների (Հ. Թամրազյան, Վ. Փափազյան) հայոց լեզվին անթերի տիրապետելու փաստը կասկած չի կարող հարուցել. «Թումանյանը ձգտել է բնականի սահմաններում պահել երեխայի հոգեբանությունը, հայացքն ու միտքը», «...Նա ձգտում է պատկերին հաղորդել շարժուն երանգ, տողերին տալ կենդանի, ապրող տարերքի շունչը»²⁹, ընդհանրապես «ձգտել» բային զուգադրվելիս անորոշը գրեթե առանց բացառության ուղղականաձև է կիրառվում :

«Հանդիսատեսը ի բնե հակամետ է սեփականացնել իր պաշտամունքի առարկային, որով ցանկալին դառնում է սովորական»³⁰ «Մարդն անզոր է կատարվածը դարձնել չկատարված» (ն. տ., 44), «Մարդկային անթիվ զգացմունքների շարքում սերն է միայն, որ ընդունակ է արտահայտվել առանց խոսքի» (ն. տ., 90), «Երբ տարիների վայրէջքը ոտք դրած մի կին շատ բնական ցանկություն ունի ամեն միջոցով կառչել իրենից հեռացող երիտասարդության փեշերից, ներելի է», «Եթե

²⁸ Տե՛ս Հ. Զաքարյան, Բացարձակ աներևոյթի և համանման կառույցների զուգաձևերը հայերենում, «Չափանշանական ընթերցումներ», Եր., 2007, էջ 86:

²⁹ Հ. Թամրազյան, Հովհաննես Թումանյան, Եր. 1995, էջ 100, 109 :

³⁰ Վ. Փափազյան, Աֆորիզմներ, Եր., 2003, էջ 85:

բախտի բերմամբ մի Եվայի թոռ *դատապարտված է անհաղորդ մնալ* ամուսնական կյանքին, թող իրեն օրհորդ կարծի...» (ն. տ., 100):

Այս և նմանատիպ բազմաթիվ այլ օրինակները, կարծում ենք, նույնքան բնական են այսօրվա հայերենում, որքան և սրանց՝ անորոշ դերբայի թեքված ձևերով տարբերակները: Երևի մասամբ բացարձակ աներևույթից խուսափելու չափազանցված ճիգի արտահայտություն են այն ոչ սակավաթիվ սխալները, որոնցում անորոշը տրականի ձևով է դրվում՝ ուղղականի փոխարեն (թույլ եմ տալիս գնալու (փխ. գնալ), պարտավորվում եմ ավարտելու (փխ. ավարտել) և այլն): Ահա մի օրինակ գիտական գեկուցումից. «...Նրանց արտոնել են առանց մաքսի առևտուր անելու, վերակացու ընտրելու»: Հետևյալ օրինակներն էլ քաղել ենք Ազգային ժողովի փոխխոսնակի խոսքից. «Պարո՛ն նախարար, շարունակե՛ք պատասխանելու», «Նախագահը խնդրել է վարչապետին շարունակելու իր պաշտոնավարությունը»:

Նման կառույցները, իրոք, խոտելի են և անհանձնարարելի, մինչդեռ «բացարձակ աներևույթը», ինչպես փորձեցինք ցույց տալ, չի հակասում արդի հայերենի կանոնին և պետք է ներկայացվի որպես բայական խնդրառության մի օրինաչափ դրսևորում:

Բանալի բառեր – *անորոշ դերբայ, բաղադրյալ ստորոգյալ, «բացարձակ աներևույթ», լեզվական նորմ (կանոն), խնդրառություն*

ЛЕОНИД ТЕЛЯН – К интерпретации конструкции «личный глагол+инфинитив». – Конструкция «личный глагол+инфинитив» неоднозначно оценивается специалистами как с точки зрения её грамматической природы, так и в аспекте соответствия нормам современного армянского языка.

В статье рассматриваются различные подходы к интерпретации данной конструкции и предлагаются некоторые выводы и обобщения.

Ключевые слова: *инфинитив, сложное сказуемое, «абсолютный инфинитив», языковая норма, управление*

LEONID TELYAN – On Various Interpretations of the Structure “Finite Verb+ Infinitive”. – The article deals with the various interpretations of the structure “Finite Verb+Infinitive” in contemporary Armenological studies.

All the pros and contras discussed in a wide range of Armenological research works concerning the topic have been analyzed from the perspective of both its syntactic function and its correspondence to the normative usage.

Key words: *infinitive, compound predicate, “the infinitive absolute”, language norm, government*

**ԻՎԱՆԵ ՇԻՂԱԿԱԶԵՆ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ**

ԲԱԳՐԱՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Անվանի հայերենագետ Իվանե Շիլակաձեի գիտական ժառանգության մասին մասնագիտական գրականության մեջ եղած տեղեկությունները, առավել ևս՝ ըստ էության գնահատականները բավարար չեն:

Այստեղ հիմնականում կանդրադառնանք Իվանե Շիլակաձեի՝ արդի արևելահայերենի խոնարհման համակարգին նվիրված ուսումնասիրությանը¹, որը եղել է նրա դոկտորական ատենախոսությունը, մասամբ նաև՝ հայոց լեզվի քերականությանը նվիրված բուհական դասագրքին²:

Շուրջ հիսուն տարի առաջ լույս տեսած աշխատության հեղինակի մասին ակադեմիկոս Գուրգեն Մևակը՝ խմբագիրը, գրել է. «Հարգարժան հայագետի այս նոր հետազոտությունը մտքերի աշխույժ բախում կառաջացնի իր կոնկրետ առաջարկություններով ու տեսական դրույթներով և օբյեկտիվորեն կնպաստի հայ քերականական մտքի հետագա զարգացմանը»³:

Ցավոք, գիտնականի կանխատեսումը մասամբ իրականացավ, քանի որ մինչ օրս Ի. Շիլակաձեի առաջ քաշած տեսական դրույթների կամ թռուցիկ անդրադարձ է եղել, կամ մասնագետները բավարարվել են օգտագործած գրականության ցանկում նշելով:

Ժամանակին հայտնի հայերենագետն ամենայն գիտական խորությամբ քննել է արդի գրական արևելահայերենի խոնարհման համակարգին վերաբերող այնպիսի առանցքային հարցեր, որոնց վերաբերյալ մինչև օրս էլ կան տարաձայնություններ: Դրանք են եղանակի, ժամանակի, հաջորդականության, կերպի քերականական կարգերը:

Ի. Շիլակաձեն սրանք քննել է՝ հիմնվելով ակադեմիկոս Ակակի Շանիձեի շարքի տեսության վրա: Բայց ինչպես ինքը՝ Ի. Շիլակաձեն է զգուշացնում, այդտեղից օգտագործել է միայն ընդհանուր լեզվաբանության մեջ ընդունված հիմնադրույթներն ու սկզբունքները, որոնց վրա է խարսխված շարքի տեսությունը, և վրացերենին հատուկ որևէ

¹ Տե՛ս Ի. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, «Լեզվի և ոճի հարցեր», II, Եր., 1964, էջ 156-292:

² Տե՛ս Ի. Շիլակաձե, Նոր հայոց լեզվի քերականություն (վրացերեն), Թբիլիսի, 1971, էջ 3-319:

³ «Լեզվի և ոճի հարցեր», II, Եր., 1964, էջ 156:

քերականական կարգ չի վերագրել հայերենին:

Իրոք, այդպես է:

Վերլուծության անցնելուց առաջ բերենք եղանակաժամանակային ձևերի Ի. Շիլակաձեի աղյուսակը:

I Սահմանական եղանակ	
1. ներկա նստում եմ	2. ստատիկ ներկա նստած եմ
3. անցյալ անկատար նստում էի	4. ստատիկ անցյալ նստած էի
5. ապառնի անկատար նստելու եմ	6. ապառնի կատարյալ կնստեմ
7. անցյալ կատարյալ նստեցի	8. չտեսած նստել եմ
	9. նախորդ նստել էի
II Հրամայական 10. նստիր	
III Ընձական 11. նստեմ	
IV Պայմանական 12. նստեի	
V Հետևանքային	
13. անկատար նստելու էի	14. կատարյալ կնստեի

Ի. Շիլակաձեն բազմաթիվ օրինակների հիման վրա, որոնց մեծ մասը բերում է Հովհ. Բարսեղյանի մենագրությունից⁴, հանգում է այն եզրակացության, որ կ(ը)-ով ձևերը արդի արևելահայերենում ոչ թե այսպես կոչված պայմանական կամ ենթադրական եղանակի բայաձևեր են, այլ սահմանականի: Գրելու եմ և կգրեմ բայաձևերը գուցադրելիս հեղինակը նշում է. «... երբ խոսողը ցանկանում է համոզել խոսակցին, թե որևէ գործողություն, որը թեև խոսքի մոմենտից հետո կսկսվի, բայց անպատճառ կկատարվի, կվերջանա, իհարկե նա կաշխատի զանազանել այնպիսի գործողությունից, որ նույնպես խոսքի մոմենտից հետո կսկսվի, բայց խոսողը ուշադրություն չի դարձնում նրա ավարտելիության վրա: Այսպիսով, մի դեպքում խոսողը աշխատում է գործողությունը պատկերացնել որպես կատարյալ, իսկ մյուս դեպքում նրա վրա ուշադրություն չի դարձնում: Այս իր համոզմունքն արտահայտելու համար խոսողը գործածում է մի նոր միջոց՝ կը մասնիկը: Այսպիսով, կը մասնիկը ոչ թե եղանակիչ է, այլ կերպիչ, կատարյալ կերպ

⁴ Տե՛ս **Հովհ. Բարսեղյան**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953:

ցույց տվող մասնիկ: Այսպիսով՝ կգրեմ ապառնի կատարյալ է, իսկ գրելու եմ՝ ապառնի անկատար, և այս ձևերը միմյանցից տարբերվում են միայն կերպի կատեգորիայով»⁵:

Մեր անվանի լեզվաբանները⁶ բազմիցս անդրադարձել են այսպես կոչված պայմանականի կամ ենթադրականի եղանակային պատկանելությանը, սակայն մինչև օրս արդի արևելահայերենի նորմատիվ քերականության մեջ ոչինչ չի փոխվել:

Եթե ամենահակիրճ ձևով անդրադառնանք մեր հանրահայտ հայերենագետների աշխատություններում արտահայտված կարծիքներին, ապա կարող ենք արձանագրել հետևյալը: Ս. Պալասանյանը կ(ը)-ով ապառնիի ձևերը համարում է սահմանական, Ս. Աբրահամյանը՝ նույնպես, Է. Աղայանը ստորև նշվածներից առաջինում համարում է սահմանական, իսկ երկրորդում՝ կանխադրական (պոստուլատիվ), Պ. Պողոսյանը առանձնացնում է որպես կատեգորիական առանձին եղանակ, Հ. Պետրոսյանի կարծիքով, կ(ը)-ով ձևերը գործում են (արևելահայերենում) ըղձականի համակարգում՝ իբրև նրա կատարելի կերպի շարքեր, որտեղ կ(ը)-ն կատարելիի կերպանիշ է, Մ. Ասատրյանը, ի նկատի առնելով կ(ը)-ով ձևերի հաստատողական իմաստը, արդեն նշված ձևաբանության դասագրքում հակված է սրանք համարելու հաստատողական եղանակի բայաձևեր, բայց հետևելով ավանդույթին՝ գործածում է «պայմանական կամ ենթադրական եղանակ» անվանումը: «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ կ(ը)-ին կերպի արժեք է վերագրում նաև Գ. Ջահուկյանը, սակայն ոչ թե կատարելի, այլ կատարյալ կերպի. «... կ(ը) նախամասնիկը, որ հիմնականում եղանակային արժեք ունի, ձևաք է բերում կերպային արժեք (կատարյալ ապառնի) և իբրև այդպիսին հակադրվում է անկատար ապառնիի ձևերին (այդ թվում լու-ով կազմվող բաղադրյալ ձևերին)....»⁷: Այսինքն՝ գրելու եմ և կգրեմ բայաձևերը կերպային տարբերություն ունեն: Ինչ վերաբերում է եղանակի հարցին, ապա Գ. Ջահուկյանի կարծիքն այն է, որ «... կ(ը)-ով օժտված կ(ը)գնամ, կ(ը)գրեմ բայաձևերը

⁵ Ի. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, էջ 233-234:

⁶ Տե՛ս Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874, Ս. Աբրահամյան, Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը, ԳԱ «Տեղեկագիր», Եր., 1953, № 9, էջ 75-90, Է. Աղայան, Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում, ՊԲՀ, Եր., 1963, № 3, էջ 239-269, նույնի ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Եր., 1959, Հր. Պետրոսյան, Հայերենի բայի ձևակազմության մի քանի հարցեր, ԲԵՀ, Եր., 1984, № 2, էջ 90-112, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 2002, Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, նույնի ժամանակակից հայերենի անդեմ բայաձևերը («դերբայները»), ԲԵՀ, Եր., 1975, № 3, էջ 40-54, նույնի՝ Արդի գրական հայերենի ժամանակների համակարգը, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Եր., 1983, № 1, էջ 17-23:

⁷ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 251-252:

սահմանական եղանակի արժեք են ստանում, մանավանդ որ որպես հավաստի արձանագրվող յուրաքանչյուր ապագա (ապառնի) եղելություն ենթադրական է»⁸: Կ(ը)-ով բառաձևերին Գ. Ջահուկյանն անդրադառնում է նաև մի հոդվածում, որտեղ այն համոզմունքն է հայտնում, որ սրանք սահմանական եղանակի բայաձևեր են⁹:

Վերը ներկայացրած թռուցիկ հիշատակումներից երևաց, որ կ(ը)գրեմ և գրելու եմ բառաձևերի վերաբերյալ Գ. Ջահուկյանի և Ի. Շիլակաձեի տեսակետները համընկնում են:

Սակայն նույնը չի կարելի ասել կ(ը)-ով անցյալի ձևերի մասին: Ըստ Ի. Շիլակաձեի՝ սրանք հետևանքային եղանակի ձևեր են, որոնք հանդես են գալիս հետևյալ կառույցներում. «Անշուշտ կրնկներ, եթե չհենվեր պատին» (օրինակը հեղինակինն է – Բ. Ն.): Սա նշանակում է, որ չընկամ, որովհետև հենվեց պատին: Հակադրելով կրնկներ-ը չհենվեր-ին՝ առաջինը համարում է հետևանքային շարքի անդամ, այսինքն՝ հետևանքային եղանակ, իսկ երկրորդը՝ պայմանական: Իսկ կրնկներ և ընկնելու էր ձևերի միջև էլ տարբերությունն այն է, որ ընկնելու էր հետևանքային անկատար է, իսկ կրնկներ՝ հետևանքային կատարյալ¹⁰:

Պարզ է, որ, ինչպես և հեղինակն է հաստատում, հետևանքայինը, վերջինիս հետ նաև պայմանականը ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական կարգ են ենթադրում: Բնականաբար սա անընդունելի է, քանի որ բառաձևը համակարգում պետք է ունենա առանձին ինքնուրույն քերականական իմաստ, որով էլ պիտի հակադրվի և տարբերվի հարացույցի մյուս անդամներից:

Կ(ը)-ով անցյալի ձևերին այլևս չենք անդրադառնա, քանի որ հայերենագիտության մեջ եղած կարծիքների վերլուծությունը մեզ շատ հեռուն կտանի, իսկ Ի. Շիլակաձեի դիրքորոշումը, կարծում ենք, այսքանով պարզ դարձավ:

Ժամանակի քերականական կարգի մասին խոսելիս Ի. Շիլակաձեն իրավացիորեն նկատում է. « ... հայոց լեզուն ուսումնասիրողների կարծիքով բայի բաղադրյալ ձևերի մեջ մասնակցում են օժանդակ բայի ներկայի կամ անցյալի ձևերը, և նրանց թվում է, որ երբ այսպիսի ձևերում օժանդակ բայը վերցված է ներկայի ձևով, նշանակում է՝ գործողությունն էլ վերցված է ներկայի համեմատությամբ, իսկ երբ այդպիսի ձևերում մասնակցում են օժանդակ բայի անցյալի ձևերը, նշանակում է, որ գործողությունը վերցված է անցյալ ժամանակի համեմատությամբ: Դերբայով կազմված ձևերը անվանելիս վերցնում են օժանդակ բայով արտահայտված ժամանակը (ներկա կամ անցյալ) և դերբայով արտահայտված գործողությունը:

⁸ Նույն տեղում, էջ 246:

⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Արդի գրական հայերենի ժամանակների համակարգը, էջ 22:

¹⁰ Տե՛ս Ի. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, էջ 235:

Այսպիսով, բայաշարքերը անվանելիս նկատի չի առնվում, որ տվյալ բայաձևը անբաժանելի է, և այն չի կարելի բաժանել մասերի, որովհետև այդ մասերը միասին արտահայտում են այս կամ այն քերականական կատեգորիան»¹¹:

«Այսպիսի անհարմարության ենք հանդիպում ավանդական տերմինաբանության մեջ «անցյալ» բառի հետ կապված. օր.՝ «անցյալ ապառնի»: Եթե անցյալ է, ապառնի ինչպե՞ս կլինի, թե ապառնի է, անցյալ որտեղի՞ց»¹²:

Քերականական ժամանակի մասին գաղափար է տալիս միայն խոսքի մոմենտի և գործողության ժամանակի համեմատությունը:

«...Եթե համեմատում ենք միայն գործողությունները և ոչ թե գործողությունը խոսքի մոմենտին, ստացվում է գաղափար գործողությունների հաջորդականության կատեգորիայի մասին և ոչ թե գործողության ժամանակի»¹³:

Վերլուծական կազմությունների հարցում Ի. Շիլակաձեն ճիշտ է, քանի որ ժամանակակից հայոց լեզվում իրոք չկա, ասենք, մոտենում, կարողում առանց եմ-ի, ինչպես ժամանակին նկատել է Ս. Աբրահամյանը¹⁴:

Գ. Ջահուկյանն իրավացիորեն վերլուծական կառույցների հարցն այսպես է լուծում. «...բաղադրյալ ձևերի «դերբայական» մասը համապատասխանում է բայական հիմքին, օժանդակ բայը՝ վերջավորությանը: Իսկական դերբայներից տարբերելու համար անկախ գործածություն չունեցող անդեմ ձևերը կոչենք վերլուծական բայահիմքեր»¹⁵:

Այս տեսակետը հիմնականում ընդունում է նաև Ռ. Իշխանյանը¹⁶:

Վերլուծական կառույցների վերաբերյալ Ի. Շիլակաձեի և վերոհիշյալ կարծիքների միջև ընդհանրությունն այն է, որ երկու դեպքում էլ դրանք իրավացիորեն համարվում են անքակտելի միավոր՝ մեկ բառով: Ի. Շիլակաձեն, իհարկե, չի հասել այն բանին, որ դրանք «հիմք + վերջավորություն» կառույցներ են, բայց այն համոզման է, որ դրանց քերականական իմաստները անհրաժեշտ է բնորոշել ոչ թե այսպես կոչված անկախ «դերբայի» և օժանդակ բայի գումարով, այլ հաշվի առնելով դրանցում դրսևորվող եղանակի, ժամանակի, դեմքի, թվի, հաջորդականության, կերպի քերականական կարգերը միաժամանակ:

Հաջորդականության կարգի վերաբերյալ Գ. Ջահուկյանը գրում է. «...մեր կողմից մտցված հաջորդականության գաղափարը, որ մենք դիտում ենք ժամանակի կարգի մի դրսևորումը, արեղյանական կերպի գաղափարի սուկ տերմինային փոփոխությունը չէ. եթե Աբեղյանը տարբերակում է կատարվող, կատարված, կատարելի և պարզ կերպեր,

¹¹ Նույն տեղում, էջ 193-194

¹² Ի. Շիլակաձե, Նոր հայոց լեզվի քերականություն (վրացերեն), էջ 60:

¹³ Ի. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, էջ 184, 193:

¹⁴ Տե՛ս Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի դերբայների և ժամանակների մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1969, № 10:

¹⁵ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 281:

¹⁶ Տե՛ս Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1971, էջ 61:

ապա մենք՝ 1) առաջին երեքը հատկացնում ենք ժամանակային հաջորդականությանը՝ համընթացություն (միաժամանակություն, համաժամանակություն), նախորդում և հաջորդում անուններով, 2) պարզ կոչված կերպի նստեցի ձևը հակադրում ենք ոչ թե կատարվող, կատարված և կատարելի (համընթացության, նախորդման և հաջորդման) «կերպերին» ընդհանրապես, այլ դրանցից միայն կատարվող «կերպի» մի դրսևորմանը՝ անցյալ անկատարին (գնում էի)՝ նկատի ունենալով, որ այդ հակադրությունը իսկական կերպային հակադրություն է՝ կատարյալ և անկատար կերպային իմաստների հակադրություն»¹⁷:

Մենք վերը անդրադարձանք Ի. Շիլակաձեի մեկնաբանությանը, որը, կարծում ենք, հաջորդականության քերականական կարգի ավելի ճշգրիտ բնորոշում է: Իրոք, միմյանց կարող են հաջորդել կամ նախորդել միայն գործողությունները, այսինքն՝ համասեռ երևույթներ, մինչդեռ ժամանակի և գործողության հակադրումը չի կարող առաջացնել հաջորդականության քերականական կարգ. դրանք անհակադրելի են: Բացի դրանից՝ վերոնշյալ պատճառով հաջորդականությունը չի կարող լինել նաև ժամանակի քերականական կարգի ենթակարգ:

Այս մոտեցմամբ միանգամայն ընդունելի է Ի. Շիլակաձեի բնորոշումը, ըստ որի՝ հաջորդականության քերականական կարգը ժամանակակից արևելահայերենում առկա է անցյալ վաղակատարի բառաձևում. արդեն կատարված գործողությանը նախորդած գործողություն՝ նախընթացություն: Հեղինակը անցյալ կատարյալի բայաձևերին հակադրում է վերջիններս և անվանում «նախորդ»:

Վրացի հայերենագետն անդրադարձել է նաև կերպի քերականական կարգին և իրավացիորեն նշել, որ հայերենագիտության մեջ վերջինիս վերաբերյալ միասնական ըմբռնում չկա (Խոսքը հեղինակի ապրած ժամանակաշրջանի մասին է – Բ. Ն.), իսկ եղածն էլ չի համապատասխանում ընդհանուր լեզվաբանության մեջ գոյություն ունեցողին¹⁸:

Հեղինակն առաջին հերթին նկատի ունի այն, որ մեզանում, իրոք, հաճախ շփոթվում են կերպի և ժամանակի քերականական կարգերը, երբ ասվում է կատարվող, կատարված և կատարելի կերպ: Սրա պատճառն առաջին հերթին այն է, որ հայերենագետների կարծիքով՝ «...կերպի կատեգորիան հայոց լեզվի մեջ արտահայտվում է դերբայով ու օժանդակ բայով և ցույց է տալիս գործողության վիճակի կամ ընթացքի հարաբերումը որևէ ժամանակակետի հետ»¹⁹:

Բացի դրանից՝ հեղինակը ճիշտ է նաև այն դեպքում, երբ նկատում է, որ անցյալ կատարյալը կատարված կերպի ձևերից դուրս է

¹⁷ Գ. Զահուկյան, Արդի գրական հայերենի ժամանակների համակարգը, էջ 19:

¹⁸ Տե՛ս Ի. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, էջ 212:

¹⁹ Նույն տեղում, էջ 218:

մնում և դասվում «պարզ կերպի» մեջ, երբ սա մատնանշում է հենց կատարյալ, կատարված, ավարտված գործողություն²⁰:

Ինչպես տեսնում ենք, կերպի քերականական կարգի բնորոշման առումով Ի. Շիլակաձեի և Գ. Ջահուկյանի տեսակետները համընկնում են, քանի որ հենվում են ընդհանուր լեզվաբանության մեջ ընդունված դրույթների վրա, ըստ որի՝ կերպն ունի հակադրության երկու եզր՝ անավարտ (անկատար անցյալ- կարդում էի) և ավարտված (անցյալ կատարյալ - կարդացի), ինչպես որ շատ լեզուներում է ընդունված, օր.՝ ռուսերենում, վրացերենում և այլն:

Անդրադատնալով այսպես կոչված հարակատարով կազմություններին՝ հեղինակը սրանք համարում է ստատուսի քերականական կարգ. «... նստում է ցույց է տալիս գործողություն, իսկ նստած է՝ նույն գործողության հետևանքով ստեղծված վիճակ, դրություն: Նստած է ստատիկ ներկա է, իսկ նստած էր՝ ստատիկ անցյալ: Նշանակում է՝ հարակատարը և անցյալի հարակատարը ժամանակի առանձին ձևեր չեն: Այս շարքերի ձևերով հայոց լեզվի մեջ արտահայտվում է ստատուսի կատեգորիան»²¹: Եվ սա այն պատճառով, որ վիճակ, դրություն մատնանշող բառերի մեջ չեն կարող լինել գործողության իմաստ արտահայտող բայերին հատուկ հաջորդականության, կերպի քերականական կարգերը, որոնք հատուկ են խոնարհման համակարգին:

Հայտնի է, որ հիշյալ կառույցների ըմբռնման հարցում ևս կան տարաձայնություններ, որոնց այստեղ մանրամասն անհնար է անդրադառնալ: Ըստ Է. Աղայանի՝ դրանք խոնարհման հարացույցի անդամներ չեն²²: Սակայն Գ. Ջահուկյանը տրամագծորեն հակառակն է պնդում. «... նստում եմ, նստում էի ձևերը ցույց են տալիս վիճակի փոփոխություն՝ անցում նստելու վիճակին, իսկ նստած եմ, նստած էի ձևերը՝ անփոփոխ վիճակ, տվյալ վիճակի մատնանշում: Այսպիսով, -ած եմ, -ած էի տիպի ձևերը կարելի է կոչել վիճակային ներկա և վիճակային անցյալ (անկատար)»²³:

Շարադրանքից պարզ երևում է, որ Ի. Շիլակաձեի և Գ. Ջահուկյանը ընդունում են վիճակի կարգը, որ նույն ստատուսն է: Տարբերությունն այն է, որ վրացի հայերենագետը ստատուսի կարգը, բառիմաստից էլնելով, վերոհիշյալ պատճառներով ժամանակային բառաձև չի համարում, իսկ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը, հենվելով իր իսկ ստեղծած տիպարի քերականական կարգի վրա, դրանք համարում է խոնարհման հարացույցի անդամներ:

Ինչ վերաբերում է մեր դիրքորոշմանը, ապա քանի որ գործողության իմաստից զուրկ, արդեն ավարտված գործողության հետևանք, վի-

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 220:

²¹ Նույն տեղում, էջ 191-192:

²² Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 352:

²³ Գ. Բ. Ջահուկյան, Արդի գրական հայերենի ժամանակների համակարգը, էջ 21-22:

ճակ մատնանշող բառերն ըստ էության բայաձևականներ են²⁴, ուստի -ած ածանցով կազմված բառերը միանում են հանգույցին և կազմում անվանաբայական ստորոգյալ:

Ի. Շիլակաձեն անցյալ կատարյալի կապակցությամբ առաջ է քաշում ակտի քերականական կարգի հարցը: Հայերենագիտության մեջ սա չի ընդունվում որպես առանձին, ինքնուրույն քերականական կարգ, քանի որ անցյալ կատարյալի և վաղակատարի նրբիմաստները տարոթոշված են. անցյալ կատարյալը մատնանշում է մոտ անցյալում կատարված, ավարտված գործողություն, ուստի և ենթադրում է ականատես (հասկանալի է, խոսքը չի վերաբերում առաջին դեմքին, որը գործողության տիրույթում է), իսկ վաղակատարը՝ վաղ անցյալում կատարված գործողություն, և այդ իսկ պատճառով ականատես չի ենթադրում: Անկախ այն բանից՝ ակտի քերականական կարգը կընդունեն, թե ոչ, հեղինակն այս բայաձևերի հակադրության հիման վրա վաղակատարին տալիս է «չտեսած» անվանումը, որն այս դեպքում, մի կողմից՝ բնութագրական է՝ անհաջող հորջորջում լինելով հանդերձ, մյուս կողմից՝ չի բացահայտում կատարված գործողության տարատեսակը:

Պիտի և պետք է-ով կազմությունների մասին իրավացիորեն նշում է, որ դրանք ինքնուրույն եղանակային ձևեր չեն կազմում. «Սրանք նույն ընդձևականը կամ պայմանականն են՝ ավելացրած պիտի մասնիկը: ... գլխավորն այն է, որ եթե պիտի // պետք է մասնիկով ձևերը նոր իմաստ, նոր բովանդակություն են ստանում, դա միայն այն իմաստն է, ինչ այդ մասնիկը ունի առանձին: Այսինքն՝ պետք է գնամ նշանակում է պետք է + գնամ: ... ոչ մի եղանակ աշխարհաբարում չունի եղանակ արտահայտող սեփական նշան, եղանակներն աշխարհաբարում արտահայտվում են բայաշարքերով: Ինչո՞ւ միայն «հարկադրական եղանակն» է պահանջում եղանակիչ: Սրանով խախտվում է աշխարհաբարում եղանակները բայաշարքերով արտահայտելու իշխող կանոնը»²⁵:

Հայոց լեզվի քերականության դասագրքում հեղինակը այսպես կոչված երկրորդական վերլուծական ժամանակները իրավամբ համարում է բաղադրյալ ստորոգյալներ²⁶: Եվ իրոք, բայաձևականով, գոյականական արժեք ունեցող բառով և բայանվան սեռական հոլովով²⁷ կառույցները չեն կարող խոնարհման հարացույց ստեղծել:

Կարծում ենք՝ վերը շարադրածի հիման վրա կարող ենք ասել, որ անցյալ դարի հիսունական թվականների վերջին ասպարեզ եկած անվանի հայերենագետ Իվանե Շիլակաձեի գիտական պրպտումներն ու

²⁴ Տե՛ս Բ. Ներսիսյան, «Դերբայը» ժամանակակից արևելահայերենում, «Կանթեղ», Եր., 2005, № 4(25), էջ 46-54:

²⁵ Ի. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, էջ 279-280:

²⁶ Տե՛ս Ի. Շիլակաձե, Նոր հայոց լեզվի քերականություն (վրացերեն), էջ 279:

²⁷ Տե՛ս Ա. Մարգարյան, Ապակատար և անորոշ սեռական-տրական դերբայների շարահյուսական գործառնությունները արևելահայ և արևմտահայ գրական տարբերակներում, ԲԵՀ, 1996, № 3, էջ 186-190:

մասնագիտական խորը վերլուծություններն արժանի են ամենաբարձր գնահատականի, քանի որ դրանք մինչև օրս չեն կորցրել իրենց արդիականությունն ու հրատապությունը:

Բանալի բառեր – *եղանակ, ժամանակ, հաջորդականություն, կերպ, վիճակ, ստատուս, հետևանք, ակտ, ականատես, տիպար*

БАГРАТ НЕРСЕСЯН – Иванэ Шилакадзе о некоторых грамматических категориях современного восточноармянского языка. – Известный грузинский арменовед И. Шилакадзе ещё полвека назад исследовал конъюгационные категории современного восточноармянского языка, которые по сей день остаются спорными. Речь идёт о месте словоформ с частицей *լ* в системе наклонений, о категориях времени, последовательности, вида, статуса, акта, а также о конструкциях с *պիտի* // *պետք է*. И. Шилакадзе проанализировал указанные категории, основываясь на общепринятых принципах общего языкознания, и его выводы в основном убедительны. Исследования видного учёного до сих пор не потеряли актуальность и внесли несомненный вклад в науку.

Ключевые слова: *наклонение, время, последовательность, вид, статус, акт, состояние, следствие, тип*

BAGRAT NERSISYAN – Ivane Shilakadze on Some Grammar Categories of the Modern Eastern Armenian Conjugation System. – Half a century ago the famous Armenologist I. Shilakadze analyzed the conjugation categories of modern literary oriental language, which are considered to be controversial till now. We are talking about the place of word forms with the particle “*լ*” in the inclination system, tense category, word order, form, status, act, as well as the constructions with “*պիտի*”// “*պետք է*”. The research of the famous Armenologist hasn’t lost its actuality and has greatly contributed to the science. I. Shilakadze analyzes the above-mentioned conjugation category on the basis of generally accepted principles of general Linguistics and in most cases comes to convincing conclusions.

Key words: *mood, tense, succession, aspect, condition, status, consequence, act, type*

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ
ԱՐԱԲԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ՀԻՄՔԵՐՈՎ**

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Որևէ օտար լեզվի ազդեցությունը այս կամ այն լեզվի վրա բնական և անխուսափելի լեզվական երևույթ է և պայմանավորված է քաղաքական, տնտեսական ու մշակութային մի շարք գործոններով: Այս տեսակետից միջին հայերենի բառապաշարում մեծ թիվ են կազմում գրավոր և բանավոր ճանապարհով մուտք գործած անմիջական և միջնորդավորված փոխառություններն արաբերենից: Արաբերեն բառերի զգալի մասը միջին հայերենին է անցել գրավոր ճանապարհով՝ հատկապես այդ լեզվից կատարված բազմաթիվ ու բազմատեսակ թարգմանությունների միջոցով: Հայ գիտական մտքի զարգացման գործում հատկանշական դեր է ունեցել միջնադարում տարբեր ասպարեզներում նվաճումների հասած արաբական գիտությունը: «Միջնադարյան Հայաստանում առանձնապես սիրված և առաջադիմական բնագավառ էր բժշկագիտությունը, որով պայմանավորված է հայերի հատուկ հետաքրքրությունը դեպի արաբ բժշկությունը: Արաբերենից թարգմանված բազմատեսակ երկերում, ինչպես և ինքնուրույն ուսումնասիրություններում երևան էին գալիս արաբերեն անվանումներ՝ աստղագիտական, քիմիաբանական տերմիններ, բուսանուններ, դեղանուններ, ախտանուններ»¹: Արաբական փոխառությունների մեծ մասը մինչև այսօր էլ կիրառվում է հայերենի տարբեր բարբառներում, իսկ որոշ բառեր «այնքան կենսունակ են եղել, որ հասել են մինչև ժամանակակից գրական հայերեն»²:

Հր. Աճառյանը հայ-արաբական փոխառությունները բաժանում է 2 շրջանի՝ 7-րդ դարի կեսերից մինչև 10-րդ դար և 12-րդ դարից ի վեր³: Հայ-արաբական հարաբերությունների առաջին շրջանում արաբերենի ազդեցությունը հայերենի վրա առանձնապես մեծ չէ. մինչև 11-րդ դարը հայ մատենագրության մեջ արաբերեն սակավաթիվ բառեր են հանդիպում: Ըստ Հյուբշմանի՝ Սեբեոսը իր պատմության մեջ չի գործածել արաբերեն ոչ մի բառ՝ բացի հատուկ անուններից և տիտղոսներից, իսկ Ղևոնդ պատմիչը 2 բառ է գործածել՝ Կուռայք (Ղուրան կարդացողները)

¹ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972, էջ 199:

² Ա. Կարապետյան, Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկի բառապաշարը, թեկնածուականատենախոսություն, Եր., 2014, էջ 115:

³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951, էջ 171:

և Փուրկան (Ղուրան), որոնք երկուսն էլ զուտ արաբական իրականությանը հատուկ տերմիններ են⁴: Հր. Աճառյանը Հովհաննես Ե կաթողիկոսի (9-10-րդ դդ.) պատմության մեջ ընդամենը երեք բառ է գտել գործածված՝ սելամ ալէք, կուրան և մակուրան կուրան⁵: Սա չի նշանակում, որ արաբերենի ազդեցությունը նույնքան է եղել նաև բանավոր խոսքի վրա, քանի որ մինչև արաբների՝ Հայաստանը նվաճելը հայերն արդեն երկրի հարավում շփվում էին այնտեղ բնակություն հաստատած արաբական ցեղերի հետ, իսկ Հայաստանը նվաճելուց հետո նրանք զանգվածաբար բնակություն հաստատեցին Հայաստանում: Հայ-արաբական այսպիսի սերտ շփումները չէին կարող անհետևանք մնալ խոսակցական հայերենի բառապաշարի համար: Հետևաբար բանավոր խոսքում ավելի շատ պիտի լինեին արաբերեն փոխառությունները: Ինչպես նշում է Մ. Մուրադյանը, հենց միայն այն հանգամանքը, որ արաբերեն բազմաթիվ բառեր մինչև այսօր պահպանվել են մեր բարբառներում հնչյունափոխական զանազան անցումներով, թույլ է տալիս ասել, որ արաբերենը ավելի խորը արմատներ է ունեցել այդ ժամանակի խոսակցական լեզվում⁶: Իհարկե, պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ հայերենի մի շարք բարբառներում պահպանված արաբերեն բառերի մի մասը հայերենի բարբառներ կարող էր մուտք գործել նաև ավելի ուշ՝ պարսկերենի և թուրքերենի միջնորդությամբ, որոնք նույնպես կրում էին արաբերենի ազդեցությունը: Ուշագրավ է Հր. Աճառյանի հետևյալ վերլուծությունը. «Հատկապես ԺԱ դարում, երբ հայոց Բագրատունի թագավորությունն արդեն վաղուց հաստատված էր, արաբները Հայաստանից հեռացած և նույնիսկ անկման շրջանն էին մտած: Այս պատճառով ազդեցությունը պիտի վերագրենք ոչ թե ուղղակի արաբերենին, այլ մեր հարևան պարսիկներին»⁷: Այդ է պատճառը, որ միջին հայերենի ուշ շրջանում մի շարք փոխառությունների ճշգրիտ աղբյուրի որոշումը բավական դժվարանում է, քանի որ արաբերենը, պարսկերենը, ինչպես նաև թուրքերենը հարուստ են միմյանցից կատարած բազմաթիվ փոխառություններով: Ուստի մեր ընտրանքում կան այնպիսի բառեր, որոնք առկա են նաև այդ լեզուների բառապաշարում, ինչպես՝ **բակլայ** (արաբ., պարսկ.), **գաֆրան** (արաբ., պարսկ.), **թտպիր** (արաբ., պարսկ.), **հոկնա** (արաբ., պարսկ.), **ումետ** (արաբ., պարսկ., թուրք.): Միջին հայերենում տարածված երևույթ էր այն, որ դրանց մեջ կան նաև կրկնակ փոխառություններ, երբ արդեն փոխառված բառը փոխառվում է ևս մեկ անգամ նույն կամ այլ լեզվից: Դրանց՝ իրենց հնչյունական կազմով նման լինելը (բլղամ-պալղամ, խուլինճ-կոլինճ, պօհրան-բուհրան, սաֆրայ-սալտայ, սոլտան- սուլթան և այլն)

⁴ Տե՛ս Հ. Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 297:

⁵ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 173:

⁶ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», էջ 210:

⁷ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 183:

պայմանավորված է միննույն բառի՝ հին և միջին շրջաններում կամ միննույն լեզվի զարգացման տարբեր փուլերից փոխառված լինելու հանգամանքով:

Ռ. Ղազարյանի համոզմամբ՝ հայ-արաբական մշտական շփումների հետևանքով ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի մեջ անխուսափելիորեն պետք է մուտք գործեին արաբերեն բառեր, որոնք այնքան գործուն են եղել բանավոր խոսքում, որ շատ հաճախ հիմք են ծառայել հայերենի բառակազմական կաղապարներով նոր բառերի ստեղծման համար⁸:

Փոխառությունները, փոխատու լեզվից վերցվելով իրենց ինքնուրույն արժեքով և հնչյունական ձևավորմամբ, փոխառու լեզվում հետագայում կարող են ենթարկվել ածանցման և բառաբարդման: Փոխառյալ բառով և լեզվի սեփական միջոցներով կազմությունները հայ լեզվաբանության մեջ հիմնականում համարվում են սեփական բառակերտումներ:

Այսպիսի բաղադրությունները Գ. Ջահուկյանը համարում է հիբրիդային կազմություններ: Նա իրավացիորեն նշում է, որ հիմնականում դրանց առաջին բաղադրիչն է օտար ծագման, և այդ բաղադրություններն անվանում է կիսափոխառություններ- կիսապատճենումներ⁹: Լ. Հովհաննիսյանը բայական փոխառությունների մասին խոսելիս օտար ձևույթ+մայրենի լեզվի ձևույթ կաղապարով կառույցները փոխառություններ չի համարում, և այդպիսի բառերը բառացանկում նշում է «փոխառյալ արմատը մատնացույց անելու միտումով»¹⁰: Սակայն լեզվաբանը կարևորում է այդպիսի կազմությունների ուսումնասիրությունը, քանի որ ոչ միայն օտար ձևերի ուսումնասիրությամբ, այլև օտար միավորն ընդգրկող մայրենի ձևերի քննությամբ է ավելի լիարժեք բացահայտվում օտար ազդեցությունների դերը փոխառու լեզվում: Փոխառյալ բայարմատով կազմությունները Լ. Հովհաննիսյանն անվանում է օտար հիմքով (արմատով) բայեր՝ նշելով, որ «խիստ առարկելի է առհասարակ փոխառյալ բայ տերմինը»¹¹:

Այսպիսով, փոխառու լեզուն, սեփականացնելով օտար բայահիմքը, այն ենթարկում է բառակազմական փոփոխությունների սեփական բառերի նման այնպես, ինչպես փոխառությունները ենթարկում է քերականական փոփոխությունների. գոյականները հոլովում է, ածականներին համեմատության աստիճաններ տալիս և այլն: Միջին հայերենի բառարանում այսպիսի հիբրիդային կազմությունները բավականին շատ են: Կան նաև բաղադրություններ, որոնց երկու հիմքերն էլ փո-

⁸ Տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 92-93:

⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 225:

¹⁰ Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 9:

¹¹ Նույն տեղում, էջ 120:

խառնյալ են, ինչպես՝ ամիրսպասալար, վարդմարապայ (*վարդ, սպասալար*-պահլ. փոխ., *ամիր, մարապայ*-արար. փոխ.), *հաղ(խ)ուղալ* (2-ն էլ արար. փոխ.), կամ փոխառնյալ է երկրորդ հիմքը, ինչպես՝ լաւաթտայիր: Սույն հոդվածում մենք անդրադարձել ենք արաբերենից փոխառնյալ հիմքերով միջինհայերենյան բառակազմական կաղապարներին՝ ըստ Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանի» (այսուհետ՝ ՄՀԲ): Բառակազմական կաղապարները բաժանել ենք երկու ենթախմբի՝ բառաբարդման և ածանցման կաղապարների:

Բառաբարդման կաղապարներ: Ըստ իրենց կառուցվածքային-բառակազմական հիմնական առանձնահատկությունների՝ բաղադրյալ բառերը բաժանվում են երկու խմբի՝ վերլուծական և համադրական բաղադրություններ: Համադրական բաղադրությունները ներկայացրել ենք երկու խմբով՝ հոդակապով և անհոդակապ բաղադրություններ: Առանձնացրել ենք նաև յուրաքանչյուրի՝ մեր ընտրանքում հանդիպող ենթակաղապարները կամ տարբերակները, երբ բաղադրիչ արմատները հանդես են գալիս հնչյունափոխված կամ թեքոյթավորմամբ: Ըստ այդմ՝ հոդակապով բաղադրությունների հիմնական կաղապարը կլինի **SjS**՝ հաջորդաբար ներկայացվող ենթակաղապարներով¹²: Հոդակապով բաղադրությունների մեջ ներառել ենք նաև մեզ հանդիպած մեկ-երկու շաղկապավոր բաղադրությունները: Որպես վերլուծական բաղադրություններ՝ առանձին քննել ենք հարադրավոր բայերը: Ստորև ներկայացնում ենք ՄՀԲ-ում արաբերենից փոխառնյալ հիմքերով հոդակապավոր կաղապարները (կաղապարներում փոխառնյալ հիմքերն ընդգծվում են).

SjS-ախմարամիտ, **քռամ**ախուս, **թատ**աձև, լաւա**թտայիր**, **խանջար**աձեւ, **խարաճ**ատու, **խարափ**աձայն, **կապալ**ատու, **հասրաթ**ամահ, **հասրաթ**ամեռ, **նալ**ակտուր:

SjS-քթանազգեստ, **մլք**աթուղթ, **մլք**ատեր, **ջհա**աքար:

ScS –խապարուբեր, **հաղուղալ**:

Ավելի մեծաթիվ են անհոդակապ կազմությունները, որոնց մի մասում երկրորդ բաղադրիչը սկսվում է ձայնավորով: Կան նաև օրինակներ, երբ պարզապես երկու բաղաձայնների հանդիպմամբ են կազմվում անհոդակապ բաղադրություններ: Երբեմն պահպանվում է բառավերջի *յ-ն*, ինչպես՝ **ամիրայիակ**, **բակլայջուր**, **ջաղայմիս**, **սքթայցալ**: Ստորև ներկայացնում ենք անհոդակապ կազմությունների օրինակները:

SS-ամիրայիակ, **ամիրալ**ետ, **ամիր**սպասալար¹³, **ատլաս**երես, **բակլայջուր**, **դալ**ընկեր, **խազինա**տար, **խապար**բեր, **կապալ**ար, **ճոն**ընտիր, **մասարա**քար, **նուսխա**տեղ, **ջաղար**միս, **պախրէ**միս, **պախրէ**ցալ, **ջուպալ**ար, **սալա**զուգ, **սլեհ**տար, **սքթայցալ**, վարդ**մարապայ**:

¹² Սրանցում S-ը հիմքն է, S-ը՝ հնչյունափոխված հիմքը, j-ը՝ հոդակապը, j-ը՝ հնչյունափոխված հոդակապը, S^f-ը՝ քերականական ձևավորում ունեցող հիմքը, c-ն՝ շաղկապը:

¹³ Բաղադրություններում գործածված է *ամիր* և *ամիրայ* տարբերակներով:

SS- ասսյրգործ, գաֆրնգոյն, խասսրբեր, խզինատար, խոււրցաւ, հուրմարար, քթանգործ:

SSf - խայասարար, հուրմարար, նաշխարար:

Այժմ ներկայացնենք մեր ընտրանքում գործածված բարդությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելության բանաձևերը.

1. **Գոյական + գոյական-** ամիրայիակ, ամիրայետ, ատլասերես, բակլայջուր, գաֆրնգոյն, մլքաթուղթ, մլքատեր, պախրէմիս, պախրէցաւ, ջհտարար, սքթայցաւ, վարդմարապայ, քապարխոտ:

2. **Գոյական + բայարմատ (բայահիւք)-** ասսյրգործ, թասատու, խայարբեր, խարաճատու, խզինատար, կապալատու, կապակար, հասրաթամահ, հասրաթամետ, ճոնրնտիր, սալագուգ:

3. **Ածական+ գոյական-** լաւաթտպիր :

Հարադրավոր բայեր: Որպես բայի վերլուծական ձևեր՝ առանձնաձևում են հարադրավոր և զուգադրական բայերը: Նշենք, որ զուգադրական բայերի՝ երկու բայերից կազմված վերլուծական կազմությունների մեր ընտրանքում չենք հանդիպել: ՄՀԲ-ում մեծ թիվ են կազմում արաբերենից փոխառյալ հարադիր ունեցող հարադրավոր բայերը, որոնք միջին հայերենում ավելի լայն տարածում ունենին՝ պայմանավորված առաջին հերթին դրանց իմաստային առանձնահատկություններով՝ խոսքին կենդանի շունչ, թարմություն տալու, խոսակցական լեզվում ավելի շատ տարածված լինելու հանգամանքով: Սրանցում հարադրի դերում հանդես եկող փոխառյալ բառերը օժտված են բառակազմական մեծ արժեքով և կենսունակությամբ: Հարադրավոր բայերի մի մասում հարադիրը բայական բաղադրիչի հետ կապվել է **ի** նախդրի միջոցով, որը դրվել է ածականների, բայարմատների, մակբայների, ինչպես նաև հայցական հոլովով արտահայտված գոյականների վրա: Արաբերենից փոխառյալ բաղադրիչ ունեցող հարադրություններն առանձնացնելիս առնչվել ենք հարադրավոր բայերի՝ միջին հայերենի բառարանում ոչ ամբողջությամբ արձանագրված լինելու փաստին: ՄՀԲ-ում մի դեպքում դրանք ներկայացված են ամբողջությամբ որպես գլխաբառ, մյուս դեպքում տրված են որպես բաղադրիչներից մեկի՝ հատկապես գլխաբառի առանձին կիրառություն: Սակայն առավել հաճախ բերվում են հարադրավոր բայերով նախադասություններ՝ առանց նշելու դրանցում գործածված հարադրավոր բայը: Հարադրավոր բայերում արաբերենից փոխառյալ հարադիրներն արտահայտվել են.

1. Գոյականով, որը բայական բաղադրիչի հետ դրսևորում է բազմազան շարահյուսական հարաբերություններ: Ըստ այդմ՝ գոյական հարադիրը դրվել է.

ա) *Ուղղական-հայցական հոլովով- աճապ մնալ, ամր անել, բըթըլմալ առնել, զահմաթ հասըլ լինել, թարկիկ տալ, ժղուլ մնալ, խալաթ տալ, խայիլ լինել, խարճ առնել, խուխայ այնել, հաուս անել, հաքր ըն-*

գել, հոկնայ առնել, դագայ առնել, դվամ գալ, դայուլ առնել, ճլէ այնել, ճուղայ տալ, մագմատայ այնել, մահրում անել, մուրատ տալ, նամուս առնուլ, նուզլայ և գուքամ լինել, շամաթայ անել, շաֆ առնել, սոհրաթ առնել, տալապ առնել, տամահ գալ, տիմէտ առնել, տլէ այնել, քուֆր տալ և այլն:

բ) Նախդրիվ հայցականով ի+հայցական- ի ժողուլ լինել, ի հասիլ բերել, ի յեմո ընկնիլ, ի դվամ բերել, ի դվամ գալ և այլն:

2. Ածականով. ածական փոխառյալ հարադիրների հետ բաղադրություններ են կազմել հիմնականում **առնել(այնել)**, **լինիլ(լինալ)** բայերը: Շարահյուսական տեսակետից, որպես կանոն, այդ հարադրություններում ածական բաղադրիչը ստորոգելիական վերադրի, իսկ բայական բաղադրիչը հանգույցի դեր են կատարել: Այդ բայերն են՝ **լատիֆ առնել, խաս առնել, հալալ անել, խումար առնել, մալում այնել, մասխարայ առնել, սախաթ առնել**:

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, ՄՀԲ-ում կիրառված հարադրավոր բայերի զգալի մասը կազմված է **լինել** և **առնել** բայերով (նաև **այնել** հնչյունափոխված տարբերակով): Վերջինս պատճառական կերպի դրսևորման ձևերից մեկն է, որը հատուկ է միայն հարադրավոր բայերին: Սրան հակառակ՝ **լինիլ** բայը չեզոք և կրավորական սեռի բայեր է կազմում՝ հարադրվելով գոյական և ածական հարադիրների հետ: Գ. Ջահուկյանի կարծիքով, **առնել, լինել, տալ** բայերով կազմված հարադրությունները մեծ թիվ են կազմել միջին իրանական լեզուներում, և հայերենում նրանց գործածության առատությունը թերևս իրանական ազդեցության արդյունք է¹⁴:

Ածանցման կաղապարներ: Ածանցման կաղապարները ներկայացնում ենք երեք ենթախմբով՝ նախաձանցավոր, վերջաձանցավոր և բայաձանցավոր կաղապարներ:

Նախաձանցման կաղապարներ: Նախաձանցման պարզագույն կաղապարն է **aS**, որով ստեղծված բոլոր բառերը կազմված են **-ան** ժխտական նախաձանցով: Դրանք են.

aS-անաջալ, անաալ, անդոլվաթ, անթաղալիք, անխալապայ, անխալատ//անխալաթ//անդալատ, անխտար, անմրաթ, անշաղալաթ, անսլեհ:

Վերջաձանցման կաղապարներ: Վերջաձանցման կաղապարները բերում ենք ըստ համապատասխան ածանցների այբբենական դասավորության: Յուրաքանչյուր ածանցի համար նախ ներկայացնում ենք **Sa** հիմնական կաղապարով կազմված բառերը, ապա **Sa** և **S'a** տարբերակներով կազմվածները.

-ած-Sa- աղեղնած, հիլայած, մագրալած, -ակ-Sa- աղեղնակ, տապ-

¹⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 563:

լակ, **-ական**-Sa-ախմարական, **-անք**-Sa-ժղլանք, **-անոց**-Sa-դասպանոց//խասպանոց, **-ապէս**-Sa-աղեղնապէս, նուսխայապէս, **-արան**-Sa-հաքիմարան, **-ացի**-Sa-իմամացի, **-աւոր**-Sa-կապալաւոր, մահմէզաւոր, **-գոյն**-Sa-վլախգոյն, **-եղէն**-Sa-հալվեղէն, պրիսմեղէն, Sa-քթանեղէն, կլայկեղէն **-ենի**-Sa-ֆստուխենի, **-է**-Sa-կլայկէ, **-ի**-Sa-զէյթունի, հապալասի, նախշի, տամահի, յունապի, Sa-հապալսի, Sa-տնագելի* **-իկ**-Sa-թարկիկ, խաթրիկ, հարամիկ, դատրիկ, դաւլիկ, մկրատիկ, շամամիկ, սաւտայիկ, ոււրիկ, պարզամիկ, Sa-գաֆրնիկ, խապրիկ **-ին**-Sa-սարահին, **-կոտ**-Sa-սաւտայկոտ, **-չէք**-Sa-սամարչէք, սարէչէք, **-ոդ**-Sa-նախշոդ, -Sa-թտպրոդ, **-ոտ**-Sa-խուլինճոտ, շարաֆոտ, պրզամոտ, սաւդայոտ, սաֆրայոտ//սաֆրայոտ, Sa-կոլնջոտ, **-պան**-Sa-մինապան, **-ուրիւն**-Sa-ազապուրիւն, ամիրպուրիւն, դահուրիւն, ըռէխուրիւն, թաղսիրուրիւն, թէլպիսուրիւն, թուխմայուրիւն, լատիֆուրիւն, խալիվայուրիւն, խումարուրիւն, կահրայուրիւն, դամագուրիւն, դարիպուրիւն, նայիպուրիւն, նաղաշուրիւն, սուլտանուրիւն, տամահուրիւն, Sa-թասպուրիւն, խսմուրիւն, խումրուրիւն, հարմուրիւն, ճունդկուրիւն, մահտեսուրիւն, մասխարուրիւն, մսխուրիւն, շաթրուրիւն, **-ցի**-Sa-մարցի, լէրախցի, **-ուկ**-Sa-դարիպուկ, ճահիլուկ//ջահիլուկ, շարտուկ, **-ում**-Sa-խալում, **-ումն**-Sa-սղարումն, **-ուն**-Sa-նախշուն, **-ուտ**-Sa-հալֆայուտ, հիլիոնուտ, **-ւոր**-Sa-սիլահւոր, տօլվաթւոր, ֆելւոր, Sa-կապվոր:

Երկաձանց բաղադրություններից հանդիպում է **a(Sa)** կադապարով **անխտրելի** բառը, որի կադապարը երկակի մոտեցման տեղիք է տալիս, քանի որ դրա բառարմատը և՛ նախաձանցի, և՛ վերջաձանցի հետ առանձին վերցրած ինքնուրույն գործածություն ունի լեզվում:

Բարդաձանցավոր կազմությունները մեր ընտրանքում ներկայանում են հետևյալ կադապարներով՝ **(SS)a-ամիրսպետուրիւն**, ամիրսպասալարուրիւն, ըռամգիրք, կապալառու, **(SS')a-այպնարարուրիւն**, **(SjSa)-կազագործուրիւն**:

Բարդ և աձանցավոր բառերում շեշտափոխությամբ պայմանավորված՝ ձայնավորները ենթարկվում են հետևյալ հնչյունափոխությունների.

է>ի-մահմէզ-մահմիզել, **ի+ա=է**-սարի-սարէչէք, **ի>ը**-թտպիր-թտպրալ, խիսմ-խսմուրիւն, կոլինջ-կոլնջոտ, տահրիկ-տահրկէլ, ֆիքր-ֆքրէլ, **ի>զրո**-այիկ-այկէլ, խալիս-խալսիլ//խալսում, հաքիմ-հաքմուրիւն, ճունդիկ-ճունդկուրիւն, մունեստիկ-մունեստիկիլ, մսքին-մսքնուրիւն, շաթիր-շաթրուրիւն, սատիր-սատրել, քաֆիր-քաֆրիկ, **ա>զրո**-խագինայիզէնա-

* Գ. Չահուկյանն այս աձանցը –ել//–ալ աձանցին միացած միասնական բաղադրյալ աձանց է համարում (տե՛ս Գ. Չահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 156), սակայն, ինչպես նշում է Մ. Ասատրյանը, **-ի** աձանցը –ել//–ալ վերջավորություններին կցելը սխալ է: Այն ինքնուրույն աձանց է, ընդ որում, հայերենում միակ աձանցը, որի սկզբնահիմքը անորոշ դերբայն է (տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Բ, Եր., 1973, էջ 303-306):

տար, խապար-խապրիկ, խալաս- խալսի, խումար-խումրել// խումրու- թին, կապալ-կապլել, հարամ-հարմել, դալատ-դալտել, դասապ-դասպ- նոց, սաթր-սթարել, պատալ-պատլի, սախաթ-սախթել, սուլտան> սուլտ- նութին, ֆալահ-ֆլեհի, ա>ը- գաֆրան-գաֆրնգոյն//գաֆրնիկ, խալաս- խալրսի, խապար-խապրբեր, խումար-խումրնալ, խումրցալ, կապալ- կապլվոր, մաշդուլ-մշդրլի, մասխարայ-մսխրութին, սամսար- սամսրչէք //սմսարչէք, քաթան> քթանգործ, քթանեղէն, ու>ը-ասպուր-ասպրգործ, մուլք-մլքաթուղթ, մաշդուլ-մշդրլի, քուֆր-քրֆտել, ու>զրո-թասուպ- թաս- պութին, ժղուլ-ժղլանք, ջհուտ-ջհտաքար, եա>ե-կլայեակ-կլայեկէ, եա>Օ -կլայեակ- կլայեեղէն:

Բայածանցներ: Հայերենում, ինչպես հայտնի է, «բայական բառույթը միշտ բաղադրյալ է՝ կազմված առնվազն երկու ձևույթից՝ արմատից և վերջավորություններից¹⁵», քանի որ բայահիմքին, լինի դա կազմու- թյամբ արմատական, ածանցավոր թե բարդ, միշտ ավելանում է *-ել//ալ* քերականական ձևույթը: Որպես բայի սկզբնաձև, բառարանային միավոր՝ հայերենում ընդունված է անորոշ դերբայը, որն արդեն բաղա- դրյալ է՝ կազմված արմատից և վերջավորությունից: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ սույն հոդվածում բայերը քննում ենք ածանցավոր կազմությունների մեջ: Ըստ բաղադրիչների կապակցելիության եղա- նակի կամ ըստ կառուցվածքային-բառակազմական առանձնահատ- կությունների, ինչպես մյուս խոսքի մասերի դեպքում, կունենանք վեր- լուծական և համադրական կազմություններ: Վերլուծական կազմույթ- յուններին մենք արդեն անդրադարձել ենք:

Ինչ վերաբերում է համադրական կազմություններին, պետք է նշել, որ հայերենի զարգացման բոլոր փուլերին հատուկ է անվանական խոսքի մասերից, հատկապես գոյականից և ածականից բայական մասնիկավորմամբ բայեր կազմելու լեզվական միջոցը: Մեր ընտրան- քում արաբերենից փոխառյալ բուն բայական արմատներով կազմու- թյուններն են.

Sa- ալկել, աճրգի, այպել, բաղլել, բախլի, գահմաթի, ըռովկի, թամամել, թարկել, թէտպիրի, թուագարի, խալաթել, խարձել, խսարել, հաւասի, հարրել// հուրրել, հեսեպել, հիլաթել, հիլաթել, հինայել, դալա- տի, դահիրի, դապալել, ճլէլ, մագոգել// մարրթել, մասլահաթել, մկրա- տել, յեճեգել, յիւլել, նախշել, նադաշել, նշայել, շատտել, շարաֆի, պատ- րել, ջուռումել, սսպոնել, սլեհի, սղարել, սունաստել, տամահիլ, տնագել:

Sa- թտապրալ, խալսիլ, խալտիլ, խումրել, կապլել, դալտել, մահմիգել, մլքել, մշդրլի, մունետկիլ, պատլիլ, տահրկել, ֆրրել:

Sfa- և *Sfa* քերականական ձևավորում ունեցող սերող հիմքերով խումր են կազմում տուկածանցավորները, քանի որ դրանք չունեն բառակազմակ- ան արժեք, և պատճառական բայերը՝ իրենց տարբերակային ձևերով:

¹⁵ Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 299:

S^fa- աճամանայ, ամիրանայ, դահանայ, թուխմանայ, խումարանայ, դարբիպանայ, մասխարանայ, սուլթանանայ:

S^fa- խալտենայ // դալտենայ, խումրնայ:

Սոսկածանցներից մեր ընտրանքում հանդիպում է **-ան-** ածանցը, որն ամենակենսունակ ածանցն է հայերենի պատմության բոլոր փուլերում, և բայեր է կազմել գոյականներից և ածականներից: Միջին հայերենին բնորոշ է **-ան-** ածանցի և նրա հնչյունափոխված տարբերակի զուգահեռ կիրառությունը մի շարք բայերում (**-անալ<-նալ, -անել<-նել**), օրինակ՝ *աճամանայ-աճմնայ, դահանայ-դահնայ, խումարանայ-խումրնայ*: Սա ժողովրդախոսակցական լեզվի ազդեցության հետևանք է: **Են-** սոսկածանցը, որը ծագմամբ կապվում է **-ան-** ածանցի հետ՝ որպես արմատի **-h-** վերջնահնչյունի և **-ան-** ածանցի ձայնավորի հնչյունափոխության արդյունք (*h+ան<եան<են*), միջին հայերենում որոշակի կենսունակություն է ձեռք բերում և հարստացնում լեզվի բառապաշարը: Արաբերենից փոխառյալ հիմքով ունենք **-են-** ածանցով կազմված *խալտենայ// դալտենայ* բայը: **-Ան-** և **-են-** սոսկածանցներով կազմությունները կարող են զուգահեռ ձևեր ունենալ նույն արմատի ածանցագուրկ բայի հետ, ինչպես՝ *խումրել-խումարանայ, խալտիլ-խալտենայ*: Պատճառական **-եցն-** ածանցով հանդիպել է *ժղեցնել* բայը: Այստեղ հանդիպել ենք նաև գրաբարյան **-ուցան-** ածանցով կազմված բայի՝ *դալտեցուցանել*: Բազմապատկական ածանցով հանդիպել է մեկ բայ (*Sa*)a – *քրֆ* տել:

Այսպիսով, մեր կողմից առանձնացված մեկ օտար բաղադրիչով և հայերենի սեփական բառակազմական միջոցներով կազմությունների ուսումնասիրությունը հատկապես կարևոր է հայերենի զարգացման տվյալ շրջանում որևէ օտար լեզվի (տվյալ դեպքում՝ արաբերենի) ազդեցությունն ավելի ճշգրիտ ներկայացնելու համար: Բաղադրություններում արաբերենից փոխառյալ բառերի առանձնացումը խիստ կարեւոր է, քանի որ դրանով որոշվում է տվյալ փոխառության գործածության հաճախականությունը և լեզվական արժեքը, որը կարևոր է ընդհանրապես փոխառյալ բառերի արժևորման, գնահատման համար:

Բանալի բառեր – *կաղապար, հաղորդակցում, լեզվական կառուցվածք, ածանցում, բառապաշար, բարբառ, գրական լեզու, միջնորդավորված և անմիջական փոխառություն, հիբրիդային կազմություններ*

СУСАННА ГРИГОРЯН – Среднеармянские словообразовательные модели с заимствованными из арабского языка основами. – В лексике среднеармянского языка многочисленны прямые и косвенные арабские заимствования, вошедшие в неё письменным или устным путём. Собственные значения и фонетический облик этих заимствований могли впоследствии подвергаться сложению или деривации в заимствующем языке. Такие сложные слова считаются гибридными

образованиями. Выделить в сложных словах арабские заимствования очень важно, поскольку тем самым определяется частота их употребления и языковое значение, что существенно для оценки заимствованных слов вообще.

Ключевые слова: *модель, коммуникация, языковая структура, деривация, лексика, диалект, литературный язык, прямое и косвенное заимствование, гибридные образования*

SUSANNA GRIGORYAN – *Middle Armenian Word Formation Patterns with Bases Borrowed from Arabic.* – The direct and indirect loan words borrowed from Arabic in both written and oral ways are numerous in the vocabulary of Middle Armenian. The loan words are taken from the borrower language with their own value and phonetic formation, but can later undergo affixation and compounding in the borrower language. This kind of word-compositions are considered to be hybrid formations in the language. The separation of loan words from Arabic within word compositions is very important, because it decides the frequency and value of the usage of the given loan word which is in general very essential for the estimation of the value of borrowings.

Key words: *pattern, communication, linguistic structure, affixation, lexis, dialect, literary language, direct and indirect borrowing, hybrid formations*

**ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ԿՐԹԱՍՇՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1900-1930-ԱԿԱՆ ԹԹ.**

ՀԱՍՄԻԿ ԵՍԱՅԱՆ

Հայերի ներգաղթը Կալիֆոռնիա տեղի է ունեցել 1880-ական թթ. սկզբին: Շուրջ երկու տասնամյակ անց նրանք այստեղ սկսեցին հիմնել հոգևոր կենտրոններ: Արդեն 1930-ական թթ. նահանգի կենտրոնական, հյուսիսային և հարավային շրջաններում գործում էին 8 հայ առաքելական և 13 հայ ավետարանական եկեղեցիներ: Սույն հոդվածում փորձ է արվել ընդհանուր բնութագրով ներկայացնելու վերջիններիս կրթամշակութային գործունեությունը 1900-1930-ական թթ.:

Ի սկզբանե հայ առաքելական և ավետարանական եկեղեցիները Միացյալ Նահանգներում, այդ թվում՝ Կալիֆոռնիայում, հայտնվել էին անհավասար պայմաններում: Նախ՝ որ առաքելական եկեղեցին անհասկանալի երևույթ էր ամերիկյան միջավայրում: Որքան էլ քրիստոնեական էր, այն, միևնույն է, տեղացիների համար օտար ու անծանոթ լինելու պատճառով չէր ընկալվում, հատկապես որ այն դավանում էին միայն հայերը: Սա խոչընդոտում էր եկեղեցու բնականոն գործունեությունը: Վերջինս ստիպված էր ինքնուրույն լուծել իր հաստատման ու կայացման խնդիրները: Բացի այդ՝ Կալիֆոռնիայում հաստատված հայերը իրենց եկեղեցու սպասավորներին դիմում էին ոչ միայն հոգեվոր-կրոնական, այլև սոցիալական հարցերով՝ խուսափելով անմիջականորեն առնչվել տեղական իշխանությունների հետ: Առաքելական եկեղեցու հոգևոր սպասավորները, չունենալով բավարար կրթություն և անգլերենի լավ իմացություն, բախվում էին մի շարք լուրջ դժվարությունների: Փաստորեն նրանք նույնպիսի անօգնական վիճակում էին, ինչ ներգաղթյալները:

Հակառակ դրան՝ հայ ավետարանականները շատ արագ ընդունվեցին. բողոքականությունը ընդհանուր էր թե՛ տեղացիների և թե՛ նրանց համար: Հայ ավետարանական եկեղեցին սովորաբար վայելում էր ամերիկյան բողոքական եկեղեցական մարմինների օժանդակությունը կրոնական հարցերում: Եվ վերջապես, եկեղեցու առաջնորդները՝ պատվելիները, որոնք ուսանել էին Արևմտյան Հայաստանում բացված ամերիկյան միսիոներական վարժարաններում ու դպրոցներում և լավ գիտեին անգլերեն, ամերիկացի հավատակիցների հետ համագործակցությամբ կարողանում էին մեծապես աջակցել իրենց հոտի ներկայացուցիչներին

հող ու անշարժ գույք վարձակալելու կամ գնելու, բանկային համակարգից օգտվելու գործերում, օգնում էին լուծելու զանազան խնդիրներ, որոնք կապված էին դատարանի, ոստիկանության, գաղթականության հարցերով զբաղվող գրասենյակների և տեղական այլ կառույցների հետ:

Ազգային մշակույթի հանդեպ ունեցած վերաբերմունքի հարցերում երկու եկեղեցիների դիրքորոշումները էապես տարբերվում էին: Հայ առաքելական եկեղեցին, մտահոգված լինելով ազգապահպանության խնդիրներով, իբրև կանոն դրսևորում էր ավանդապաշտ ու պահպանողական դիրքորոշում, ձգտում էր կանգուն մնալ օտար միջավայրում և չենթարկվել ազդեցությունների: Մինչդեռ ավետարանական եկեղեցին խնդիր ուներ ամերիկյան բողոքական եկեղեցիների համակարգում ինքնահաստատվելու և ինքնուրույն մաս կազմելու: Ներգաղթի առաջին տարիներին ավետարանականների զգալի մասը այն կարծիքին էր, որ իրենց եկեղեցին պետք է պահպանի հայկականությունը՝ հայ լեզուն ու մշակույթը, ունենա ազգային նկարագիր և գործելակերպ: «Մենք պետք է հիմնենք ոչ թե պարզապես եկեղեցի, այլ հայկական եկեղեցի»¹, - մի առիթով ասել էր պատվելի Անդրանիկ Պետիկյանը: Սակայն կային նաև այնպիսիք, որոնք գերադասում էին արագորեն հարմարվել ամերիկյան միջավայրին: Այդ կապակցությամբ հետևյալ կարծիքն էր արտահայտել Ֆաուլերի հայ ժողովական (ավետարանական) եկեղեցու երեց, պատվելի Հովհաննես Մանտիկյանը. «Հայկականության և ազգի հանդեպ սերը անմտություն է: Այժմ մենք այստեղ ենք, սա է մեր հայրենիքը, մեր հողը: Մեր երեխաները պետք է դաստիարակվեն իբրև ամերիկացի, այլ ոչ թե իբրև հայ»²:

Ի վերջո հատկապես Առաջին համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան միջավայրին ինտեգրվելու և «ամերիկացի» դառնալու ձգտումը ավետարանական հայերի շրջանում գերակշռող դարձավ. նրանք հեշտորեն յուրացնում էին տեղի մշակութային տարրերն ու բնորոշ հատկանիշները՝ ձևավորելով սոցիալ-հոգեբանական առանձին համայնք:

Առաքելական եկեղեցին քամահրում էր ավետարանականներին ազգային արժեքներից ու արմատներից հեռանալու համար, իսկ վերջիններս իրենց հերթին հանդիմանում էին առաքելական հայերին պահպանողականության համար: Դա մեծապես վնասում էր տեղի հայ համայնքների ներքին կյանքի ներդաշնակությանը: Հայտնի է, որ ազգային ինքնության ու նկարագրի պահպանման գործում բացառիկ է լեզվի դերը: Առաքելական եկեղեցին, հետևելով հայ եկեղեցու կանոնին, փորձում էր տեր կանգնել հայոց ազգային-մշակութային արժեքներ

¹ **Mirak R.** Torn between two lands: Armenians in America 1890 to World War I. Cambridge (Massachusetts), 1983, p. 199.

² Նույն տեղում, էջ 328:

րին՝ հատկապես լեզվին, ուստի ժամերգություններն ու պատարագը անցկացնում էր գրաբարով, իսկ քարոզները՝ աշխարհաբարով: Բայց դա պատճառ էր դառնում, որ որոշակի անջրպետ առաջանա երիտասարդության ու եկեղեցու միջև. երկրորդ սերնդի համար եկեղեցական նման արարողությունները դառնում էին անհասկանալի ու ձանձրալի: Եկեղեցին ջանում էր հնարավոր բոլոր միջոցներով երիտասարդության շրջանում սեր արթնացնել մայրենիի նկատմամբ, հատկապես որ երկրորդ սերնդի երիտասարդները, հաճախելով ամերիկյան դպրոցներ, առանձնապես նախանձախնդիր չէին նաև հայկական դպրոց հաճախելու հարցում: «...Հայաստանեայց եկեղեցույ գաւակաց վրայ կրկնակի պարտաւորութիւն կը ծանրանայ,- 1920-ականների կեսերին գրում էր «Ասպարեզ».- հայ լեզուն մշակելու եւ երկիրդաճութեամբ պահպանելու, նոյնիսկ երբ հարկ ըլլայ տեղական լեզուի օժանդակութեամբ մեր նախնեաց շարադրած եւ դարաւոր գործածութեամբ նուիրականացեալ երգերն ու աղօթքներն դիւրըմբռնելի կացուցանել»³:

Միննույն ժամանակ փորձեր էին արվում երիտասարդությանը ներգրավելու հայ կյանքի կազմակերպման գործին: Օրինակ՝ ստեղծվում էին երիտասարդական կազմակերպություններ, որոնք նպատակ ունեին սեր և հետաքրքրություն սերմանել մայր եկեղեցու, ազգային արժեքների հանդեպ: Նման կազմակերպություններից էր 1908 թ. Սուրբ Երրորդություն եկեղեցու հիմնած «Քրիստոնյա պատանիների միությունը», որը 1928-ին վերանվանվեց «Երիտասարդների լեգեոն»⁴: Համաձայն միություններ էին հիմնել նաև Լոս Անջելեսի, Սան Ֆրանցիսկոյի ու Օքլենդի հայ առաքելական եկեղեցիները⁵:

1910-30-ական թթ. երիտասարդական ու համայնքային ակտիվ գործունեություն էին ծավալում Ֆատուլերի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Հայ մարմնամարզական միությունը, Ֆատուլերի հայ երիտասարդաց ընկերությունը, «Լուսավորչական ակումբը»⁶, Սուրբ Երրորդություն եկեղեցու կիրակնօրյա դպրոցի «Հուլի Թրինիթի բեսքըթբուլ» բասկետբոլի խումբը, որ գրեթե մշտապես հաղթել է տեղական խմբերին, և «Կապույտ տղաք» թատերախումբը⁷: Երիտասարդական այս կազմակերպությունները հաճախ ներկայացումներ էին բեմադրում

³ «Ասպարեզ», Ֆրեզնո, 1926, թիւ 18, № 1191, էջ 1:

⁴ 1956 թվականին կազմակերպությունը պաշտոնապես ճանաչվել է, որից հետո վերջնականապես վերանվանվել է «Սուրբ Երրորդություն եկեղեցու երիտասարդական խմբակ» (Holy Trinity Youth Group). գործում է մինչ օրս և նպատակ ունի նպաստելու եկեղեցի այցելող երիտասարդության հոգևոր-մշակութային ու սոցիալական զարգացմանը, եկեղեցու նախաձեռնած միջոցառումների իրականացմանը (տե՛ս Youth Group //www.holytrinityfresno.org/index.php?option=com_content&task=view&id=36&Itemid=70):

⁵ Տե՛ս **Mahakian Ch.** History of the Armenians in California. a thesis. California, 1935, էջ 48:

⁶ Տե՛ս A Century of Worship: Generations of Christian Faith: St. Gregory the Illuminator Armenian Apostolic Church 1910-2010, Fowler, 2010, էջ 17:

⁷ Տե՛ս «Ասպարեզ», Ֆրեզնո, 1931, թիւ 22, № 1490, էջ 3, նաև՝ «Ասպարեզ», Ֆրեզնո, 1929, թիւ 20, № 1344, էջ 3:

հիմնականում հայ դասականների գործերի հիման վրա, կազմակերպում էին սպորտային խաղեր, սպորտային ճամբարներ, երբեմն էլ ներգրավվում էին եկեղեցու նախաձեռնած համայնքային տարբեր միջոցառումների կազմակերպման աշխատանքներում: Այս ամենը ձևավորում էր հայկականության մթնոլորտ. նույնիսկ պատահում էին դեպքեր, երբ կազմակերպությունների անդամ երիտասարդները ամուսնական գույգ էին դառնում:

Դիտելի է, որ Կալիֆոռնիայի անջատ թեմի ստեղծման առաջին իսկ օրերից (1928 թ.) թեմն իր հրատապ խնդիրներից մեկը համարեց տեղի հայ համայնքների ներքին պահանջներին (լեզու, սովորույթներ) համապատասխան եկեղեցականներ պատրաստելու գործը⁸, անգամ քննարկվում էր անգլերենը նույնպես եկեղեցու պաշտոնական լեզու դարձնելու հարցը⁹:

Հայ ավետարանական եկեղեցու վերաբերմունքը հայոց լեզվի նկատմամբ փոքր-ինչ այլ էր: Եկեղեցու հովիվների քարոզները հայերենով (երբեմն էլ թուրքերենով) էին հնչում ներգաղթի միայն առաջին տարիներին, քանի որ աստիճանաբար տեղական լեզուն փոխարինում էր մայրենիին, և այդ երևույթը փոխանցվում էր նաև ընտանեկան միջավայր: Վիլյամ Սարոյանի խոսքերով՝ հայ բողոքականները առանձնապես չէին ձգտում հեռու մնալ օտարացումից, իսկ առաքելականները ջանք չէին խնայում պահպանելու լեզուն և ինքնությունը: Մեծ գրողը պատմում էր, թե ինչպես Ֆրեզնոյի Առաջին հայ երիցական (ավետարանական) եկեղեցու կիրակնօրյա դպրոցում, ուր հաճախում էր նաև ինքը, ամեն բան անգլերեն էր՝ դասերը, հաղորդակցումը, մթնոլորտը: Միայն եկեղեցու պատվելի Քնաջյանի քարոզն էր հնչում հայերենով, սակայն հաճախ ձանձրանալով՝ դրանից խուսափում էին հայ մանուկներն ու պատանիները¹⁰: Նույնը կարելի է ասել նաև հայ ավետարանական եկեղեցիների երիտասարդական միությունների ու ակումբների մասին (Ֆրեզնոյի Առաջին հայ երիցական եկեղեցու «Պատանյաց վիճաբանական ակումբ», «Պատանյաց զվարթագին ակումբ», Ֆրեզնոյի Հայ պանդխտաց ժողովական եկեղեցու «Բարեկամաց վիճաբանական ակումբ», «Ամերիկահայ երիտասարդաց միություն» և երիտասարդաց բազմապիսի այլ միություններ), որոնց հավաքների, քննարկումների, հրապարակային ժողովների ժամանակ հայ երիտասարդությունը հաղորդակցվում էր հիմնականում անգլերենով: Բանն այն է, որ նման ակումբների և միությունների հիմնական նպատակը երիտասարդությանն իբրև ամերիկյան քաղաքացիներ դաստիարակելն էր, որպեսզի վերջիններս կարողանային արագ հարմարվել օտար միջավայրին ու

⁸ Տե՛ս «Փարոս», Ֆրեզնո, 1928, թիւ 2, № 4, էջ 76:

⁹ Տե՛ս **Mahakian Ch.**, նշվ. աշխ., էջ 45:

¹⁰ Տե՛ս **Kouymjian D.** William Saroyan. An Armenian Trilogy, Fresno, 1986, էջ 11:

անկաշկանդ ապրել, իսկ դա հնարավոր էր միայն անգլերենի ուսուցման միջոցով:

Այնուամենայնիվ, ավետարանական որոշ հայեր երբեմն նախանձախնդիր էին գործառնան այս կամ այն ոլորտում հայերենը պահպանելու հարցում: Այդ է վկայում Լուս Անջելեսի Գեթսեմանի հայ ժողովական եկեղեցու Փոքրիկների ընկերության օրինակը, որը մանկապատանեկան տարբեր միջոցառումների միջոցով օժանդակում էր մայրենիի պահպանմանը¹¹, ինչպես նաև ավետարանական հայալեզու պարբերականների գոյությունը: Շատ ուշագրավ է Կալիֆոռնիայի հայ քրիստոնեական ջանից ընկերությունների միության օրգան «Ջանասեր»-ի լեզվի վերաբերյալ Ամերիկայի թեմի առաջնորդի տեղապահ ընտրված Բաբգեն Կալ. Կյուլեսերյանի¹² գնահատանքի խոսքը. «Ջանացեք որ Ջանասերի հայերենը հարազատ հայերեն ըլլայ, գերծ- որչափ որ կարելի է անգլիերենի և թիրքերենի յատուկ ռճերէ և ասացուածներէ»¹³:

Ազգային կյանքի հենասյուներից մեկը դպրոցն է, որի դերը օտարության մեջ կարևորվում էր երիցս. այն ոչ միայն գիտակցվում էր որպես կրթական-ուսումնական կենտրոն, այլև ազգային կյանքը համախմբող, համայնքային հիմքերը ձևավորող յուրահատուկ կառույց: Եվ այս դեպքում դարձյալ կարևորվում էր եկեղեցու դերակատարությունը, քանի որ տասնամյակներ շարունակ ԱՄՆ-ում հայկական դպրոցները գործում էին եկեղեցիներին կից:

Խոսելով Կալիֆոռնիայի հայկական դպրոցների մասին՝ հարկ է հատուկ նշել, որ մինչև 1960-ական թթ. կեսերը այստեղ և առհասարակ Միացյալ Նահանգներում գործել են միայն մեկօրյա դպրոցներ (ԱՄՆ-ում հայկական առաջին ամենօրյա դպրոցը՝ Սրբոց նահատակաց Ֆերահյան ազգային վարժարանը, կառուցվել է 1964 թ. Լուս Անջելեսում): Այդուհանդերձ, գովելի է, որ Կալիֆոռնիայի հայ առաքելական եկեղեցիները ժամանակ առ ժամանակ դասերը կազմակերպում էին շաբաթվա մեջ երկու-երեք օր: Ավելին, 1918 թ. Սուրբ Երրորդություն եկեղեցու «Էջմիածին» պաշտոնաթերթի տվյալներով՝ նույն թվականին եկեղեցուն կից գործող դպրոցում դասերն անցկացվել են երկուշաբթիից հինգշաբթի 14:30-ից 17-ը¹⁴:

Ընդհանրապես հայկական մեկօրյա դպրոցները գործում էին ամերիկյան պետական դպրոցների դասերից հետո կամ շաբաթ օրերին. հետագա տարիներին ամերիկյան աշխատանքային օրերին անցկացվող դասերը նպատակահարմար եղավ կազմակերպել շաբաթ կամ կիրա-

¹¹ Տե՛ս «Կոչնակ», Նիւ Եորք, 1913, թիւ 13, № 9, էջ 223-224:

¹² 1914 թ. առողջական խնդիրների պատճառով Բաբգեն Կալիսկոպոսը Նյու Յորքից տեղափոխվել էր Կալիֆոռնիա, որտեղ և բնակվել է մինչև 1917 թ. տեղապահի պաշտոնը զբաղեցնելը:

¹³ «Ջանասեր», Ֆրեզնո, 1918, թիւ 3, № 13, էջ 29:

¹⁴ Տե՛ս «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, թիւ 1, № 3, էջ 8:

կի՝ հաշվի առնելով պետական դպրոցներից հետո աշակերտների կրկնակի ծանրաբեռնվածությունը և ծնողների զբաղվածությունը:

Կարևոր է այն, որ դրանք իրենց կարգավիճակով որևէ կերպ չէին փոխարինում պետական դպրոցներին (public schools). չէին տալիս հանրակրթական գիտելիքներ: Բացի դրանից՝ նյութական դժվարությունների պատճառով չէին գործում կանոնավոր, նույնիսկ լինում էին դեպքեր, երբ այս կամ այն դպրոցը տարիներով փակվում էր, ապա, հնարավորության դեպքում՝ կրկին վերաբացվում: Բանն այն է, որ այս դպրոցները անվճար էին՝ ի տարբերություն հետագայում ստեղծված հայկական ամենօրյա դպրոցների, և գոյատևում էին եկեղեցու հովանավորությամբ, աշակերտների խորհրդանշական անդամավճարներով (1-5 դոլար ուսումնական ամեն շրջանի համար), ինչպես նաև տարբեր նվիրատվություններով: Այնտեղ դասավանդում էին եկեղեցիների տեսուչները և հիմնականում տիկնանց միությունների անդամները: Մեկօրյա դպրոցների ուսուցիչները սովորաբար չնչին գումար էին ստանում իրենց աշխատանքի դիմաց, երբեմն էլ ընդհանրապես չէին վարձատրվում: Այլ կերպ ասած՝ մեկօրյա դպրոցները պարզապես լրացուցիչ միջոց էին պատանիների մեջ հնարավորինս ցանկություն ու ձգտում արթնացնելու ազգային-մշակութային արժեքների, ի մասնավորի մայրենի լեզվի հանդեպ:

Կալիֆոռնիայում հայկական առաջին մեկօրյա դպրոցները բացվեցին 1900-ական թթ. վերջերին նահանգի կենտրոնական շրջաններում՝ Ֆրեզնոյի, Եդեմի¹⁵ և Ֆաուլերի հայ առաքելական եկեղեցիների կողմից: Ֆրեզնոյաբնակ Թորոս Խնկյանի տվյալներով՝ 1910-ական թթ. հայկական մեկօրյա դպրոցներ են գործել նաև Ֆրեզնո քաղաքից ոչ հեռու գտնվող Քինգբրըգում, Փարլիբրում և Վաթոքեում¹⁶: Ի դեպ՝ հայ դպրոցի կազմակերպման գործում առանձին անհատներ նույնպես մեծ օժանդակություն էին ցուցաբերում: Այսպես, օրինակ՝ Վաթոքեի հայ դպրոցի սրահը 1912 թ. գնել էր Ասլանյանների ընտանիքը, և այնտեղ երկար տարիներ առանց վարձատրության դասավանդում էր Մաքրուհի Ասլանյանը: 1916-ին Վաթոքեի հայ համայնքը կառուցում է ավելի մեծ՝ «Մուրբ Մեսրոպ» անունը կրող սրահը, որտեղ էլ տեղափոխվում է դպրոցը: Հետաքրքիր է, որ այն եղել է նաև կրոնական կառույց՝ այցելու քահանաները հենց այստեղ են կատարել եկեղեցական արարողությունները. սրահը ծառայել է նաև տեղի ավետարանական հայերին¹⁷:

1920-30-ական թթ. մեկօրյա դպրոցներ են հիմնվում արդեն Բիդ-

¹⁵ Եդեմում գործող միակ պետական դպրոցը նույնպես տնօրինվում էր հայ հոգաբարձուների կողմից, քանի որ Եդեմի բնակչության մեծ մասը հայեր էին:

¹⁶ Տե՛ս **Թ. Պ. Խնկյան**, Պատմություն Քալիֆորնիոյ հայոց // Ասպարեզ, Ժողովածու տասնամեակի առթիւ (1908-1918), Ֆրեզնո, 1918, էջ 310:

¹⁷ Տե՛ս **Kooshian G. B., Jr.** The Armenian Immigrant Community of California: 1880-1935. adissertation. Los Angeles, 2002, էջ 114:

լիում (Ֆրեզնոյի շրջան) և Կալիֆոռնիայի հարավային ու հյուսիսային շրջաններում՝ Լոս Անջելես, Սան Ֆրանցիսկո, Օքլընդ քաղաքներում: Իսկ 1930-ական թթ. սկզբին Թուլերիի շրջանում, բացի Եդեմի հայ դպրոցից, ևս երկու դպրոցների գոյության մասին են վկայում «Ասպարեզը» և «Մշակը»: «Թուլարի գաւառին մէջ ունինք երեք Հայկական դպրոցներ, Եդեմ, Կոշըն եւ Թուլարի, որոնք ներկայիս կը հոգացուին Եկեղեցասեր Տիկնանց Միութեան եւ Հոգաբարձութեանց կողմէ: Եդեմի եւ Կոշընի դպրոցներուն ուսուցիչները քիչ թէ շատ կը վարձատրուին, սակայն Թուլարիի դպրոցը, որ դեռ տարի մըն է որ բացուած է, հոն կը պաշտօնավարէ Մարկուազ Պր. Կրպ. Արիստակէսեան», - գրում է «Մշակը»¹⁸: Հավանաբար խոսքը Եդեմի Սուրբ Աստվածածին եկեղեցու Տիկնանց միության և հոգաբարձության մասին է, որոնք, փաստորեն, դպրոցներ էին հիմնել նաև Թուլերի քաղաքում և Գոշն գյուղական ավանում:

Պետք է ասել, սակայն, որ հայկական մեկօրյա դպրոցներում աշակերտների թիվը այնքան էլ մեծ չէր: Մեր ուսումնասիրության համաձայն՝ ամենից հայտնի ու աշխույժ դպրոցներում անգամ, ինչպիսին օրինակ՝ Ֆրեզնոյի, Եդեմի, Ֆաուլերի դպրոցներն էին, աշակերտության թիվը երբեք չի անցել 200-ից. դպրոց էր հաճախում դպրոցահասակ հայ երեխաների աննշան մասը միայն: 1924-ին «Ասպարեզը» տազնապած կոչ էր անում. «...գաւակդ դպրոց դրկէ, որ քու դպրոցը, հայ դպրոցը չի գոցուի»¹⁹: Բացի այդ՝ կրթական ծրագրերի մշակման, ուսուցման որակի, մանկավարժական կազմի փորձառության և մի շարք այլ առումներով հայկական դպրոցները սկզբնական շրջանում միխթարական քիչ բան ունեին: Դրանցից համեմատաբար լավ վիճակում էր թերևս Ֆրեզնոյի Սուրբ Երրորդություն եկեղեցուն կից գործող դպրոցը: Այն ուներ 3 կարգ՝ 1) սկսնակների, որտեղ սովորեցնում էին այբուբեն, ընդ որում՝ գործը հեշտացնելու համար այն ուսուցանվել է ոչ թե դասական ձևով՝ Այբ, Բեն, Գիմ-ով..., այլ ըստ հնչյունների արտասանության, 2) միջին, որտեղ աշակերտները ուսանում էին ուղղագրություն, բառագիտություն, ընթերցանություն և գեղագրություն, և 3) բարձրագույն, որտեղ եղած դասընթացներին ավելանում էր նաև քերականությունը՝ Ռ. Չարդարյանի «Մեղրագէտ» դասագրքով²⁰: Սակայն եկեղեցու ներքնահարկում այս երեք կարգերը միաժամանակ պահելը լուրջ դժվարություն էր: Կալիֆոռնիայի հայ կրթական կյանքի խնդիրները հաճախ էին արժարձվում ժամանակի պարբերական մամուլում, և քննարկման առարկա էին դառնում դպրոց-եկեղեցի-կուսակցություն գործակցության

¹⁸ «Մշակ», Ֆրեզնո, 1932, թիւ 7, № 623, էջ 4, տե՛ս նաև՝ «Ասպարեզ», Ֆրեզնո, 1933, թիւ 23, № 1548, էջ 3:

¹⁹ «Ասպարեզ», Ֆրեզնո, 1924, թիւ 17, № 1115, էջ 2:

²⁰ Տե՛ս «Ասպարեզ», Ֆրեզնո, 1908, թիւ 1, № 2, էջ 3-4, նաև՝ «Ասպարեզ», Ֆրեզնո, 1931, թիւ 22, № 1487, էջ 1-2:

խնդիրները: 1920-ական թթ. վերջին «Ասպարեզը» ծավալուն մի հոդվածով անդրադարձել է Կալիֆոռնիայի հայկական դպրոցների վիճակին: Վերջիններս գործում էին առանց միասնական ծրագրի, չկար հատուկ որևէ կազմակերպություն կամ մարմին, որը մշակեր ընդհանուր կարգ և իրականացներ հետևողական ու նպատակային ուսուցում: Գործակցությունը չէր ստացվում եկեղեցական ու կուսակցական անհամաձայնությունների և խժոժությունների հետևանքով: Թերթը, օրինակ, հիշեցնում էր, որ Ֆրեզնոյի Հայ դպրոցը գործում էր բացառապես Ս. Երրորդություն եկեղեցու ջանքերով. տեղի ավետարանական երկու եկեղեցիները չէին մասնակցում այդ դպրոցը շենացնելու և նրա կրթական մակարդակը բարձրացնելու գործին²¹:

Ավետարանական եկեղեցին իր կրթական գործունեությունը իրականացնում էր կիրակնօրյա կոչվող դպրոցների և քրիստոնեական ջանից ընկերությունների միջոցով: Ընդհանրապես, կիրակնօրյա դպրոց կազմակերպելու ավանդույթը հայ ավետարանականները ընդօրինակել էին տեղացիներից: Ինչպես գրում է «Էջմիածինը», «Կիրակնօրեայ Դպրոցը, ամբողջ Ամերիկայի մեջ, ամենէն կարևոր կազմակերպություններէն մին է»²²: Սրանցում, սակայն, հիմնական շեշտը դրվում էր կրոնական դասերի, այսինքն՝ «Աստվածաշնչի» յուրացման վրա: Հայ առաքելական եկեղեցիները ևս ունեին կիրակնօրյա դպրոցներ, որտեղ աշակերտներին սովորեցնում էին եկեղեցու պատմություն, ազգային ու եկեղեցական երգեր:

Այսպիսով, Կալիֆոռնիայում հաստատված հայության ազգային և հոգևոր կյանքի ղեկավար դերը ստանձնեց հայ եկեղեցին, որի երկու հատվածները՝ առաքելական և ավետարանական, առավել կամ պակաս չափով կարևոր դեր կատարեցին հայ կյանքի կազմակերպման և ազգային ինքնության պահպանման գործում:

Բանալի բառեր – *Կալիֆոռնիա, Հայ առաքելական եկեղեցի, հայ ավետարանական եկեղեցի, կրթամշակութային գործունեություն, ազգային ինքնություն, ազգային մշակույթ, մեկօրյա դպրոցներ*

АСМИК ЕСАЯН – Культурно-образовательная деятельность армянских церквей в Калифорнии в 1900–1930-е гг. – В статье характеризуется культурно-образовательная деятельность национального характера, проводившаяся в Калифорнии в указанный период Армянской апостольской и Армянской евангелической церквями. Подчеркивается принципиальное различие между ними. Озабоченная сохранением нации, апостольская церковь, как правило, выказывала преданность старозаветным традициям и консерватизм, тогда как евангелическая церковь занимала другие позиции. В первый период иммиграции значительная

²¹ Տե՛ս «Ասպարեզ», Ֆրեզնո, 1929, թիւ 20, № 1373, էջ 2:

²² «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, թիւ 1, № 4, էջ 4:

часть её духовенства полагала, что церкви следует сохранить армянские черты, традиции и национальный характер, однако другая часть считала это неразумным и стремилась как можно скорей влиться в американскую среду. Соответственно наблюдалась очевидная разница во вкладе двух церквей в самоорганизацию армянской жизни и сохранение национальной самобытности.

Ключевые слова: *Калифорния, Армянская апостольская церковь, Армянская евангелическая церковь, образовательно-культурная деятельность, национальная идентичность, национальная культура, воскресные школы*

HASMİK YESAYAN – *Educational and Cultural Activities of Armenian Churches in California in 1900-1930s.* – This article is an attempt to give the general description of the educational and cultural activities of the Armenian Apostolic and Evangelical Churches in California in 1900-1930s. The differences between the attitudes of the two churches with respect to the national culture are being discussed in the article: the Armenian Apostolic Church being concerned about the preservation of national identity, as a rule, kept to traditions and had a conservative attitude, while the attitude of the Evangelical Church was not unequivocal. During the first years of immigration, the majority of them were of the opinion that the Evangelical Church had to preserve the Armenian national character whereas some of them thought that keeping to traditions was foolish and they sought to rapidly adapt to the American lifestyle. Accordingly, the mode of action of the two churches in connection with organizing and preserving the national identity was different.

Key words: *California, Armenian Apostolic Church, Armenian Evangelical Church, Educational-cultural activities, National identity, National culture, Sunday schools*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **ՀՐԱՉԻԿ ՄԻՐՉՈՅԱՆ** – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի պրոֆեսոր, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագիր
ГРАЧИК МИРЗОЯН – доктор философских наук, профессор кафедры истории философии ЕГУ, главный редактор журнала "Вестник Ереванского университета"
HRACHIK MIRZOYAN – Sc. D. in Philosophy, Professor of the Chair of History of Philosophy, YSU, Editor-in Chief of the Bulletin "Banber Yerevani Hamalsarani"
2. **ՍԵՐԳԵՅ ՍԱՅԱԴՈՎ** – պատմական գիտությունների թեկնածու, «Հայազգ» համահայկական կրթամշակութային հիմնադրամի ղեկավար, «Դոնի Նախիջևանի հայկական համայնքի» գործադիր տնօրեն
СЕРГЕЙ САЯДОВ – кандидат исторических наук, руководитель общепанармянского культурно-просветительского фонда "Хайазг", исполнительный директор РРОО "Нахичеванская-на-Дону армянская община"
SERGEY SAYADOV – PhD, Head of the Pan-Armenian Cultural-Enlightenment Foundation "Hayazg", Executive Director of "Nakhichevan-on-Don Armenian community"
Էլ. փոստ՝ ssayadov@hayazg.info
3. **ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԱՏԻԿՅԱՆ** – պատմական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի տուն-թանգարանի գիտաշխատող
ОГАНЕС ЗАТИКЯН – кандидат исторических наук, научный сотрудник дома-музея Х. Абовяна
HOVHANNES ZATIKYAN – PhD, Researcher of Kh. Abovyan's House Museum
4. **ԼԵՈՆԻԴ ԹԵԼՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
ЛЕОНИД ТЕЛЯН – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
LEONID TELYAN – PhD, Associate Professor of the Chair of Armenian Language, YSU
5. **ԲԱԳՐԱՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
БАГРАТ НЕРСЕСЯН – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
BAGRAT NERSISYAN – PhD, Associate Professor of the Chair of Armenian Language, YSU
6. **ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ
СУСАННА ГРИГОРЯН – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка ЕГУ
SUSANNA GRIGORYAN – PhD, Associate Professor of the Chair of Armenian Language History, YSU
7. **ՀԱՍՄԻԿ ԵՍԱՅԱՆ** – ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի հայցորդ
АСМИК ЕСАЯН – соискательница кафедры истории Армении ЕГУ
HASMIK YESAYAN – Dissertee of the Chair of Armenian History, YSU

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՆԴԵՍԻ 2015 Թ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

<i>Ավետիսյան Յուրի</i> – Խոսքի արտահայտչականություն. մեղմասություն և փոխարկում	1.67
<i>Գրիգորյան Սուսաննա</i> – Միջին հայերենյան բառակազմական կադա- պարներ արաբերենից փոխառյալ հիմքերով.....	3.64
<i>Եսայան Հասմիկ</i> – Կալիֆոռնիայի հայկական եկեղեցիների կրթամշա- կութային գործունեությունը 1900-1930-ական թթ.	3.74
<i>Ջատիկյան Հովհաննես</i> – Հայկական հարցը ԽՍՀՄ-ի գաղութացման հիտլերյան ծրագրի համատեքստում.....	3.29
<i>Ջաքարյան Սեյրան</i> – Տաթևի դպրոցի փիլիսոփայության գնահատութ- յան հարցի շուրջ.....	1.54
<i>Թեյյան Լենինիդ</i> – «Բացարձակ աներևութի» գնահատման շուրջ	3.43
<i>Հարությունյան Ռուզաննա</i> – Հայ-վրացական հարաբերություններն ըստ Մովսես Խորենացու.....	1.31
<i>Հովհաննիսյան Լուսինե</i> – Սեռական հոլովով գոյականական բառակա- պակցությունները Պ. Սևակի պոեզիայում.....	2.61
<i>Մանուչարյան Աշոտ</i> – Քուրդ Ա Վաչուտյանի երկու արձանագրության վերծանություն	2.41
<i>Միրզոյան Հրաչիկ</i> – Ավետիս Երևանցի. վաճառակա՞ն, թե՞ տպագրիչ	3.3
<i>Ներսիսյան Բագրատ</i> – Իվանե Շիլակաձեն արդի արևելահայերենի որոշ քերականական կարգերի մասին	3.55
<i>Մայադով Սերգեյ</i> – Արևելյան լեզուների Լագարյան ճեմարանը՝ Ռու- սաստանում հայագիտության կենտրոն (ռուս.).....	3.19
<i>Վարդանյան Նարինե</i> – Գևորգ Երզնկացին և «Կանոնագիրք հայոց» ժո- ղովածուն	2.50
<i>Տեր-Մարտիրոսով Ֆելիքս</i> – Շամիրամ և Արա Գեղեցիկ (ռուս.).....	1.17
<i>Փորձոհամանյի Փարիսա</i> – IX դարում Հայաստան ներմուծված խեցե- ղենը.....	1.39

Հայոց ցեղասպանություն-100

Դավիթալյան Տիգրան – Ադրբեջանի հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը 1988-1994 թթ. **1.3**

Հովհան Ռոտունեցու ծննդյան 700-ամյակը

Զաքարյան Սեյրան – Հովհան Ռոտունեցու ուսմունքը հոգու և մարմնի հարաբերակցության մասին **2.20**

Մինասյան Անուշ – Հովհան Ռոտունեցու կյանքն ու գործունեությունը **2.3**

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Ավետիսյան Լևոն – Ցեղասպանագիտությանը նվիրված գրքի շնորհանդես **1.77**

ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի ծննդյան 60-ամյակը **2.73**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

Հրաչիկ Միրզոյան – Ավետիս Երևանցի. վաճառական, թե՞ տպագրիչ 3
Грачик Мирзоян – Аветис Ереванци – купец или печатник?
Hrachik Mirzoyan – Avedis Yerevantsi, a Merchant or a Printer?

Սերգեյ Սայադով – Արևելյան լեզուների Լազարյան ձեմարանը՝ Ռուսաստանում հայագիտության կենտրոն (ռուս.) 19
Сергей Саядов – Лазаревский институт восточных языков – центр арменоведения в России
Sergey Sayadov – Lazarev Institute of Oriental Languages – Center for Armenian Studies in Russia (rus.)

Հովհաննես Չատիկյան – Հայկական հարցը ԽՍՀՄ-ի գաղութացման հիտլերյան ծրագրի համատեքստում 29
Оганес Затикян – Армянский вопрос в контексте гитлеровской программы колонизации СССР
Hovhannes Zatikyan – The Armenian Issue in the Context of Hitler’s Program of Colonization of the USSR

Լեոնիդ Թելյան – «Բացարձակ աներևույթի» գնահատման շուրջ..... 43
Леонид Телян – К интерпретации конструкции «личный глагол+инфинитив»
Leonid Telyan – On Various Interpretations of the Structure “Finite Verb+Infinitive”

Բագրատ Ներսիսյան – Իվանե Շիլակաձեն արդի արևելահայերենի որոշ քերականական կարգերի մասին 55
Багра́т Нерсися́н – Иванэ Шилакадзе о некоторых грамматических категориях современного восточноармянского языка
Bagrát Nersisyan – Ivane Shilakadze on Some Grammar Categories of the Modern Eastern Armenian Conjugation System

Սուսաննա Գրիգորյան – Միջին հայերենյան բառակազմական կաղապարներ արաբերենից փոխառյալ հիմքերով 64
Сусанна Григорян – Среднеармянские словообразовательные модели с заимствованными из арабского языка основами
Susanna Grigoryan – Middle Armenian Word Formation Patterns with Bases Borrowed from Arabic

Հասմիկ Եսայան – Կալիֆոռնիայի հայկական եկեղեցիների կրթամշակութային գործունեությունը 1900-1930-ական թթ. **74**

Асмик Есаян – Культурно-образовательная деятельность армянских церквей в Калифорнии в 1900–1930-е гг.

Hasmik Yesayan – Educational and Cultural Activities of Armenian Churches in California in 1900-1930 s.

Տեղեկություններ հեղինակների մասին..... **83**

Сведения об авторах

Information about the Authors

«Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն» հանդեսի 2015 թ. բովանդակությունը **84**

Содержание журнала "Вестник Ереванского университета: Арменоведение" за 2015 г.

The annual contents of the "Bulletin of Yerevan University: Armenian Studies" in 2015

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 01. 10. 2015:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: